2061

24
V-79

1929

2010

# ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻ և
ԱՌՁԵՌՆ ՇԱՐԱԿԱՆ ԿԻՒՐԱԿԷԻՑ
ՄԵԾ ՊԱՀՈՑ և ՏՕՆԱԿԱՆ ԱՒՈՒՐՑ

Ի ՊԷՏՍ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ

Դասաւորեց և Հրատարակեց

ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՄԽՃԵԱՆ

Նորընծայ Սրբոց Թարգմանչաց
Նորակառոյց Եկեղեցւոյն Մարսէյլի

1929

Տպարան Ա. ԵՐԷՑԵԱՆ
32, րիւ Լոնկ տէ քափիւսէն
ՄԱՐՍԷՅԼ

24
Մ-79

Père HAGOP MEKDJIAN
Marseille
ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՄԽՃԵԱՆ
ՄԱՐՍԷՅԼ

24387-Կ-Հ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ
ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ, ՆՈՅՆ ԵՒ ՅԱՒԻՏԵԱՆ

Ոսկետառ նշանաբան
ՀԱՅ ԾՆԻԼ, ՀԱՅ ԱՊՐԻԼ, ՀԱՅ ՄԵՌՆԻԼ.
Երիտասարդ ըլլալ՝ երգել, ծեր ըլլալ՝ աղօթել.



Ձօն
որդիական անմոռաց երախտագիտութեան
Գորովագութ հօրս՝ ՅԱԿՈԲի և
խանդակաթ մօրս՝ ԳԱՅԻԱՆԷի ՄԽՃԵԱՆ
Ծնողական խնկելի և անմահ յիշատակին
ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՄԽՃԵԱՆ (Գրիգոր Մխճեան)

ՀՍՍՌ-Арм ССР
3480-55

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայ ժողովրդի տարագրութեան դժոխային ծրագրի գործադրութիւնովն էր որ Հայորդին իր բոլոր սեփականութեանց հետ, միանգամ ընդ միշտ կորսնցուց նաև իր պաշտած Աստուծոյն փառքն ու պատիւը ներփողելու ծառայող՝ եկեղեցական Ս. գիրքերը։ Այնպէս որ զինադադարի վաղորդայնին, երբ ան սկսաւ լիաթոք շնչել ազատութեան կենսունակ շունչը, յանկարծ զգաց ակընյայտնի պակասը վերոյիշեալ Ս. գրոց և ի զուր փնտըռեց ու տակաւին կը փնտռէ զանոնք . . . :

Ուստի. նկատի ունենալով այս պարագան, մէկ կողմէն՝ Հայլու վեց ամիսէ ի վեր ընդգրկած հոգևոր պաշտօնիս ինծի ներշնչած ու թելադրած խղճի պարտականութիւնս կատարած ըլլալու փափաքով, միւս կողմանէ Հայ եկեղեցասէր հասարակութեան կրօնական նախանձախնդրութեան գոհացում տալու մարմաջով ձեռնարկեցի երկրորդ տպագրութեան 1915 թուականին Ատաբազարի մէջ հրատարակած «ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ . . . անուն գրքոյկիս, աւելի ճոխացեալ բովանդակութիւնով։

Այնպէս որ, սոյն համեստ ձեռնարկիս մէջ իբր ուղեցոյց ծառայեցուցած եմ երաժշտապետի քանա-

մեայ փորձառութիւնս, անով հոն ամփոփելով Ս. պատարագի արարողութենէն զատ, հայ հաւատացեալին անհրաժեշտ եղող բոլոր աղօթքներուն, շարականներուն առաւելապէս գործածականները միայն, որպէսզի զայն ի ձեռին Ս. եկեղեցի յաճախող ամէն ոք բաւարարութիւն գտնէ անով:

Ունենալով այն անխախտ յոյսը թէ՝ մեր սիրելի ժողովուրդը պիտի գիտնայ գնահատել իր օգուտը կանխատեսող՝ եկեղեցւոյ խոնարհ պաշտօնեային բարոյական ջանքերը, փութացի հրատարակել զայն:

Աստուած օրհնէ, պահէ և պահպանէ հայ ժողովուրդը, իր երանաշնորհ հայրապետներուն՝ Սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և անոնց հետեւորդներուն ձիրքերով և կարողութիւններով, օժտելով զայն կեանքի և յաջողութեան երկաթակուռ ազդակները եղող ՀԱՒԱՏՈՅ, ՅՈՒՍՈՅ և ՍԻՐՈՅ, ինչպէս նաև ԿԱՄՔԻ, ԱՇԽԱՏԱՆՔԻ և ԿՈՐՈՎԻ հոգե - բարոյական կարողութիւններով, որոնց միամաբար կիրարկումովն է որ ան պիտի կարենայ միշտ կանգուն պահել մեր Ս. եկեղեցին, վարժարանը, որոնցմով նաև մեր ազգին գոյութիւնը:

ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ ՄԽՃԵԱՆ

1929 Նոյեմբեր

Մարսէյլ

## ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

(Արեւմտեան կողմ դառնալով)

Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա, ի պատրանաց նորա, ի խորհրդոց նորա, ի գնացից նորա, ի չար կամաց նորա, ի չար հրեշտակաց նորա, ի չար պաշտօնէից նորա, ի չար կամարարաց նորա, և յամենայն չար զօրութենէ նորա՝ հրաժարելով հրաժարիմք. (երեք անգամ կրկնելէ յետոյ դառնալ արեւելեան կողմը) . . . խոստովանիմք և հաւատամք . . .

## ԶՂՋՈՒՄՆ

Մեղայ ամենասուրբ երրորդութեանն՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ և սրբուհւոյ Աստուածածնին, և առաջի քո հայր սուրբ, զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղայ Աստուծոյ: (Քհնյ. Աստուած թողութիւն շնորհեսցէ:)

Մեղայ հոգւով ,և զօրութեամբ սորա. մտօք և շարժմամբ սորա. մարմնով և զգայութեամբ սորա։ Մեղայ զօրութեամբ հոգւոյս. խորամանկութեամբ անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ, մեղայ Աստուծոյ։

Մեղայ չար խորհրդով մտացս, նենգութեամբ, ատելութեամբ, խեթիւ, ծախանօք, յաչաղանօք, թուլութեամբ, սոռնկական խորհրդով, արուական, իգական, անասնական, զրաստական, գազանական, ի գիշերի և ի տուընջեան, երազական պղծութեամբ, և անրջական գարշ աղտեղութեամբ, մեղայ Աստուծոյ։

Մեղայ ցանկութեամբ մարմնոյս, հեշտութեամբ պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս, և զազրագործութեամբ ի պէս պէս ախտս, հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ռնգացս, պագշոտութեամբ բերանոյս. անժուժկալութեամբ, շուայտութեամբ և արբեցութեամբ, մեղայ Աստուծոյ։

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս. ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շողոմութեամբ, քսու, պատարկաբանութեամբ, և ծաղու, զրախօսութեամբ, հերձախօսութեամբ և անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով, մեղայ Աստուծոյ։



Մեղայ գողութեամբ ձեռացս, ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով, և ընդ գարշս ածելով մեղայ Աստուծոյ։

Մեղայ ամենայն յօդուածովք շինուածոյս և ամենայն անդամօք մարմնոյս, հնգեակ զգայարանօքս, և վեցեկի շարժմամբս. վերամբարձ ոտնահարութեամբ և վայրաքարշ մեղկութեամբ. յաջ և յահեակ խոտորելով, առաջնոյն մեղանչելով, և վերջնոյն չար նշաւակ գոլով, մեղայ Աստուծոյ։

Այլ և մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք, հպարտութեամբ և մասամբք նորին, նախանձու և մասամբք նորին. բարկութեամբ և մասամբք նորին. ծուլութեամբ և մասամբք նորին. ագահութեամբ և մասամբք նորին. որկրամոլութեամբ և մասամբք նորին. բղջախոհութեամբ և մասամբք նորին. Մեղայ Աստուծոյ.

Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ. յանձնառելեացն և հրաժարելեացն. զի ոչ զյանձնառականն կատարեցի, և ոչ ի հրաժարելեացն հեռացայ: Զօրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ. ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ և գործովս անարժան գտայ. գիտելով զչարն՝ կամաւ կորացայ. և ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ. վա՜յ ինձ, վա՜յ ինձ. վա՜յ ինձ: Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ. անասելի են անօրէնութիւնք իմ. աններելի են ցաւք իմ. և անբժշկելի են վէրք իմ, մեղայ Աստուծոյ:

Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին որդին Աստուծոյ. զի իշխանութեամբդ՝ որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

## ԱՐՁԱԿՈՒՄՆ,

(Քհ.) Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց. խոստովանեցելոցն և մոռացելոցն: Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան, և հրամանաւն Աստուածային՝ թէ զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս, նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց. ի խորհրդոց՝ ի բանից՝ և ի գործոց. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Եւ դարձեալ տամ զքեզ ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ի բարեգործութիւն և ի փառս հանդերձեալ կենացն. ամէն: Օրհնեալ Տէր մեր . . .



## ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

որ կատարի ի մէջ գիշերի, ի դէմս Հօր Աստուծոյ

Օրհնեալ՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն:

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո: Տէր, եթէ զշրթունս իմ բա-

նաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։ Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ երրորդութիւնն, Հայր և Որդի և Հոգի սուրբ,այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

[illegible] 290

## ԵՐԳ Ս. ՆԵՐՍԷՍԻ

Յիշեսցուք ի գիշերի զանուն քո, Տէր։

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի,և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր Թագաւորին։

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ Տէր։

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթս քո, ի մէջ Նոր Երուսաղէմի։

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր։

Ի ձայն գոհութեան, ամենայն հոգիք, օրհնեսցէք զՏէր։

Փ. Զարթի՛ք, փառք իմ. զարթի՛ք և ես զարթեայց առաւօտուց, ալէլուիա։

Զարթի՛ք ընդ զուարթունս, ծանիցուք վերինն Սիօնի. ալէլուիա։

Զարթի՛ք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրըն



լուսոյ. ալէուլիա,

Զարթի՛ք փրկեալք արեամբ, և տուք զփառս փըրկողին. ալէլուիա։

Զարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէլուիա։

Զարթի՛ք, հարսունք հոգւով, սպասեալք զալոյ սուրբ փեսային. ալէլուիա։

Զարթի՛ք, վառեալք լուսով, ըստ իմաստուն սուրբ կուսանացն. ալէլուիա։

Զարթի՛ք, պատրաստեցէք լից լապտերաց զջերմ արտասուս. ալէլուիա։

Զարթի՛ք, և մի՛ ննջէք նման յիմար կուսից նիրհէք. ալէլուիա։

Զարթի՛ք, երկրպագցուք, և արտասուօք զայս ասասցուք. ալէլուիա։

Փ. Զարթի՛ր, ընդէ՛ր ննջես, Տէ՛ր, մի՛ մերժեր զմեզ իսպառ։

Արի՛, Տէր, օգնեա՛ մեզ, տացուք անուանդ քում զփառս։

Այժմ և յաւէտ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. ամէն։

Փ. Զարթուցեալքս, ի զբաղմանէ գիշերային հանգստենէ։

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր ի մխիթարութիւն և ի սփոփանս Եկեղեցւոյ:

Ահիւ և դողութեամբ կացցուք ի յաղօթս:

Եկեալ խոստովանեսցուք զյանցանս:

Եւ գտցուք ի Քրիստոսէ զքաւութիւն և զմեծ ողորմութիւն:

Յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Ամէն Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

---

## ԿՑՈՐԴ ՅԻՇԵՍՑՈՒՔ Ի
## Ի ՊԷՏՍ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՒՈՒՐՑ

Անքննելի և համագոյ երրորդութեանդ. համաձայնեալք ընդ զօրս երկնից. փառս մատուցանեմք:

Փառք քեզ: Որ յանարուեստ յաթոռ բարձրացեալ հանգչիս. սուրբ Աստուած Հզօր և սքանչելագործ:

Փառք քեզ: Որ յանէից գոյացուցեր զամենայն արարածս. սուրբ Աստուած, անճառ Հօր անեղ որդի:

Փառք քեզ: Որ անեղութեամբ խնամես զամենայն արարածս. սուրբ Աստուած, բղխումն անսպառ աղբեր:

Տէ՛ր: Ժողովրդականք եկեղեցւոյ ի քէն հայցեն



անկոյլ. Հովիւ բարի, ողորմեա բանաւոր հօտի:

Ամէն. ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Ամէն. ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

---

## ԵՐԳ Ա. ՆԵՐՍԷՍԻ
## Ի ՊԷՏՍ ԿԻՒՐԱԿԷԻՑ ԵՒ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՒՈՒՐՑ

Առաւօտ լուսոյ. արեգակն արդար. առ իս լոյս ծագեա: Բղխումն ի Հօրէ. բղխեա ի հոգւոյս. բան քեզ ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան. գանձիդ ծածկելոյ. գտող զիս արա: Դուռն ողորմութեան. դասանողիս բաց, դասեցո վերնոցն:

Երրեակ միութիւն, եղելոց խնամող, և ինձ ողորմեա: Զարթիր Տէր յօգնել զարթո զթմրեալս, զուարթնոց նմանիլ:

Էդ Հայր անսկիզբն, էակից Որդի, է միշտ Սուրբ Հոգի: Ընկալ զիս գթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց, թողութեանց տուող, թող ինձ զյանցանս: Ժողովող բարեաց, ժողովեա և զիս, ժողովս անդրանկաց:

Ի քէն Տէր հայցեմ, ի մարդասիրէդ, ինձ բժշկութիւն: Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող, խաւարիս շնորհեա, խորհուրդ լուսաւոր: Ծնունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ, ծագեա լոյս փառաց:

Կենարար փրկիչ, կեցո զմեռեալս, կանգնեա զգլորեալս: Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեցո սիրով:

Ձայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա: Ղամբարանք լուսոյ,,ղեկավար ճարտար ղօղեալս ամրացո:

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպել ի յերկինս: Միածին Հօր, մոյծ զիս յաւազան, մաքուր հարանեացդ:

Յորժամ գաս փառօք, յահագին աւուրն, յիշեա զիս Քրիստոս: Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս. Նորոգ զարդարեա:

Շնորհատու բարեաց. շնորհեա զքաւութիւն, շնորհեա զթողութիւն: Ուրախացո Տէր. ոգւոյս փրկութեամբ, որ վասն եմ ի սուգ:

Չար մշակողին. չար սերմանց նորին, չորացո

34805



զպտուղն: Պարգևիչ բարեաց, պարգևեա ինձ. պարտեացս թողութիւն:

Ջուր շնորհեա աչացս. ջերմ հեղուլ զարտօսր, ջնջել զյանցանս: Ռետինդ քաղցու. ռամ հոգւոյս արբո՛, ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա՛ սիրտ իմ քարեղէն: Վասն գթութեան. վասն ողորմութեան. վերստին կեցո:

Տենչալւոյդ տեսլեամբ, տուր ինձ յագենալ. Տէր Յիսուս Քրիստոս: Րաբունդ երկնաւոր, րոտեա զաշակերտս. րամից երկնայնոց:

Ցօղ արեան քո Տէր, ցօղեա ի հոգիս. ցնծացէ անձն իմ: Ւիւծեալըս մեղօք, ւիւծեալ աղաչեմ, ւիսել ինձ բարիս:

Փրկիչ բոլորից. փութա զիս փրկել, փորձութեանց մեղաց: Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս. քեզ երգել զփառս:

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ,

յիշեա Տէր և ողորմեա:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
Մյասնիկյանի / Мясникяна

## ԵՐԳ Ա. ՆԵՐՍԷՍԻ Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ

Աշխարհ ամենայն, առ ի նայելեաւ, ախտակից լերուք: Բանամ զշրթունս, բարբառիմ լեզուաւ, բողոքեմ զանձնէս, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Գող եղէ մեղաց. գտող կորստեան, զոր ինձ փորեցի: Դաւեցի զանձն իմ. դաւաճանեցի. դարան գործեցի. Տէր ողորմեա Եւն,.:

Երբեմն էի լոյս. և այժմ եմ խաւար. և առաւել մահու: Զի՞րդ պատմեցից, զթիւ մեղաց իմոց. զի բազում են յոյժ, Տէր ողորմեա, Եւն:

Երկինք և երկիր, եկա՛յք ողբացէք. եղկելի զանձն իմ: Ընտրեցի զչարն, ընկալայ կամաւ. զհոյլս մեղաց Տէր ողորմեա, Եւն:

Թաթաւիմ տղմով, թաւալիմ ի մեղս. թօթափիլ չկարեմ: Ժանտ ախտիւ լցեալ, ժահահոտ եղէ, ժամանակս բազումս. Տէր ողորմեա Եւն:

Ի բաց մեկնեցայ, ի սուրբ խորհրդոց. ի բարեաց գործոց: Լաւ վարկաւ անձն իմ. լուսոյն հեռանալ լինել ընդ խաւար. Տէր ողորմեա. Եւն:



Խորհուրդք չարին, խաբեն ըզհոգիս, խորտակ տանեն: Ծածկեն անդնդօք. ծխալին գլորմամբս. ծանակ զիս տանեն, Տէր ողորմեա. Եւն:

Կամաւ կորեայց, կորկամեալ անձամբս. կանգնիլ ոչ կարեմ: Հուր մեղաց կիզող, հրդեհեաց որ յիս, հոգւոր բարիս. Տէր ողորմեա. Եւն:

Զազրեցայ մեղօք. ձաղեցին տեսողք. ձանձրացաւ հոգիս: Դեղն դառնութեան. Դօղեալ ի սիրտ իմ. դամբար իմ շիջաւ. Տէր ողորմեա. Եւն:

Ճաշակմամբ մեղաց. ճաշեցի զմահ. ճոխս աղքատացայ: Մեռեալ եմ հոգւովս. մոլորեալ մտօքս. միայն կամ մարմնովս. Տէր ողորմեա. Եւն:

Յորդայթ մահու. յորսողին անկայ. յաղթեցայ յաղթից: Նետից թշնամւոյն. Նշաւակ եղէ. Նոր միշտ խոցոտիմ. Տէր ողորմեա, Եւն:

Շուրջ պատեալ զինև, շունք բազումք եղեն. շաղախին արեամբս: Որս եղէ չարին. ուռկանաւ մեղաց. որսացաւ զանձն իմ. Տէր ողորմեա. Եւն:

Չարաչար վշտօք. չարչարի անձն իմ. չունիմ դադարումն: Պարտական զտայ, պարտուց յանցանաց. պարտեալս ի մեղաց. Տէր ողորմեա. Եւն:

Ջանամ զզջանալ. ջեռանիմ դարձեալ. ջեռնում

Հրով մեղաց։ Ոտքերի կոչեցայ. ուխայ անուանիմ. ուամ-կական վարուքս. Տէր ողորմեա. Եւն։

Սիրով ցանկութեան. սաստիկ բարկութեան, սիրտ իմ խոցեալ է։ Վիրօք յանցանաց. վշտանայ հոգիս. վարանեալ շրջիմ. Տէր ողորմեա։

Տիրեցին ինձ չարք. տարագիր հանին. տիրական գրկացն։ Բաբունոյն բարուց. բախճական ձայնին. բո-տինս ոչ լըւայ. Տէր ողորմեա. Եւն։

Ցանկութիւն չարեաց. ցանկալի գինօք. ցաւեցոյց գաչս իմ։ Իւրաքանչիւրոց սիւսամբ խուռն ախտից. սիւծեալ է հոգիս. Տէր ողորմեա. Եւն։

Փութացիր անձն իմ, փախչել ի չարեաց. փափաքել բարեաց։ Քեզ միշտ մերձ ծանիր. քուն մահու եկեալ. քննող դատաւոր. Տէր ողորմեա. Եւն։

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ փրկեա Տէր և ողորմեա։

Բ. Հնյ. Զքեզ գոհանամք Եւն։



## ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽՔ ԿԱՐԳԱՒ ԸՍՏ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ

Ա՛. Դատեա Տէր զայնոսիկ, որք դատեն զիս, ալէլուիա։ Մարտիր ընդ այնոսիկ, որք մարտնչին ընդ իս. ալէլուիա։

Առ զզէն և վահան քո և արի՛ յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց. արգել զնոսա. և ասա զու ց անձն իմ թէ փրկութիւն քո ես եմ. ալէլուիա։

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք խնդրէին զանձն իմ, դարձցին յետս և ամաչեսցեն որք խորհէին ինձ չար։

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ, և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար և ի գայթակղութիւն, և հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա։

Ի նանիր թաքուցին ինձ որոգայթ յապականութեան իւրեանց. և ի նանիր նախատեցին զանձն իմ։

փ. Տէր՝ յերկինս է ողորմութիւն քո, ճշմարտութիւն քո մինչև յամպս, ալէ. ալէ. ։

Արդարութիւն քո որպէս լերինք Աստուած, իրաւունք քո որպէս խորք բազումք, զմարդիկ և զանասունս

կեցուցանես դու Տէր, ալէ.:

Որպէս զի բազում արարեր զողորմութիւն քո Աստուած, այլ որդիք մարդկան ի հովանի թեւոց քոց յուսասցին:

Արբեսցին նոքա ի պարարտութենէ տան քո, և զուղխս փափկութեան քո տացես ըմպել նոցա:

Ի քէն է Տէր աղբիւր կենաց, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս:

Ծագեա զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո ոյք ուղիղ են սրտիւք:

Մի՛ եկեսցեն ի վերայ մեր ոտք ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ:

Անդ անկցին ամենեքեան՝ ոյք գործեն զանօրէնութիւն. մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատել:

Փառք Հօր. Այժմ և միշտ. Ալէ. ալէ.:

Ալ. Ասաց անզգամն ի սրտի իւրում թէ՝ ո՛չ գոյ Աստուած, ալէլուիա: Ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց, և ո՛չ ոք է որ առնէ զքաղցրութիւն, ալէլուիա:



Աստուած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն որ խնդրիցէ զԱստուած. ալէ.:

Ամենեքեան խոտորեցան ի միասին, և անպիտանացան:

Ո՛չ ոք է որ առնէ զբարի, և չէ ոք մինչև ի մի:

Որպէս ո՛չ ծանիցեն ամենեքեան, ոյք գործեն զանօրէնութիւն:

Ոյք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի, և առ Աստուած ո՛չ կարդացին:

փ. Զի ոչ գոյր նոցա փրկանակ, և ո՛չ երկեան յԱստուծոյ, ալէ. ալէ.:

Զգեաց զձեռն իւր ի հատուցանել նոցա, և նոքա պղծեցին զօրէնս նորա:

Բաժանեցան ի սրտմտութենէ երեսաց նորա, և եհաս ի սիրտս նոցա:

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ, և ինքեանք որպէս սլաք:

Ընկեա ի տէր զհոգս քո և նա կերակրէ զքեզ, և ո՛չ տայ յաւիտեան սասանութիւն արդարոց:

Դու Աստուած իջուսցես զնոսա ի գուբ ապականութեան, արք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասարա-

կեսցեն զաւուրս իւրեանց, այլ ես ի քեզ Տէր յուսացայ:

Փառք Հօր. Այժմ և միշտ. ալէ. ալէ.:

Բճ. Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան, ալէլուիա: Յարդարութեամբ քում փրկեա և ապրեցո՛ զիս, ալէլուիա:

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո, և կեցո՛ զիս:

Լե՛ր ինձ Աստուած ապաւէն, և տեղի ամուր կեցուցանել զիս, զի հաստատութիւն իմ և ապաւէն իմ դու ես:

Աստուած իմ, փրկեա՛ զիս ի ձեռաց մեղաւորի, ի ձեռաց անօրինի և անիրաւի:

Դու ես համբերութիւն իմ Տէր, Տէր յոյս իմ ի մանկութենէ իմմէ:

Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն իմ, և առ ի քէն է օգնութիւն իմ յամենայն ժամ:

փ. Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի, և ամենայն ազգք ծառայեսցեն նմա, ալէ. ալէ.:

Զի փրկեաց զաղքատն ի ձեռաց հզօրի, զաղքատն և զտնանկն, որոյ ոչ է իւր օգնական:

Անխայեսցէ նա յաղքատն և ի տնանկն, և զանձինս



տնանկաց կեցուսցէ, ի վաշխից չարաց փրկեսցէ զանձինս նոցա:

Պատուական է անուն նորա առաջի նոցա, կեցցէ և տացի նմա յոսկւոյն արաբացւոց:

Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ, և զօրհանապազ օրհնեսցեն զնա:

Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր, և ի վերայ գլխոց լերանց:

Բարձրասցի քան զԼիբանան պտուղ նորա՝ և ծաղկեսցի ի քաղաքի Տեառն որպէս խոտ երկրի:

Եղիցի անուն տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարև է անուն նորա:

Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, և ամենայն ազինք երանիցեն նմա:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի՝ որ առնէ սքանչելիս միայն, և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան, լցցի փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի:

Փառք Հօր. Այժմ և միշտ. ալէ. ալէ.:

Եկ. Զողորմութիւնս քո, Տէ՛ր, յաւիտեան օրհնեցից. ալէլուիա: Ազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո բերանով իմով, ալէլուիա:

Ասացեր թէ՝ աշխարհս ողորմութեամբ շինեսցի, յերկինս պատրաստ եղիցի ճշմարտութիւն քո:

Եդի ուխտ ընտրելոց իմոց, երդուայ Դաւթի ծառայի իմոյ:

Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո, և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո:

Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց Տէր, և ճշմարտութիւն քո յեկեղեցիս սրբոց:

Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ, կամ ո՞վ նմանի-ցի Տեառն յորդիս Աստուծոյ:

փ. Դարձուցեր զօգնութիւն ի սրոյ նորա, և ո՛չ ըն-կալար զնա ի պատերազմի, ալէ. ալէ.:

Անարգեցեր զսրբութիւն նորա, և զաթոռ նորա յերկիր կործանեցեր:

Նուաղ արարեր զաւուրս ժամանակաց նորա, և հե-ղեր զնովաւ զամօթ:

Մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո իսպառ, բորբոքեսցի որպէս հուր բարկութիւն քո:

Իսկ արդ յիշեա՛, և տե՛ս թէ՝ ո՞վ է իմ հանգիստ,



միթէ ի զո՞ւր ինչ ստեղծեր զամենայն որդիս մարդկան:

Ո՞վ է մարդ որ կեցցէ, և ոչ տեսցէ զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ի ձեռաց դժոխոց:

Ո՞ւր են ողորմութիւնք քո, Տէ՛ր, առաջինք, զոր երդուար Դաւթի ճշմարտութեամբ քով:

Յիշեա՛ զնախատինս ծառայի քո, զոր ընկալայ ի ծոց իմ յազգաց բազմաց:

Զոր նախատեցին թշնամիք քո Տէր, նախատեցին փոխանակ օծելոյ քո:

Օրհնեալ Տէր Աստուած, յաւիտեանս յաւիտենից, եղիցի եղիցի:

Փառք Հօր, Այժմ և միշտ. ալէ. ալէ.:

Գձ. Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, ալէ-լուիա: Զի յաւիտեան է ողորմութիւն նորա, ալէ.:

Ո՞ խօսեսցի զզօրութիւնս Տեառն, լսելի արասցէ զամենայն օրհնութիւնս նորա:

Երանի՝ ոյք պահեն զիրաւունս, և առնեն զարդա-րութիւն յամենայն ժամ:

Յիշեա՛ զմեզ Տէր ըստ հաճոյս ժողովրդեան քո, և

ույց արա մեզ ի փրկութեան քում:

Տեսցուք մեզ զքաղցրութիւն ընտրելոց քոց, ուրախ եղիցուք մեք յուրախութիւն ազգի քո, և գովիցուք մեք ի ժառանգութեան քում:

Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինեցաք և յանցեաք:

փ. Մատնեաց զնոսա ի ձեռս հեթանոսաց, տիրեցին նոցա ատելիք իւրեանց, և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա, և խոնարհ եղեն ի ներքոյ ձեռաց նոցա, ալէ. ալէ.:

Բազում անգամ փրկեաց զնոսա, և նոքա դառնացուցին զնա ի խորհուրդս իւրեանց, և կորացան յանօրէնութեան իւրեանց:

Հայեցաւ Տէր ի նեղութիւնս նոցա. ի լսել ձայնի աղօթից նոցա:

Յիշեաց զուխտ իւր, և զղջացաւ ըստ բազում ողորմութեան իւրում, և ետ զնոսա ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա:

Փրկեա զմեզ Տէր Աստուած մեր, և ժողովեա զմեզ ե հեթանոսաց:

Խոստովան եղիցուք անուան քում սրբոյ, և պարծեսցուք յօրհնութիւնս քո:



Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, յաւիտեանս յաւիտենից:

Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն, եղիցի եղիցի:

Փառք Հօր. Այժմ և միշտ: Ալէ. ալէ.:

---

Գկ. Արարի իրաւունս և արդարութիւն, ալէլուիա. Մի՛ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց, ալէ.:

Ընկա՛լ զծառայս քո ի բարի, զի մի՛ ամբարտաւանք զրկեսցեն զիս:

Սպառեցին աչք իմ փրկութեան քում Տէր, և բանից արդարութեան քոյ:

Արա ընդ ծառայի քում Տէր ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո՛ ինձ:

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, և ծանեայց զվկայութիւնս քո:

Ժամ է պաշտել զՏէր. խափանեցին զօրէնս քո:

փ. Մերձեցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս, ալէ. ալէ.:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, և բանիւ քով փրկեա զիս:

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո, ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում Տէր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ, խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Փառք Հօր։ Այժմ և միշտ. ալէ. ալէ.։

---

Դ.Ձ. Օրհնեա անձն իմ զՏէր օրհնեցից զՏէր ի կեանս իմ, ալէ.։ Սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ մինչև եմ ես, ալէ.։

Մի՛ յուսայք յիշխանս յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա։



Ելցէ հոգի ի նոցանէ և դարձցին անդրէն ի հող, և յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա։

Երանի ազգի՝ որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա, և յոյս նորա ի Տէր Աստուած է։

Ո՛ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ ի նոսա։

Ո՛ պահէ զճշմարտութիւն յաւիտեան, և առնէ իրաւունս զրկելոց։

փ. Գովեա Երուսաղէմ զՏէր, ալէ.։

Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Ո՛ եդ զսահմանս քո ի խաղաղութիւն, պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։

Առաքէ զբան իւր յերկիր, վաղվաղ ընթանան պատգամք նորա։

Դնէ զձիւն որպէս զասր և զմէգ որպէս փոշի ցանեաց։

Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։

Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք։

Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւն և և զիրաւունս Իսրայէլի։

Ո՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, և զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց նոցա։

Փառք Հօր. այժմ և միշտ, ալէ. ալէ. :

Սիրեսցից զքեզ Տէր զօրութիւն իմ, ալէ. : Տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ, ալէ. :

Աստուած օգնական իմ, և ես յուսամ ի նա, ապաւէն իմ եղջիւր փրկութեան իմոյ՝ ընդունելի իմ է։

Օրհնելով կարդացից առ Տէր, և ի թշնամեաց իմոց ապրեցայց։

Շուրջ եղեն զինեւ երկունք մահու, և ուղխք անօրէնութեան խռովեցուցին զիս։

Վիշտք դժոխոց պաշարեցին զիս, և ժամանեցին ինձ որոգայթք մահու։

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի։

փ. Զգեցուցեր ինձ զօրութիւն ի պատերազմի, և զյարուցեալսն ի վերայ իմ ներքոյ իմ արարեր, ալէ. ալէ։



Զթշնամիս իմ հալածական արարեր. և զատելիս իմ սատակեցեր։

Աղաղակեցին և ո՛չ ոք էր որ փրկէր զնոսա, կարդացին առ Տէր և ո՛չ լուաւ նոցա։

Մանրեցից զնոսա որպէս փոշի առաջի հողմոյ, և որպէս կաւ գուեհաց կոխեցից զնոսա։

Փրկեսցէ զիս Տէր ի հակառակութենէ ժողովրդոց, և կացուսցէ զիս գլուխ հեթանոսաց։

Ժողովուրդ՝ զոր ո՛չ գիտէի, ծառայեաց ինձ, և ի լուր ականջաց լուաւ ինձ։

Որդիք օտարաց ստեցին ինձ, որդիք օտարաց մաշեցան և կաղացան ի շաւղաց իւրեանց։

Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած, և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ։

Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ, և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինեւ։

Փրկիչ իմ ի թշնամեաց իմոց բարկացողաց, յայնցանէ որք յարուցեալ են ի վերայ իմ բարձր արարեր զիս, և յառնէ անիրաւէ փրկեցեր զիս։

Վասն այսորիկ խոստովան եղէց քեզ ի հեթանոսս. և անուան քում սաղմոս ասացից։

Մեծ արարեր զփրկութիւն թագաւորի նորա, առ-

նել ողորմութիւն ընդ օծելոյ նորա Դաւթի. և ընդ զաւակի նորա ազգէ մինչև յազգ։

Փառք Հօր. այժմ և միշտ. Ալէ. Ալէ.

## ՁԿՆԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԻ

### Սաղմոսք ըստ ութ ձայնից

Ի տէրունի աւուրս եթէ ա՛ձ է, զայս ասա

Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում, կամ ո՞վ բընակեսցէ ի լեառն սուրբ քո։

Որ գնայ անբիծ, գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընդ ընկերի իւրում ոչ արար։

Նախատինս ի մերձաւորաց նա ո՛չ առնու, արհամարհեալ է առաջի նորա չարագործն։

Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ։

Զարծաթ իւր ի վարձու ոչ տայ. և կաշառս ի



վերայ անմեղաց ո՛չ առնու, որ զայս արասցէ՝ նա մի՛ սասանեսցի յաւիտեան։

### Սաղմոս ա՛ձ.

Տէ՛ր, մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեա՛ ինձ Տէր, զի հիւանդ եմ ես, բժշկեա՛ զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր մինչև յե՞րբ։

Դա՛րձ Տէր, և փրկեա զանձն իմ, կեցո՛ զիս Տէր ըստ ողորմութեան քում։

Զի ո՛չ ոք է որ ի մահու յիշէ զքեզ. կամ ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Վաստակեցայ ես ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։

Խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ, և մաշեցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ Տէր աղօթից

իմոց և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ, դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

---

Սաղմոս ակ.

Բարձր առնեմ զքեզ Տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։

Տէր Աստուած իմ, կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս, Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ, և փրկեցեր զիս յանցանէ՝ որք իջանեն ի գուբ։

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք նորա, և խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա։

Սրտմտութիւն է ի բարկութեան նորա, և կեանք են ի կամաց նորա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, առաւօտու եղիցի ուրախութիւն։

Ես ասացի ի բարեկենդանութեան իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան։

Տէր ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօրութիւն, դարձուցեր զերեսս քո յինէն՝ և ես եղէ խռովեալ։

Առ քեզ Տէր կարդացի, և առ Աստուած իմ աղա-



ղակեցի, զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն։

Միթէ հո՞ղ խոստովան առնիցի առ քեզ, կամ պատմեսցէ՞ զճշմարտութիւնս քո։

Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և Տէր եղեւ ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն. եհերձ յինէն զքուրձ, և ինձ զգեցոյց ուրախութիւն։

Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, և այլ մի՛ ևս զղջացայց, Տէր Աստուած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ ։

---

Սաղմոս բձ.

Աստուած, յանուն քում կեցո զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուա՛ծ, լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ի վերայ իմ, և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց։

Ահա Աստուած օգնական իմ, և տէր ընդունող

հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն ի թշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա։

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, եւ խոստովան եղէց անուան քում Տէր, զի բարի է։

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, և ի թշնամիս իմ ետես ակն իմ։

---

## Սաղմոս բկ.

Աստուած, ողորմեա՛ մեզ և օրհնեա զմեզ. երեւեցո՛ զերեսս քո ի մեզ, և ողորմեա մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգս ամենայն զփրկութիւնս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք, զի դու դատես զժողովուրդս ուղղութեամբ, և ազգաց երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած, գոհասցին զքէն ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ, Աստուած



Աստուած մեր։

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ և ի նմանէ երկիցեն ամենայն ծագք երկրի։

---

## Սաղմոս գձ.

Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, և դարձար ի բարկութենէ սրտմտութեան քո։

Դա՛րձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո՛ զսրտմտութիւնս քո ի մէնջ։

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տէր, և մի՛ ձգեր զբարկութիւն քո ազգէ մինչեւ յազգ։

Աստուած՝ դու դարձեալ կեցուսցես զմեզ, և ժողովուրդք քո ուրախ եղիցին ի քեզ։

Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։

Լուայց զինչ խօսի Տէր Աստուած մեր, խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր,

և առ այնոսիկ ոյք դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա, բնակել փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեցին. արդարութիւն և խաղաղութիւն համբուրեցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երևեցաւ։

Տէր տացէ զքաղցրութիւն, և երկիր մեր տացէ զպտուղ իւր, արդարութիւն առաջի նորա գնասցէ, դիցէ ի ճանապարհի զգնացս իւր։

---

Սաղմոս գկ.

Տէր, լուր աղօթից իմոց, աղաղակ իմ առ քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։

Ցաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկն քո, յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ։

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ, և ոսկերք իմ որպէս խռիւ չորացան։

Հարայ ես որպէս խոտ, և ցամաքեցաւ սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ՝ ի ձայնէ հեծութեան իմոյ։



Կցեցաւ ոսկր իմ ի մարմին իմ, նմանեցայ ես հաւալուսան անապատի։

Եղէ ես որպէս բու յաւերակի, տքնեցայ և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանապազ, և գովիչք իմ լինէին երդնուին։

Զմոխիր որպէս զհաց կերի, և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։

Ցերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ որպէս հովանի անցին, և ես որպէս խոտ ցամաքեցայ։

Դու Տէր, յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս ի վերայ սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

---

Սաղմոս ղձ.

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, և բանիւ քո

փրկեա՛ զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում Տէր. և օրէնք քո խօսք իմ են։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ, խնդրեա զծառայս քո զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ։

---

Ի տէրունի աւուրս եթէ ձայնն ղկ. է, ասա զայս

Դկ. Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր, Տէր, լուր ձայնի իմում։

Եղիցին ականջ քո ի լսել զձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս իմ քննես Տէր Տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո զի ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քո համբերի Տէր, համբեր անձն



իմ ի բանի քում, յուսացաւ անձն իմ ի Տէր։

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ ի Տէր։

Ի Տեառնէ է ողորմութիւն բազում, ի նմանէ է փրկութիւն, և նա փրկեաց զԻսրայէլ յամենայն նեղութեանց նոցա։

---

Սաղմոս ղկ.

Տէ՛ր լո՛ւր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալ յաւիտենից։

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանեցայց այնոցիկ, որք իջանեն ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո. զի ես ի քեզ Տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ, յոր և գնացից, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ, և կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։



Զկնի սաղմոսին աւետարան, և ապա երգ ըստ ձայնի

## ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Բկ. գկ. Աստուած անեղ, անժամանակ, Հայր անսկիզբն և անքանակ, որդւոյ պատճառ ծննդեամբ անճառ, Հոգւոյն բղխմամբ անքննաբար, աղաչեմք զքեզ գթած, երկայնամիտ և ողորմած, ողորմեա քո ստեղծուածոյս՝ յուսով ի քեզ ննջեցելոյս։

Բանդ որ ի ծոց Հօր միածին, և կերպարան սկզբնատպին, որով երկինք գոյացան, աշխարհ լի հաստատեցան, հայցեմք ի քէն Տէր և Փրկիչ ամենողորմ և կեցուցիչ, ողորմեա ևլն։։

Գերագոյն շնորհաց բաշխող երկնաւորաց և երկրայնոց, կեանք և կենաց տուող Հոգի, Հօր և Որդւոյ արարչակից. խնդրեմք ի քէն աղբիւր բարեաց արբուցանողդ ծարաւեաց, ողորմեա ևլն.։

Բձ. գձ. Ժողովեալքս ի հրաժարումն ծառայի քո յաշխարհէ, հայցեմք ի քէն արտասուելով և պաղատիմք զայս առելով, Ճանապարհ ընդ քեզ ելից ննջեցելոյս լեր ուղեկից, ի յօթևանս հօր քո լուսոյ զննջեցեալն մեր հանգո:

Ի փրկութեան մերոյ սկզբան մկրտեցար ի Յորդանան, զոր շնորհեցեր նոր աւազան ի մաքրութիւն մեղաց մարդկան, հայցմամբ կրկին կարապետին մեծին ի ծընունդս մկրտչին, ի յօթևանս եւն.:

Լուսաւոր ձայնիւ յերկնից զքեզ դաւանեաց հայր էակից, աղաւնակերպ հոգին իջեալ առ համագոյդ իւր հանգուցեալ, զմկրտեալս նովին հոգւով յորդեգրութիւն հօր հաւատով, ի յօթևանս եւն.:

---

Ակ. գկ. Ճանապարհ մոլորելոց և Ճառագայթ խաւարելոց, հրաւիրեցեր զորդիս լուսոյ ի յերկնային հարսանիս քո, ընդ զուարճալից անդ ժողովոց. արժանացո զսա դասուց, լի լապտերօք մոյծ յառագաստ ընդ իմաստուն սուրբ կուսանացն:

Մերով բնութեամբ զոր զգեցար ի փայտ խաչին բեւեռեցար. լուծանելով զմեզ ի մեղաց ի նախահօրն կա-



պանաց, լոյծ և զսա ի յանցանաց վասն քո սուրբ չարչարանաց, լի լապտերօք եւն.:

Յետ կամաւոր մահու խաչի եղար ի նոր գերեզմանի, երեքօրեայ թաղմամբ յերկրի նոր ստեղծեր զմեզ կենդանի, զիջեալս ընդ քեզ ի հող մահու վերակոչեա ձայնիւ փողոյ, լի լապտերօք եւն.:

---

Աձ. գձ. Ոահ գործեալ երկնաւորաց զան առաջի քո նախընթաց, զընտրեալս քո ժողովելով քեզ ընդ առաջ բերեն ամպով, ընդ աղաւնեաց օդապարից խառնեա զսա սուրբ երամից, դասաւորեա զսա վերնոցն երգել զփառս ընդ զուարթնոցն:

Սարսափին տարերք երկրի յորժամ փառօք գաս հայրենի, արեգական լոյս խաւարի լուսինն աստեղքն նուաղին, զսա յաւուրն աներեկի լուսաւորեա լուսով քոյին, դասաւորեա եւն.:

Վերնական զօրացն պետ փողէ բարբառ աւետաբեր, արիք մեռեալք որք յԱդամայ քանզի ահա եկն փեսայ, ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց կարգեա զսա ի թիւ սրբոց, դասաւորեա եւն.:

## ՅԱՏՈՒԿ ԵՐԳՔ (զկնի Ած անեղի) ըստ աւուր ձայնի

### Ծննդեան

Կուսածին մարդացեալ Աստուած իմ Յիսուս, յայնըմ աւուր ահեղ ատենին, զգինս արեան քո մի դատապարտեր. օգնեա և ինձ Քրիստոս այսօր յառաջին ճանապարհին. և ի միւսանգամ գալստեանն քո օգնեա ինձ։

### Տեառնընդառաջի

Ըստ օրինացն Մովսէսի ընծայեցար ի տաճարին, զի զբնութիւնս մարդկային ընծայեցես Հօր ի յերկինս, խնդրուածովք սուրբ ծերունւոյն ջեւ ի կապից արձակելոյն. ողորմած Տէր ողորմեա հոգւոյն մեր ննջեցելոց։

### Ծաղկազարդի և Համբարձման

Թագաւոր փառաց Քրիստոս որ ժամանեալ գաս ի յերկնից ի վերայ թեւոց հողմոց, քո հայրենի կերպարանօք. և առնես հրափորձութեամբ, զքննութիւն որդւոց մարդկան. ողորմած տէր . . .



### Յարութեան

Ուրախացան ազգք մարդկան յորժամ լուան զքո յարութիւնդ. նորափետուր զարդարեցան ի յարութեան սուրբ միածնիդ. ողորմած Տէր. . .

### Յարութեան

Ուրախութեամբ զօրք երկնային յերկնից յերկիր իջանէին. յորժամ յարեար ի մեռելոց լոյս ծագեցար արարածոց. սուրբ յարութեամբ քո կենարար յարո՛ զաս ի կեանս անմահ. ողորմած Տէր . . .

### Ծննդեան և Վերափոխման

Աստուածածին անարատ մայր Տեառն և կոյս սուրբ. բարեխօսեա առ Որդին քո միածին, զի փրկեսցէ զմեզ ի սպառնալեաց գեհենոյն. և պարգեւեսցէ մեզ զերկնից արքայութիւնն. և հանգուսցէ զհոգիս մեր ննջեցելոցն. օգնեա և ինձ Քրիստոս այսօր յառաջին ճանապարհին և ի միւսանգամ գալստեանն քո օգնեա ինձ։

Հոգեգալստեան

Թագաւոր թագաւորաց առատաբուղխ Հոգի շնորհաց. ժողովելոցն ի վերնատանն առաքելոցն երկոտասան, ի հրոյ լեզուս երեւեցար, յօղիս նոցա վերանստար. ողորմած Տէր . . .

Վարդավառի և Պահոց

Ի վերինն Երուսաղէմ ի բնակարանս հրեշտակաց, ուր Ենովք և Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ ի դրախտին եդեմական պայծառացեալ արժանապէս. ողորմած Տէր . . .

Հանգստեան և Աստուածածնայ

Զէակիցդ Հօր որդի փառաւորեմք անլռելի, որ իջեր յարգանդ կուսին, զԱդամային առեր մարմին. աղաչանօք Աստուածածնին անապական քում ծնողին. ողորմած Տէր . . .

Առաքելոց

Արարիչ և մարդասէր անոխակալ և բարեգութ որ գովլիսդ ի սրովբէից, տէր պատաւոր արդարութեան. ընդ



սրբոց առաքելոց, տէր պսակեա զմեր ննջեցեալսն. ողորմած տէր . . .

Մարգարէից

Յորժամ գրեալքն կատարին որ զայնմ աւուր մեզ պատմեցին. մարգարէից բանքն յարգին, առաքելոցն վճարին. ողորմած տէր. . .

Խաչի

Տըրտմահաղորդ չարչարանօք ի յանձն առեր ըղմահ խաչին, և փայտին բարձող եղեր վասն Ադամայ նախաստեղծին. ողորմած տէր. . . .

Խաչի

Զարհուրեցան զօրք երկնային յորժամ տեսին զտէրդ ի խաչին, արեգական լոյս քող արկեալ և լոյս լուսնին նըւաղեցաւ. յահեղ փառաց Աստուածորդւոյդ խաւար եղեւ ընդ տիեզերս. ողորմած Տէր . . .

Խաչի

Զահաւորեալ նըշան խաչին յարեւելից փայլեալ

ծաղին. հաւատացեալքն ի քեզ բերկրին և ուրացողքն կոծեցին. զերկրպագուս սրբոյ խաչին պայծառացո՛ լուսով նորին. ողորմած Տէր . . .

Հայրապետաց, Մարտիրոսաց, Կուսանաց

Աղաչանօք սրբոյ խաչին և անբարբառ բարեխօսին, և սրբոյ Աստուածածնին, և Յովհաննու Կարապետին. և սրբոյն Ստեփաննոսին և առաջին մարտիրոսին. և սրբոյ Լուսաւորչին, Հայաստանեայց Հայրապետին, և սրբոց առաքելոց. և համօրէն մարտիրոսաց. ողորմած Տէր . . .

Պաշտաման

Ահեղ խորհուրդ քահանային բազկատարած կայ ի բեմին առաջի սուրբ սեղանոյն. հուր շիջանի խաւար մերժի. տրտմեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի. ողորմած Տէր . . .



## ԵՐԳ Ս. ՆԵՐՍԷՍԻ Ի ՊԷՏՍ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԻՒՐԱԿԷԻՑ

Այսօր անճառ լուսոյն ծագումն ի փրկութեան մեր կատարումըն. խոնարհի ի վերնատունն ի յիսներական տօնից լրումն. Նախ քան զընթրիսն խորհրդոյ սփածաւ զենջակ արկողն լուսոյ. և ջուր առեալ ծառայաբար զոտըս լուանայր աշակերտացն:

Բանին հօր փառաց լուսոյ Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր. այնմ ձեռաց որոյ են գործք երկնից երկինք և երկրաւորք. որով կուրաց աչքք բացան. խուլք և համրք արձակեցան. որ վերածեաց զինքն ի ծովին, սաստեաց ալեացն և լռեցին:

Գլխոյն ընտրեալ հօտին փոքու սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ. որով դառնայր և հնազանդէր. զոտս և զգլուխս մաքրել մաղթէր. զլոյս՝ ասէ չէ ինչ պիտոյ լուացումն ջրոյ զի լուացեալ է. ոտիցըդ պէտք են մաքրութեան յօղել ի գլուխս սրբութեամբ:

Դասուց իւրոց աշակերտաց զոր նախ բանիւ վարդապետեաց, այսօր գործով ըղձայրագոյնն եցոյց զինքեան զխոնարհութիւն. ապաստուրեալ հոգեղինաց

այն՝ որ անտեսն է հրեղինաց. տարեալ պաշտօն իւր ծառայիցն. այն որ պաշտին ի սրովբէից։

Եթէ տէրս ասէ էիք և վարդապետըս բոլորից զա-շակերտացդ և զծառայից զոտըս լուացի ի հնոյ աղտից. միմեանց և դուք համբնութեամբ ցուցէք զնոյն խո-նարհութիւն, բարձրացելոյն ի կործանումն և անկելոյ բնութեանդ կանգնումն։

Զոր մաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօք զոտըս նոցին. և ուսուցեր խոնարհութեամբ յաղթող լինել չար հպարտին և զիմ լուա զտիղմըն մեղաց աղաչանօք. սրբոյ զոգին և զգնացս ուղղեա զոտին խոնարհու-թեամբ ելեւք յերկինս։

(Բանն անօրէնութեան եղին ի վերայ իմ. Տէ՛ր. Տէ՛ր, մի՛ թողուր զիս։)

Ելից զօրէնսըն Մովսիսի զոր խօսեցաւ ի Սինայի եկեր զզատն օրինակին և զբաղարջն ընդ եղէգին. ըզհինն ի նորս փոխելով զստուերն ի լոյս ճշմար-տելով. փոխան զառինն ինքըն գոլով գառն Աստուծոյ նուիրելով։

Ընդ բաղարջին հաց անխմոր եւ ըզմարմին իւր



զերկնաւոր. ըզկուսածինն անսերմնաւոր զանապականն և զհոգեւոր. ընդ ոչխարին արեան ուխտին եւ մեզ զարիւն իւր ուխտ կրկին. և եղեգան զառնազոհին փոխան ըզվարս աստուածային։

Թագաւորն արարածոց զհացըն կենաց եւ քաղ-ցելոց. և զբաժակն ուրախարար որք յԱդամայ տրտմե-ցելոց. այս նոր ուխտ է իմոյ արեան. փոխան հնոյ ուխ-տին արեան. զոր յիշատակ իմ առնիցէք մինչև եկից ես միւսանգամ։

Ժողովեալքս ի քէն հայցեմք ընդ ժողովեալ մե-տասանին. որ զկենարարըդ քո մարմին բաշխեալ եւուր ընդ բաժակին. շնորհեա և մեզ Տէր ընդ նոսին հաղորդ լինել քում սեղանին. կենաց հացիդ՝ յոր փափաքիմք և ըմպելւոյդ ում ծարաւիմք։

Ի յընտրելոց աշակերտացն Յուդաս մեկնեալ ի սուրբ դասանց. զբարձող մեղաց զգառն Աստուծոյ մատ-նէր ի մահ ընդ արծաթոյ. ի յընթրիսըն հոգևոր մերձի ժպիրհն և նենգաւորն, ուտելով ընդ վարդապետըն յա-ճախէ զխաբէութիւն։

Լոյսն խօսէր աղերսալի խաւարելոյն վասըն զարձի մի ումն ի ձէնջ ասէ, եղբարք, զիս մատնելոց է առ ի մահ. Պետրոս լուեալ զայն զարհուրէր, և ակնարկէր առ

Յովհաննէս հարցանէր թէ ո՞վ իցէ պատճառող վարդապետին:

(Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց Աստուած, և ի հալածչաց իմոց ապրեցո՛ զիս):

Խնամով սիրոյն չէր սիրելեացն ըղորմութիւնն փարատեալ. թացեալ պատառ տալ յուդայի նշաւակեալ զգողըն մատնիչ. զոր առեալ և ծերկուցեալ յապստամբայն հոգւոյն շնորհաց. մատնեցաւ նախանձարկն ընդ մատնութեան վարդապետին:

Ծայրագոյն լուսոյն զրկեալ խաւարատէրն արտաքս ելեալ. Տէրն յայտնէր լոյս եղելոյն ըղզայթակղին ի գիշերի. Պետրոս խօսէր խրախուսելի և կշտամբիւր հաւախօսի. զնւրն յաշխարհէ զփոխիլն առէր և ըղզալուստ Հոգւոյն պատմէր:

Կեդրոնեան յանկոյս ձորոյ ի վերնատունն եղ խորհրդոց. եմուտ պարտէզ ընդ պարտիզի եմոյծ զադամ յադին դրախտին. մուծցես և զմեզ Տէր ընդ նմին ուստի հաներ նախ զառաջինն. զի ժառանգել ըղհայրենին արժանացուք մեք վերստին:

Հոգայր ըղկերպըն որոտմաբար երկուքն եղեալ առանձնաբար. փրկել զաշխարհս հոգիս յօժար բայց է բնութիւն մարմնոյս տկար. ոչ ոմն ուժեղ և զօրաւոր և ոմն անզօր վտանգաւոր. այլ մի և նոյն զօլ միաւոր կրէր ըղկերպըն կամաւոր:



Զայնիւ մաղթէր աղօթական վասն իմ առ Հայր իւր էական. ծունըր դնէր խոնարհական որում կրկնի ծունր ամենայն. եթէ փրկել մարդկան հնար է առանց մահու իմ որ գրեալ է. բաժակ մահուս յինէն անցցէ ոչ իմ կամաւ այլ քոյդ եղիցէ:

Դօղեալ յերկիւղ քըրտանց հոսման արտնաձև կայլակ վիժման. ի զօրանալ հրեշտակ մերձեալ զօրինական զերըն լցեալ. զի կատարեալ էառ զբնութիւն Աստուածն բան ըղմարդկութիւն. պարտ էր զերկիւղ և զարտմութիւն ժխտումըն կրել անօրէնութիւն.

(Նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան. մեք ժողովուրդք և խաշն արօտի քո:)

Ճառագայթ փառաց էին որ ըստ բնութեանս մարդկային. տագնապեցար ի գիշերին աղօթեցեր առ Հայր

յերկրին. ծագեա ի մեզ զլոյսդ երկնային և փարատեա զերկիւղ չարին. մասունք Հոգւոյ մեր և մարմին յերկիւղ քո սուրբ բևեռեսցին:

Մերձեալ Յուդաս որ մատնելոց Հանդերձ դասուն փախուցեալ. անկան նման ստորանկելոցն որք յաւիտեան չեն կանգնելոց. Յուդաս նենգաւ Համբուրելով առիթ մա-Հու նշան տալով. փոխան սիրոյ զնա մատնելով չար ընդ բարւոյ վճարելով:

Յայնժամ առ գութ սիրոյն Պետրոս ըղծառային անուն Մաղքոս, եՀատ սուսերբ զականջն աջոյ որ ոչ լուաւ տեառըն իւրոյ. իսկ տէրն մեր արագապէս յուն-կըն մերձեալ բըժշկապէս. առողջացոյց աստուածապէս զոր ոչ տեսին կուրացն Հանդէս:

Նոր Հօտին փոքու ցըրուեալ քանզի զՀովիւըն քաջ Հարեալ. Պետրոս միայն ըղՀետ երթեալ ի յաղջկանէ վիմին շարժեալ. նշանակեալ Հաւըն խօսէր առ ի Պետ-րոս Տէրն ակնարկէր. զբանըն յիշէր դառն արտասուէր ի գլորմանէն դարձեալ կանգնէր:

Շնորհեալ վիմին եկեղեցւոյ զոր պաՀեցեր ի Հո-սելոյ. և կանգնեցեր ի գլորելոյ վասըն սրտին արտաս-ուելոյ. կանգնեա և զիս Տէր ընդ նմին ի գլորմանէ սայ-թաքողին. տալով աչացս յորդ արտասուս և ջուր նման



ծովու զկլոյս:

Ով կամաւ զանկապելին կապեալ ըղձեւս արձակո-ղին. ի յապարանըն տանէին Կայիափայ և Աննային. ծառայն զերեսն այն ապտակէր. յորմէ սրովբէն թեւա-սքօղէր. թուք արձակեալ պիղծ բերանովն յայն՝ որ կուրին լոյս ծագեաց թքովն:

(Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւորաւ. և բանիւ ատելութեան զիս պաշարեցին:)

Զոր կանխանաց մարգարէն լուծիչ որ կապեցար ընդ կապելոյն. զիս արձակեա յինքնակապէս մեղաց կապից զըժոխայնոյն. որ ընդ մեզ պարտաւորին կացեր ան-մեղդ ի յատենին. յորժամ փառօք գաս Հայրենին, մի՛ դատեսցես զիս ընդ նոսին:

Պատկառանօք Հինն Ադամայ որ ձաղեցար վասն նորա. ջնջեա զամօթ մեղաց լըբին. որով զերեսս իմ ծած-կեցին. որ ներեցեր չար ծառային ածել ձեռօք քեզ ապ-տակին. Հար ուժգնակի զդէմըս չարին. որպէս և զիս ե-Հար ուժգին:

ԶաՀըն լուսոյ յառաւօտին ի յուրբաթու Հընոյ

պատկին կայր առաջի պատուորին, ծառայն նըստէր ի յատենին. ի Հարցանել Պիղատոսի Տէրն ոչ տանէր պատասխանի. զի կանխատեաց գիրըն լցցի. եղէ ես մարդ որ ոչ խօսի:

Թամկական դաւք զինուորացն արկին Հանդերձ նախատանաց. այնմ որոյ զգեստն է լոյս փառաց իբրեւ զօթոց զինքեամբ արկած. ի ծունր իջեալ կատակէին. զգլուխն եղեգամբ Հարկանէին. պըսակ ի փշոց բոլորէին ըզփուշ մեղացն բարձողին:

Սոսկալին սերովբէից բառնայր ինքեամբ ըզփայտ խաչին. մինչ ի տեղի Գողգոթային յորում եղեալ մարդն առաջին. ետուն ըմպել գինի զմըռսեալ և կերակուր լեղեաւ խառնեալ. որով զպտղոյն դառըն ճաշակ փոխեաց մեզ քաղցր և ախորժակ:

Վերնականքն պարՀուրեալ. տեսին ըզՏէրն մերկացեալ և ըզՀանդերձն բաժանեալ պատմուճանին վիճակ արկեալ. ըզձեռս և զոտըն ծակեցին ըստ յայտնապէս Դաւթեան ձայնին. ընդ փայտ խաչին բեւեռեցին զմատունն որ գրեաց ի տախտակին:

( Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա: )



Տարածեալ ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց. փայտ ընդ փայտի դառըն պտղոյ կեանք ընդ մաՀու փոխարկելով. ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուողն օրինաց, զոր ոչ տեսին ազգն կուրաց բաց ի միոյն յաւազակաց:

Բողէից արեգական ըզտուին արար գիշերանման, զլուսաւորն քօղ արկ մերկութեան զի մի տեսցէ ակն անարժան, ի միջօրեայն նըսեմացաւ. յորժամ Ադամ մեղօք մեռաւ. ի յիններորդն ի լոյս դարձաւ յորժամ մաՀուամբ մաՀն լուծաւ:

Ցօղէր արտօսըր ցաւագին մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին յորժամ լսէր ըզծարաւին բարբառելոյ իւր միածնին. ետուն քացախ խառնեալ լեղի այնմ որ բղխեաց զետ յադենի. և ի վիմէն վտակ բարի արբոյց տոՀմին դառնացողի:

Խուծեալ յերրորդ ժամու օձին զմիտըս նախնւոյ մօրն Եւայի, ի վեցն անկեալ մարդն առաջին Հաւանական բանիւ նորին. 'ի նոյն ժամու Տէրն ի խաչին զի քաւեսցէ զմեղըս նոցին. և յորժամ Ել Ադամըն Հին եդ զաւազակն ի մէջ դրախտին:

Փարելի բարբառ ընդ իմ էլի էլի առ Հայր գոչէր. զՀոգին կամաւ Հօր աւանդէր, զՀոգիս մարդկան նոյն

ընծայէր. երկիր հիմամբք սասանեցաւ և վարագոյրն ընդ մէջ հերձաւ. վէմք ի յինքեանց պատառեցան և գերեզմանք մահու բացան:

Քարոզի ի սքանչելեացս Աստուած մարմնով վասն իմ խաչեալ, մերով բնութեամբս մեռանի Աստուած անմահ խոստովանի. կրկնավտակ կողին աղբերբք եկեղեցի իւր հաստատի. ջրովն մաքրի զարիւնն ըմպէ, զՈրդի ընդ Հօր փառաւորէ:

## ՍԱՂՄՈՍ ՉԿՆԻ ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌԻ

Ալէլուիա, ալէլուիա, խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք, զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ:

փ. Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան, ի նեղութենէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լո՛ւր աղօթից իմոց:

Որդիք մարդկան՝ մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն և խնդրէք զստութիւն:

Ծաներուք զի սքանչելիս արար տէր սրբոց իւրում. և տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:



Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք, զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք:

Մատուցէք պատարագս արդարութեան և յուսացարուք ի տէր:

Բազումք ասէին թէ՝ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն տեառն.

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք և զարթիցուք.

Զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ.

Սրկ. Ալէլուիա օրթի . . .

Քհ. ( Ընթեռնու զաւետարանն խաչելութեան և ապա երգէ ի պէտս մեծի պահոց՝ փոխան Ած. անեղի ) ( ըստ աւուր ձայնի):

Բկ. – Դկ. Նորոգող տիեզերաց որ զգեցուցեր մեզ լոյս փառաց. արկար ըզքև ի զինուորաց՝ քղամիդ կարմիր նախատանաց. մերկեա՛ յինէն զքուրձ մեղաց. զորդտմազինն արեամբ ներկած, և ըզգեցո՛ ըզուրախալին զպատ–

մուծնն իմ պատաջին:

Երկնաւոր թագաւորիդ ի ծունր իջեալ խաղ առնէին. ծածկեալ զգլուխդ կափէին և եղեգամբ հարկանէին. և զիմ անկեալ մինչ ի գետին, ի հնազանդել կամաց չարին. մի թողուցուս խաղալ ոսխին, այլ կանգնեսցես զիս վերստին:

Բամեալ բոլորըդ քո մարմին յետ վշտաց դատաւորին. սաստիկ էառ զհարուած գանին վասըն գանից Նախաստեղծին. զիս որ յոտից մինչև ցգլուխ ցաւօք նեղիմ անհընարին. առողջացո դարձեալ կըրկին որպէս շնորհօք յաւազանին:

Սըրբափայլ պըճնեալ զարդուն զոր զգեցուցեր Ահարոնին. փոխան ըստակ ի փշոց եղին մըշակք այգւոյն իսրայէլին. ըղխուշ մեղաց հանցես յինէն զոր յիս եհար իմ թշնամին. և ողջացո զխայթուած վիրին զի ոչք մեղայըն ջընջեսցեն:

---

(Յատուկ երգք զկնի Նորոգող տիեզերացի : . .
որ պատշաճի մեծի պահոց կիւրակէից ութ ձայնից)

ա. Տրտմահաղորդ չարչարանօք ի յանձն առեր ըզմահ խաչին. և փայտին բարձող եղեր, վասն Ադամայ Նախաստեղծին. ողորմած Տէր, ողորմեա . . .

---

Բ. Զարհուրեցան զօրք երկնային յորժամ տեսին զՏէրդ ի խաչին, արեգական լոյս քող արկեալ, և լոյս լուսնին նուաղեցաւ. յահեղ փառաց Աստուածորդւոյդ խաւար եղև ընդ տիեզերս. ողորմած. . .

---

Գ. Զահաւորեալ նշան խաչին յարևելից փայլեալ ծագին, հաւատացեալքն ի քեզ բերկրին, և ուրացողքըն կծծեցին. զերկրպագուս սըրբոյ խաչին, պայծառացո լուսով նորին. ողորմած . . .

---

Բձ. Գձ.

Եառն ըմպել քեզ զլեղին և զքացախն ի ծարաւին. արբեր կամաւ զի քաղցրացին ճաշակք պըտղոյն դառնագունին. զդառնութիւն թունաւորին զոր ի մասունս հոգւոյս արկին. հերքեա ի բաց հանդերձ սովին, և քաղցրացի սէր քո ի սմին:

Սուեղնեալ ծառոյ մահաբերին այնմ որ բուսաւ ի մէջ դրախտին. փոխան բարձեր զփայտ խաչին ի Գողգոթա հաներ տեղին. զիմ առ ի մեղս անկեալ

զողի և ծանրագոյն բարձող բեռին. բարձ ի յուսոյդ ըստ ոչխարին հա՛ն ի յերկինս յուխտեալ տեղին:

Ի յուրբաթու ժամ երրորդին բեւեռեցար տէր ի խաչին. լուծեր զկապանս նախաստեղծին և կապեցեր ըզթշնամին. զիս ամրացո ընդ հովանեաւ կենդանարար քո նշանին. և ի ծագեն յարեւելից լուսաւորեա լուսով նորին:

Երանեալ աւազակին բացեր ըզդուռն այգին դրախտին. ըստ հաւատոյ սրտի նորին կատարեցեր զխնդրելին. տո՛ւր և ինձ տէր ընդ նմին լսել զնոյն պատասխանին. այսօր ընդ իս իցես յայգին ի հայրենիս քո առաջին:

Տրտմահայրորդ չարչարանօք եւլն. ( տե՛ս էջ 51 ):

## Ակ - Գկ

Բարբառելով զէլի էլին հիմունք երկրի տատանէին. և վարագոյր հին օրինին վերուստ ի վայր պատառէին. արդ ընդ վիմացն որ շարժէին. շարժեա զանշարժ սիրտս ի բարին. ընդ պատառել վարագուրին. զիմ պատառեա զգիր պարտին:

Արեգական լոյս քող արկեալ խաւարանայր միջօ-



րէին. և զերեզմանըք բանային, մարմինք սրբոցն յառնէին. ընդ խաւարել լուսաւորացն մաքրեա յինէն զգործ խաւարին. ընդ մեռելոցն որք յառնէին կանգնեա զմեղօք մեռեալ հոգիս:

Նոր սիրոյ պատուիրանին գործով լըցող եղեր բանին. աղօթելով առ հայր յերկին թողուլ ըզմեղս որ ի խաչին. ինձ որ հոգւովս հաւատացեալ երկըրպագեմ՝ քեզ միածին. թող ըզլուծումն հրամանին մի՛ յիշեսցին մեղքն առաջին:

Սարսեցին սանդարամետք ի յաւանդել առ հայր զհոգին. որ ի դժոխս իջեր ներքին, ի բանտ մահու և խաւարին. կապեալ զիշխանն մահածին հաներ զհոգիսն որ ի բանտին. և զիս հանցես Տէր ընդ նոսին բանտէ մեղաց աղջամղջին:

Ձահաւորեալ եւլն տե՛ս էջ 65:

## Աձ - Գձ

Աղբերացն անապական որ յետ մահուն անմահաբար. բըղխեալ ի քէն վտակ կրկին ի նորոգումն կողածնին. բաց զբերան իմ յարբուցումն քո արեան կենարարին. լուա դարձեալ յաւազանին, ՚թէ ոչ շնորհօք

այլ արտասուօք:

Յանմահիդ մեռանելոյ զմեռեալ Հոգիս կենդանացո՛ թաղմամբ ի նոր գերեզմանի զթաղեալս ի մեղս վերածեա՛. ի գբի ներքնումն իջանելով ի գբոյն մեղաց վերաբերեա՛. ի ստուեր մահու քո բնակելով լուսաւորեա և զիս հոգւով:

Սիրտ իմ առ քեզ աղաղակէ բանդ որ ընդ Հօր ի սկզբանէ. որ կամաւոր վասն մարդկան, կրեցեր մարմնով զայս ամենայն. ինձ լսել արա զձայն յարքայութեանդ քո կոչման. ընդ ժողովոյն անդ անդրանկացն օրհնել զքեզ միշտ յաւիտեան:

Զարհուրեցան . . . տե՛ս էջ 65:

## ՔԱՐՈԶՔ ԸՍՏ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ

### Բկ. Դկ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Տէր ողորմեա:

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:



Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց զՏէր աղաչեսցուք:

Վասն քաւիչ և ներող լինելոյ Աստուծոյ ի վերայ մեղաց մերոց զՏէր աղաչեսցուք:

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր ըղկամայ և զակամայ զՏէր աղաչեսցուք:

Վասն զի մի՛ ընդ խոտանման գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն Հոգւոյն Հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ Հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք: Յիշեա Տէր և ողորմեա:

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և սուրբ Հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ: Տէր ողոր.: Տէր ողոր.: Տէր ողոր..

Ա՛. – Գ՛.

Վասն ի գիշերի և ի տուընջեան և յամենայն ժամու խօսիլ մեզ զբան Տեառն՝ զՏէր աղ.

Վասն չանկանելոյ մեզ ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել զՏէր աղ։

Վասն անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի. զՏէր աղ,

Վասն առաջնորդելոյ մեզ ի նաւահանգիստ կենաց անվախճանից, զՏէր . . .

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն և երկնից արքայութեանն, զՏէր . . .

Վասն Հոգւոյն։ Եւ Եւս միաբան։ Զանձինս։ Ողորմեաց մեզ։

Ա՛կ. – Գ՛կ.

Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան զՏէր աղ։

Վասն ցրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդս չարին զՏէր աղ։

Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս զՏէր աղ։



Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ զՏէր աղ։

Վասն խորտակելոյ զհակառակորդն փաղփաղակի ընդ ոտիւք մերովք զՏէր աղ։

Վասն Հոգւոյն։ Եւ Եւս միաբան։ Զանձինս։ Ողորմեաց մեզ . . .

Բ՛. Գ՛.

Վասն տանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն ի բարերար Տեառնէ մերմէ. զՏէր աղաչ . . .

Վասն փրկելոյ զմեզ ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի. զՏէր աղաչեսցուք։

Վասն ամենայն անձանց քրիստոնէից և տանց հաւատացելոց. զՏէր աղաչեսցուք։

Վասն որք ի լերինս, յայրս և ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր. զՏէր աղաչեսցուք։

Վասն որք աղօթիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց. զՏէր աղ։

Վասն Հոգւոյն։ Եւ Եւս միաբան։ Զանձինս։ Ողորմեաց . . .

## ԱԼԷԼՈՒՔ ԳԻՇԵՐԱՅԻՆՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ ԿԱՐԳԱՒ ԸՍՏ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ

Խրատ.— Գրքիս մէջ զետեղուած բոլոր ալէլուքները կարդալու համար, սկզբնաւորութեան ատեն հարկ է 3 անգամ ալէլուիա երգել, յետոյ Ա. և Բ. տուները երգելէ ետք, կրկին 3 ալէլուիա երգելով սկսիլ 3րդ և 4րդ տուներուն, և յետոյ աւելցնել փառք և երկրպագութիւնը։

---

Ալէլուիա Ճրագալոյցի Ս. Ծննդեան

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա

1.— Առաքեաց զբան իւր, և բժշկեաց զնոսա. և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց։ 2.— Խոստովան եղիցին Տեառն՝ ողորմութեանց նորա, և սքանչելեաց նորա որդիք մարդկան։

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա

3. Իջցէ որպէս զանձրև ի վերայ գեղման, որպէս ցօղ, զի ցօղէ յերկիր։ 4.— Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն. բազում խաղաղութիւն մինչև կատարեսցի լուսին։

Փառք և երկրպագութիւն Հօր և որդւոյ և Հոգւոյն



սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

## ԱԼԷԼՈՒՔ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ ՅԻՍՈՒՍԻ ԸՍՏ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ

Աձ. 1.— Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի։ 2.— Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս, և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։

Փ. 3.— Իջցէ որպէս զանձրև ի վերայ գեղման. որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։ 4.— Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն. բազում խաղաղութիւն. մինչև կատարեսցի լուսին։ Փառք և երկրպագութիւն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն. ալէ. ալէ. ալէ.

( Զկնի ամենայն տէրունական տօնի որ Աձ. լինի ) զԴասքն ասա )

Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ Քրիստոս ալէ-

լուիա. մարդկան ազգ սաղմոսեն քեզ ալէլուիա. ալէ. ալէ. ալէ.

---

Ակ. 1.- Լուր դուստր և տես. խոնարհեցո՛ ունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո. և զտուն հօր քո, զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո: 2.- Սա ինքն է տէր քո երկիրպագցես սմա. և դուստր ծուրայ երկիրպագցէ սմա. և պատարագօք զերեսս սորա պաշտեսցեն մեծամեծք ի ժողովրդոց:

Փ: 3.- Նա կարդասցէ առ իս Հայր իմ ես դու. Աստուած ընդունող փրկութեան իմոյ: 4.- Ես անդրանիկ արարից զնա. և բարձր քան զամենայն թագաւորս երկրի:

---

Բձ. 1.- Իջցէ որպէս . . . տե՛ս Աձ. ալէլուքի 3 և 4 տուները էջ 73:

Փ. 3.- Եցոյց տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր: 4.- Յիշեաց ողորմութեամբ իւրով զՅակոբ. ճշմարտութեամբ իւրով զտունն Իսրայէլի, և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

---



Բկ. 1- Նա կարդասցէ . . . տե՛ս Ակ ալէլուքի 3 և 4 տուները, էջ 74:

Փ- 3-Ընդ քեզ է ըսկիզբն աւուր զօրութեան. ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ ըզքեզ: 4- Երդուաւ տէր և ոչ եւս զղջասցի. թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. և տէր ընդ աջմէ քումմէ:

---

Գձ. 1- Եցոյց տէր . . . տե՛ս բձ ալէլուքի 3 և 4 տուները. տես էջ 74:

փ- 3- Յիշեա՛ տէր զԴաւիթ. և զամենայն հեզութիւն նորա: 4- Որպէս երդուաւ տեառն, և ուխտս եդ Աստուծոյ Յակոբայ:

---

Գկ. 1- Ընդ քեզ է. . . . տե՛ս բկ. ալէլուքի 3 և 4 տուները. տես վերը

Փ. 3- Տէր ասաց ցիս որդի իմ ես դու. և ես այսօր ծնայ զքեզ: 4- Խնդրեա՛ յինէն, և տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն. և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագըս երկրի:

---

Գձ. 1– Յիշեա՛ տէր զԴաւիթ. տես Գձ. ալէլուքի 3 և 4 տունները. էջ 75։

Փ. 3– Տէր հովուեսցէ զիս. տես Աձ. ալէլուքի 1 և 2 տունները. էջ 73։

---

Դկ. 1– Տէր ասաց ցիս. տե՛ս Դկ. ալէլուքի 3 և 4 տուները. էջ 75։

Փ. 3– Լուր դուստր. տես Ակ. ալէլուքի 1 և 2 տուները. էջ 74։

---

## ԱԼԷԼՈՒՔ Ի ՏՕՆԻ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԳԱԼՍՏԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ Ի ՏԱՃԱՐՆ

1– Օրհնեալ եկեալ յանուն տեառն. օրհնեալ որ գալոց ես։ 2– Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ։
Փ. 3– Տէր ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս յաթոռ իւրում։ 4– Աչք նորա ի տնանկս հային, արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան։

---



## ԱԼԷԼՈՒՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԷԻՑ

---

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա

Աձ. Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան։ Եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա։ Փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

---

Ակ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։ Տէր բարձրեալ և ահաւոր, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։

Հաճեցար Տէր ընդ երկիր քո. և դարձուցեր ըզգերութիւն Յակոբայ։ Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

---

Բձ. Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա։ Փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ։ Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

Բկ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։ Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանունն Տեառն։ Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան։

---

Գձ. Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ։ Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

Գովեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո Սիօն։ Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

---

Գկ. Օրհնեցէք մանկունք զՏէր և օրհնեցէք զանունն Տեառն։ Եղիցի անուն տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան։

Կենդանի է Տէր, և օրհնեալ է Աստուած և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ։ Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև.

---

Գձ: Գովեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱս-



տուած քո Սիօն։ Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։ Տէր բարձրեալ և ահաւոր, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։

---

Գկ. Կենդանի է Տէր և օրհնեալ է Աստուած և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ։ Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև։

Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։ Տէր բարձրեալ և ահաւոր, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։

## ԱԼԼԷԼՈՒԻՔ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Աձ. 1– Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ թագաւոր փառաց։ 2. Ո՞վ է սա թագաւոր փառաց տէր հզօր զօրութեամբ իւրով. տէր կարող ի պատերազմի։
Փ. 3– Կառք Աստուծոյ բիւրապատիկք, հազարք ուղղիչք. և տէր ի նոսա ի սինէ սրբութեան իւրոյ։ 4– Ել ի

բարձունս և գերեաց զգերութիւն, էառ աւար, բաշխեաց պարգևս, և ետ որդւոց մարդկան։

---

Ակ. 1– Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և տէր մեր ձայնիւ փողոյ։ 2– Սաղմոս ասացէք Աստուծոյ մերոյ. սաղմոս ասացէք թագաւորին մերոյ. սաղմոս ասացէք։
Փ. 3– Որ հովուեսդ Իսրայէլի՝ նայեաց, որ առաջնորդես որպէս խաշին Յովսեփու։ 4 Որ նստիս ի քրովբէս՝ յայտնեաց առաջի Եփրեմի, Բենիամինի և Մանասէի։

---

Բձ. 1– Կառք Աստուծոյ. տե՛ս Աձ. ալէլուքի 3 և 4 տուները. էջ 79։
Փ. 3– Ո դնէ յամպս զգնացս իւր, և շրջի նա ի վերայ թևոց հողմոց. 4– խոստովանութիւն և մեծվայելչութիւն զգեցար. արկեր զլոյս որպէս զօթոց. ձգեցեր զերկինս որպէս խորան, և արկեր ի վերայ ջուրց զվերնայարկն նորա։

---

Բկ. 1– Որ հովուեսդ. տե՛ս Ակ. ալէլուքի 3 և 4 տուները. տե՛ս այս էջին վերը։
Փ. 3– Մեծ եղև մինչև յերկինս ողորմութիւն քո, և մինչև յամպս ճշմարտութիւն քո։ 4– Բարձրեալ ես դու



յերկինս Աստուած, և յամենայն երկրի են փառք քո։

---

Գձ. 1– Ո դնէ յամպս. տե՛ս Բձ. ալէլուքի 3 և 4 տուները, էջ 80։
Փ. 3– Տէր, խոնարհեցո՛ զերկինս և էջ. մերձեա՛ ի լերինս և ծխեսցին։ 4. Փայլեա զփայլատակունս քո և խռովեա զնոսա. առաքեա՛ զնետս քո, և ցրուեա՛ զնոսա։

---

Գկ. 1– Մեծ եղև մինչև . . . տե՛ս Բկ ալէլուքի 3 և 4 տուները էջ 80։
Փ. 3– Խոնարհեցոյց զերկինս և էջ. և մէգ ի ներքոյ ոտից նորա։ 4– Ել ի քրովբէս և թռեաւ. սլացաւ նա ի թևս հողմոց։

---

Գձ. 1– Յերեսաց նորա եկեն հարուածք. և զհետ շաւղաց նորա երթիցեն մեծամեծք ի թռչնոց։ 2– Լերինք հալեսցին և անտառք վառեսցին. Ճանապարհք որ ի սկզբանէն էին կուրասցին. և ի նմանէ դողացի ամենայն երկիր։
Փ. 3– Համբարձէք իշխանք . . . տե՛ս Աձ ալէլուքի 1 և 2 տուները էջ 79։

---

Գկ. 1– Խոնարհեցոյց զերկինս . . . տես գկ ալէլուքի 3 և 4 տուները էջ 81։
Փ. 3– Համբարձաւ Աստուած . . . տե՛ս ակ ալէլուքի 1 և 2 տուները էջ 80։

## ԱԼԷԼՈՒԻՔ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Աձ. 1– Ցանկալի է նա քան զոսկի և քան զականս պատուականս բազումս. քաղցր է նա քան զմեղու խորիսխ։ 2– Քանզի ծառայ քո պահեսցէ զայս ի պահել նմա զհատուցումըն բազում։
Փ. 3– Թեւք աղաւնոյ արծաթապատ, և թիկնամէջ նորա ի դոյն ոսկւոյ։ 4– Ի գումարել երկնաւորին զթագաւորս ի վերայ նորա, ձիւնասցին ի սաղմոն։

Ակ. 1– Զսիրտ սուրբ հաստատեա՛ յիս Աստուած. և զհոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում։ 2– Մի՛ ընկեներ զիս յերեսաց քոց. և զհոգի քո սուրբ մի հաներ յինէն։
Փ. 3– Գտի զԴաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա։ 4– Ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ զօրացուսցէ զնա։



Բձ. 1– Թեւք աղաւնոյ . . . տես աձ ալէլուքի 3 և 4 տուները էջ 82։
Փ. 3– Առաքես զոգի քո և ստանաս զնոսա, և նորոգես զերեսս երկրի։ 4– Եղիցին փառք տեառն յաւիտեան և տէր ուրախ եղիցի յարարածս իւր։

Բկ. 1– Գտի զԴաւիթ . . . տե՛ս Ակ. ալէլուքի 3 և 4 տուները, էջ 82։
Փ. 3– Յայտնութիւն բանից քոց լուսաւոր է, և իմաստուն առնէ զտղայս։ 4– Զբերան իմ բացի և առի զհոգի. ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ։

Գձ. 1– Առաքես զոգի քո . . . տե՛ս բձ ալէլուքի 3 և 4 տուները էջ 83։
Փ 3– Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։ 4– Վասն անուան քո տէր կեցուսցես զիս արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Գկ. 1– Զբերան իմ բացի և առի զհոգի. ի պատուիրանս քո փափաքեաց անձն իմ։ 2– Նայեաց առ իս և ողորմեաց ինձ ըստ իրաւունս սիրողաց անուան քո։
Փ. 3– Ի սաստէ քումմէ տէր և ի շընչել հոգւոյ բար-

կութեան քո: 4- Առաքեաց ի բարձանց և ընկալաւ զիս, ընկալաւ զիս ի ջուրց բազմաց:

Դճ. 1- Որպէս իւղ զի իջանէ ի գլուխ և ի մօրուսն Ահարոնի, և ի մօրուսոյն իջանէ ի գրապանս զգեստու նորա: 2- Որպէս ցօղ զի ցօղէ ի Հերմոնէ ի վերայ լերին սիօնի:
Փ. 3- Ի վայրի դալարուջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս: 4- Դարձոյց զանձն իմ առ իս, և առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ:

Դկ 1- Ի սաստէ քումմէ եւլն տես Դկ ալէլուքի 3 եւ 4 տունները էջ 83:
Փ 3- Զսիրտ սուրբ եւլն տես Ակ ալէլուքի 1 եւ 2 տունները էջ 82:

## ԱԼԷԼՈՒՔ ԽԱԶԻ

Աճ. 1- Ցուպ քո և գաւազան, նոքա մխիթարեսցեն զիս: 2- Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիման նեղչաց իմոց:
Փ. 3- Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին



յերեսաց աղեղան: 4- Որպէս փրկեցան սիրելիք քո, կեցո աջով քո և լուր մեզ:

Ակ. 1- Նետք քո սրեալ են հզօր, և ժողովուրդք ի ներքոյ քո անկցին, ի սիրտս թշնամեաց թագաւորի: 2- Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան քո:
Փ. 3- Տո՛ւր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս զնշան բարութեան: 4- Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս:

Բճ. 1- Ետուր երկիւղածաց . . . տե՛ս աճ ալէլուքի 3 և 4 տունները, էջ 84:
Փ. 3- Դու պատրաստեցեր զուղղութիւն և զիրաւունս և զարդարութիւն Յակոբայ դու արարեր: 4- Բարձր արարէք զտէր Աստուած մեր, երկիրպագէք պատուանդանի ոտից նորա զի սուրբ է:

Բկ. 1- Տուր զօրութիւն եւլն տես Ակ. ալէլուքի 3 և 4 տունները, էջ 85:
Փ. 3- Ասաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց:

4- Գուսպան զօրութեան առաքեսցէ քեզ տէր ի սիօնէ, և տիրեսցես դու ի մէջ թշնամեաց քոց:

═══

Գճ. 1- Դու պատրաստեցեր եւն տես Բճ աչելուքի 3 և 4 տուները, էջ 85:

Փ. 3- Ցայտնեսցեն երկինք զկայելչութիւն փառաց նորա, և օրհնութեամբ նորա լցան տիեզերք: 4- Ճառագայթ որպէս ի լուսոյ հաստն ի նմանէ. և եղջեւրք ի ձեռին նորա գտան. և անդ հաստատեցաւ զօրութիւն փառաց նորա:

═══

Գկ. 1- Առաջ տէր ցտէր իմ, եւն, տես Բկ աչելուքի 3 եւ 4 տուները էջ 85:

Փ. 3- Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց: 4- Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ եւ ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

═══

Գճ 1- Ցայտնեսցեն երկինք եւն, տես Գճ աչելուքի 3 եւ 4 տուները էջ 86:

Փ 3- Ցուպ քո եւ գաւազան եւլն տես աճ աչելուքի 3 եւ 4 տուները էջ 84:

═══



Գկ 1- Նշանեցաւ առ մեզ լոյս եւլն տես Գկ աչելուքի 3 եւ 4 տուները էջ 86:

Փ 3- Նետք քո սրեալ են եւլն տես ակ աչելուքի 1 եւ 2 տուները էջ 85:

═══

## ԱԼԷԼՈՒԻՔ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Աճ. 1- Լսել ինձ զձայն օրհնութեան քո, և պատմել զամենայն սքանչելիս քո: 2- Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տան քո. և զտեղի յարկի փառաց քոց:

Փ. 3- Երանի զոր ընտրեցեր և ընկալար. և բնակեսցէն ի գաւիթս քո: 4- Լցցուք մեք ի բարութենէ տան քո. սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ:

───

Ակ. 1- Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ, ի քաղաք Աստուծոյ մերոյ ի լեառն սուրբ նորա: 2- Հաստարմատ ցնծութեամբ ցնծասցէ ամենայն երկիր. լերինք սիօնի՝ կողմանք հիւսիսոյ՝ ի քաղաք թագաւորին մեծի:

Փ. 3- Հիմունք նորա ի լեառն սուրբ նորա. սիրէ տէր զդրունս սիօնի առաւել քան զամենայն յարկսն Յակոբայ: 4- Փառաւորեալն խօսեցաւ ՝վասն քո. աՀաւադիկ քաղաքդ Աստուծոյ:

═══

Բձ. 1- Երանի զոր ընտրեցեր եւն տե՛ս Աձ ալէլուքի 3 և 4 տուները էջ 87:
Փ. 3- Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչեւ յազգ: 4- Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի. ժամանակ ·գթալոյ նորա հասեալ է ժամ:

═══

Բկ. 1- Հիմունք նորա եւն տե՛ս Ակ ալէլուքի 3 և 4 տուները էջ 87:
Փ. 3- Այսօր է զոր արար տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա: 4- Ի տեառնէ եղեւ այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց:

═══

Գձ. 1- Դու տէր յաւիտեան եւն տե՛ս բձ ալէլուքի 3 և 4 տուները էջ 88:
Փ. 3- Խոստովան եղէց քեզ տէր բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ: 4- Զի լուար զբանս բերանոյ իմոյ. երկրպագից ի տաճար սուրբ քո. և խոստովան եղէց անուան քում վասն ողորմութեան և ճշմարտութեան քո:

═══

Գկ. 1-Այսօր է զոր արար եւն տե՛ս բկ ալէլուքի 3 և 4 տուները էջ 88:



Փ. 3- Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի՛ քում. կամ ո՞վ բնակեսցի ի լեառն սուրբ քո: 4- Որ գնայ անբիծ, գործէ զարդարութիւն. և խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում:

═══

Դձ. 1- Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս, ի տուն տեառն երթիցուք մեք: 2- Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ:
Փ. 3- Լսել ինձ զձայն եւն տե՛ս աձ ալէլուքի 1 և 2 տուները. էջ 87:

═══

Դկ. 1- Տէ՛ր, ո՞վ կացցէ եւն տե՛ս գկ ալէլուքի 3 և 4 տուները էջ 88:
Փ. 3- Մեծ է տէր եւն ակ ալէլուքի 1 եւ 2 տուները էջ 87:

---

## ԱԼԷԼՈՒԻԱ Ի ՏՕՆԻ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ

1- Ո արար զհրեշտակս իւր յոգիս, և զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ. 2- Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան:

Փ. 3– Օրհնեցէք զտէր յերկինս, օրհնեցէք զնա ի բարձանց: 4– Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա:

Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ Քրիստոս ալէլուիա: Մարդկան ազգ սաղմոսեն քեզ ալէլուիա:

## ԿՑՈՐԴ

Թ. Երկինք և երկիր զուարճանան զքէն տէր. արարածք ամենայն քեզ երկրպագանեն. և հրեշտակք ի բարձունս աղաղակեն և ասեն. որպէս դու ստեղծեր, մի՛ կորուսաներ:

Սաղ. Երկինք երկնից, ջուրք որ ի վերոյ քան զերկինս օրհնեցէք զանունն տեառն: Զի նա ասաց և եղեն. հրամայեաց և հաստատեցան. և հրեշտակք ի բարձունս աղաղակեն և ասեն, սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց:

## ԱԼԷԼՈՒԻԱ ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

1– Բարձր առնեմ զքեզ տէր զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս: 2– Տէր Աստուած



իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. տէր հաներ ի դժոխոց զանձն իմ, փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ի գուբ:

Փ. 3– Էհան զիս ի գբոյ տառապանաց, ի կաւոյ և ի տղմոյ: 4– Հաստատեաց ի վերայ վիմի զոտս իմ և ուղղեաց զգնացս իմ:

## ԱԼԷԼՈՒԻԱ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ (Ողբաձայն)

1– Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ. մինչեւ յանկիւնս սեղանոյ: 2– Աստուած իմ ես դու, և խոստովան եղէց քեզ. Աստուած իմ ես դու, և բարձր արարից զքեզ:

Փ. 3– Լերինք ցնծասցեն առաջի տեառն, զի գայ և հասեալ է տէր ի դատել զերկիր: Դատէ զաշխարհս արդարութեամբ, և զժողովուրդս իւր ուղղութեամբ:

## ԱԼԷԼՈՒԻԲ ԱՒԱԳ ՇԱԲԱԹՈՒՆ

Բշ. 1– Զի նա ասաց և եղեն. հրամայեաց և հաստատեցան: 2– Կարգեաց զնոսա յաւիտեան, սահման ետ որոց ոչ անցանեն:

Փ. 3– Ի սկզբանէ տէր զհիմունս երկրի հաստատեցեր,

և գործք ձեռաց քոց երկինք են: 4. Նոքա կորնչին, և դու կաս և մնաս յաւիտեան:

Գշ: 1. Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ, ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ: 2. Լուր դուստր և տես. խոնարհեցո ղունկն քո, մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քո, զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո:

Փ. 3. Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա, և ընկերս նորա տարցին նմա: 4. Ածցին ցնծութեամբ և ուրախութեամբ, և տարցին ի տաճար թագաւորի, և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո:

Դշ. 1. Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առնել ինձ խաբէութիւն: 2. Այլ դու տէր ողորմեա ինձ, և կանգնեա զիս, եւ ես հատուցից նոցա:

Փ. 3. Խորհեցան և խօսեցան զչարութիւն, և զանիրաւութիւն ի բարձունս խորհեցան: 4. Եղին յերկինս զբերանս իւրեանց, և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ:

Եշ. 1. Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քո տէր: 2. Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց:



Փ. 3. Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիման նեղչաց իմոց: 4. Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Ուր. 1. Զարթեաւ աղեղն քո, զնետս կապարճից քոց արբուցեր, զգետս ցրուեցեր. զերկիր դողացուցեր ի սաստկութենէ անձրեւի, որ անցանեն ընդ սա: 2. Անդունդք աղաղակեցին մեծապէս, լոյս փայլման արեգականն արգելաւ, և ծագումն լուսնին դադարեցաւ:

Փ. 3. Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ: 4. Աղաղակեցի առ տէր զօրհանապազ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Ճբ. 1. Եդին զիս ի գբի ներքնումն, ի խաւարի և ի ստուերս մահու: 2. Ցիս հաստատեցաւ սրտմտութիւն քո, զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ:

Փ. 3. Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս ազատ: 4. Որպէս զվիրաւորս որք ննջեն ի գերեզմանի:

## ԱԼԷԼՈՒԻՔ ՎԱՐԴԱՎԱՌԻ

Կիր. 1– Քո են երկինք և քո է երկիր, զաշխարհ լրիւ իւրով դու հաստատեցեր: 2– Զհիւսիս և զհարաւ դու արարեր, Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն:
Փ. 3– Բարձրութիւնք լերանց նորա են, նորա է ծով և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին: 4– Եկայք երկիրպագցուք նմա, անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ:

Բշ. 1– Բարձրութիւնք լերանց նորա են. նորա է ծով և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին: 2–Մովսէս և Ահարոն երիցունք նորա. Սամուէլ ընդ այնոսիկ որք կարդան զանուն նորա:
Փ. 3– Լերինք ցնծասցեն առաջի տեառն. զի գայ և հասեալ է տէր ի դատել զերկիր: 4– Դատէ զաշխարհս արդարութեամբ և զժողովուրդս իւր ուղղութեամբ:

Գշ. 1– Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք երկրի, և



բարձրութիւնք լերանց նորա են: 2– Նորա է ծով և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին:
Փ. 3– Լերինք որպէս մոմ հալեսցին յերեսաց տեառն, յերեսաց տեառն ամենայն երկիր: 4– Պատմեցեն երկինք զարդարութիւն նորա, և տեսցեն ամենայն ժողովուրդք զփառս նորա:

## ԱԼԷԼՈՒԻՔ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱԽԱՍԱՐԿԱՒԱԳԻՆ

Այսօր դասք հրեշտակաց ուրախանան ընդ ճգնութիւն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային:

Քանզի գոչէ եկեղեցի քո Քրիստոս զյաղթանակ մարտ հեղման արեան սորա ի վերայ մեծի անուան քո Տէր:

Բազում համարձակութիւն է սորա առաջի Աստուծոյ ի ձեռն հեղման սուրբ արեան իւրոյ:

Քանզի յօժարութեամբ մատնեաց զանձն իւր չարաչար և դառըն տանջանաց վասըն մեծի անըւանըն տեառն:

Քանզի արհամարհելով անարգեաց զանցաւոր ըղ-

կեանս աշխարհիս, և փափաքեաց յաւիտենական կենացն, և միշտ և հանապազ ուրախանայ ընդ տեառն իւրոյ. յանըսպառ ուրախութիւնսն:

Փառք Հօրն էակցի, Որդւոյն միածնի, և աղատիչ սուրբ Հոգւոյն վայելէ:

Փառք պատիւ և իշխանութիւն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Եւ յորժամ շարժին երկինք և երկիր ի յահէ փառաց բանին Տեառն Աստուծոյ:

Յայնժամ նստուցանէ ընդ աջմէ իւրմէ ըզսիրելիս անուան իւրոյ ի լուսեղէն խորանսըն զուգաւորելով:

## ՔԱՐՈԶ Ձ՟ՆԻ ՄԵԾԱՑՈՒՍՑԷԻՆ

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք:

Վասն սուրբ տեղւոյս շինութեան, և բարեկարգութեան. զտէր աղա:

Վասն ժողովրդեանս՝ որք մտանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ. զտէր աղա:

Վասն ընդունելոյ զպաղատանս սոցա ըստ մեծի ողորմութեան իւրում, ըզտէր: Եւ եւս: Զանձինս մեր: Ողորմեաց:



## ԵՐԳ ԻՒՂԱԲԵՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան:

Օրհնեցէք, մանկունք զտէր, և օրհնեցէք զանուն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև ի յաւիտեան: Յարևելից մինչ ի մուտս արևու օրհնեալ է անուն Տեառն. ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան:

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ՝ Հոգւոյն, և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն, ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան:

Արի՛, Տէր, օգնեա մեզ. և փրկեա զմեզ, վասն անուան քո:

Արի՛ և մի մերժեր զմեզ իսպառ. վասն անուան քո:

Թագաւորեսցէ Տէր յաւիտեան, Աստուած քո Սիօն. ազգէ յազգ: Օրհնեա, անձն իմ զՏէր. օրհնեցից զՏէր ի կենդանութեան իմոյ:

Սրկ. Օրթի՛:

Քհնյ. Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:
Սրկ. Երկիրպագութեամբ լուարուք:
Քհնյ. Սրբոյ Աւետարանիս . . .
Դպ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր:
Սրկ. Պռօսխումէ՛:
Դպ. Ասէ Աստուած:

Դպ. Փառք յարութեան քո, տէր. ոչ դադարեցայց Քրիստոս, օրհնել զքեզ. զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Փառք յարութեան քո, Տէր. ոչ դադարեցայց Յիսուս, գովել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ես ոչ դադարեցայց, Փրկիչ, փառաւորել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր:

Աստ օրհնեցէք զամենայն ծառայք Տեառն զՏէր ի սրբութիւն, և օրհնեցէք զՏէր:

Լուսապայծառ հրեշտակն նստելով ի կենսատու



գերեզմանին: Եւ աւետէր կանանցն, յարեաւ Աստուած:

## ԵՐԳ ԱՂՕԻՀԱՅԻ ԿԻՒՐԱԿԷԻՑՆ

( Երկիցս կրկնեա՛ և զյետինն բարձր ասա )

Զամենայն աւուրս կենաց իմոց. ես ոչ դադարեցայց օրհնել զքեզ, Քրիստոս, փրկիչդ աշխարհի:

Զամենայն աւուրս: (կրկ. . .)

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր:

Աստ օրհնեցէք զամենայն ծառայք Տեառն, զՏէր ի սրբութիւն և օրհնեցէք զտէր:

## ՅԱՏՈՒԿ ԵՐԳՔ ՓՈԽԱՆ ԼՈՒՍԱՊԱՅԾԱՌԻ
## ԸՍՏ ՊԱՏՇԱՃԻ ԱՒՈՒՐՆ

Գալստեան.– Դասք լուսեղէն զուարթնոցն սպասէին մեծի գալստեանն Տեառն: Եւ երգէին երգ նոր, օրհնեալ է քո սուրբ գալուստդ:

Համբարձման.- Համբարձէք իշխանք, զդրունս ձեր ի վեր, եւ գայ մտանէ փառօք ի փառս։

Հոգեգալստեան.- Իջեալ Հոգին յառաքեալսն եւ հրաշինեաց զընտրեալսն անկեզ ի սուրբ վերնատունն։ Եւ հանդերձ նորօք յայգս մարդկան զանազան լեզուաց բաժանմամբ։

Վարդավառի.- Ցնծայ Թաբոր Հերմոնիւ. եւ առաքեալքն ի հայրական ձայնէն թմբրեալք։ Եւ կենդանեաց եւ մեռելոց տէր ծանուցին զքեզ Մովսէս եւ Հեղիաս։

Խաչի.- Այսօր եկեալ կամաւ Տէրն ի խաչ. եւ տարածեաց զբազուկս իւր ի նմա։

Ծննդեան.- Հովիւք հոգեղէնք ընդ հովիւսն քարոզէին ի յանբանից մըսուր զբանն բազմեալ։ Եւ մոգքն աստեղբ զուշակեալ մատուցին զընծայս խորհրդոյ։

Տեառնընդառաջի.- Բազմօրեայ տղայ եւ Տէրն օրինադիր անօրինաբար եկն ի տաճարն։ Եւ Սիմէոն



զգուշէր զկօքն. եւ յօրինաց կապից լուծումն հայցէր ի կեանս աւետարանի։

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՁԿՆԻ
## ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ

Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս օրհնեալ ես, Տէր Աստուած մեր, օրհնեմք զքեզ եւ գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ եւ երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ, գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր, սուրբդ երկնային, Աստուած եւ հայր ամենակալ։ Տէր եւ որդի հօր միածին, Յիսուս Քրիստոս եւ սուրբ որդի։ Տէր Աստուած, Գառն Աստուծոյ, եւ որդի հօր, որ առեր զմեղս ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի, եւ արդ ընկալ զաղաչանս մեր։ Սուրբդ որ նստիս ընդ աջմէ հօր, ողորմեաց մեզ։ Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս։ Տէր եւ հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ հօր. ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ. Տէր և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա, Տէր, զօրս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահել զմեզ։ Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. ամէն։ Օրհնեալ տէր ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (երիցս կրկնեա)։ Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ։ Ես ասացի, Տէր, ողորմեա ինձ և բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։ Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո և զփրկութիւնս քո տուր մեզ։ Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Տէր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։ Ի քէն է Տէր, աղբիւր կենդանութեան և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ Տէր։

Մաղթ. Փառք, պատիւ և երկրպագութիւն ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ։

Աձ. ակ. Զյարութիւն զփրկչին օրհնեսցուք, զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն։

Յարեաւ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա։



Բձ. բկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք։

Զյարուցեալն զՔրիստոս օրհնեսցուք, և զյարութիւն նորա փառաւորեսցուք։

Գձ. Գկ. Զյարութիւն զփրկչին օրհնեսցուք։

Որ եկն ի բարձունս և գերեաց զգերութիւն. էառ աւար, բաշխեաց պարգևս և ետ որդւոց մարդկան։

Գձ. Գկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք։

Որ համբերեաց խաչի և եդաւ ի նորափոր վիմի, և Աստուածային յարութեամբն զմահացեալսն վերաբերեաց ի կեանս։

## ԵՐԳ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք, զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն։

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ։

Հոգեգալստեան.– Զգալուստ Հոգւոյն օրհնեսցուք՝ զՀոգւոյն սրբոյ օրհնեսցուք զգալուստ։ Յեկեղեցիս բարեբանեցէք զԱստուած և զՏէր յաղբերացն Իսրայէլի։

Ծաղկազարդի.– Այսօր մտանէ թագաւորն մեր Քրիստոս ի յԵրուսաղէմ նոր քաղաք Դաւթի։

Ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք, և զԱստուածորդին փառաւորէին։

Վարդավառի.– Քո են երկինք և քո է երկիր զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր։

Զհիւսիս և զհարաւ դու արարեր, Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն։

Ծննդեան և Աւետման.– Իջցէ որպէս զանձրև ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցօղէ ցերկիր։

Աստուած զիրաւունս քո արքայի տուր, և զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի։

Խաչի.– Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

Որպէս փրկեսցին սիրելիք քո. կեցո աջով քով և լուր մեզ։

Յայտնութեան և Տեառնընդառաջի. Արեգակն արդարութեան այսօր յայտնեցար ազգի մարդկան, մարդ եղեալ սրբեցեր զջուրս, վերածնեալ զմեզ մկրտութեամբն սրբոյ Հոգւոյն։



Ի վայելչութիւն փառաց սրբութեան քո, ի յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ, մարդ եղեալ սրբեցեր զջուրս, վերածնեալ զմեզ մկրտութեամբն սրբոյ Հոգւոյն։

## ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ

(Ըստ պատշաճի աւուր)

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր. սուրբ և անմահ

Ծննդեան

Որ ծնար և յայտնեցար վասն մեր, ողոր, մեզ։

Գալստեանն Քրիստոսի

Որ եկիր և գալոց ես. ողորմեա մեզ։

Մատնութեան

Որ մատնեցար վասն մեր. ողոր. մեզ։

Թաղման

Որ թաղեցար վասն մեր. ողորմեա մեզ։

Յարութեան

Որ յարեար ի մեռելոց. ողոր. մեզ։

Համբարձման

Որ համբարձար փառօք առ Հայր. ող.մեզ

Հոգեգալստեան

Որ եկիր և հանգեար յառաքեալսն. ո.մեզ

Վարդավառի
Որ յայտնեցար ի Թաբօր լերինն. ող. մեզ.
Վերափոխման
Որ եկիր ի փոխումն մօր քո և կուսի. ո.մեզ
Խաչի
Որ խաչեցար վասն մեր. ողորմեա մեզ։
Ս. Պասկի
Որ մարմնացար վասն մեր. ողորմեա մեզ։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր. սուրբ և անմահ որ . . . վասն մեր, ողորմեա՛ մեզ։ ( Երիցս կրկնեա )

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի, մատո զաղաչանս մեր որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։

ՄԱՂԹ. Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

ՔԱՐՈԶ. Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչ.

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։ Եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա։



Քհյ, Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և։

## ԱՆԴԱՍՏԱՆ

Դպ. Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք.

Քհնյ. Տէր ողորմեա։

Դպ. Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց զտէր աղաչեսցուք։

Քհ. Տէր ողորմեա։

Դպ. Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Քհ. Տէր ողորմեա՛, տէր ողորմեա՛, տէր ողորմեա՛։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Դպ. Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

Քհ, Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի, արեւելեան կողմն աշխարհիս, և հայրապետութիւն և հանրապետութիւն Հայոց այս նշանաւ, սուրբ խաչիւս և սուրբ աւետարանաւս և յաւուրս շնորհիւ անուամբ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ,

այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Դպ. Ամէն, ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

(Արեւմտեան կողմը դառնալով)

Քհ. Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի, Արեւմտեան կողմն աշխարհս, և թագաւորութիւն քրիստոնէից. այս նշանաւ . . .

Դպ. Ամէն ալէլուիա . . :

(Հարաւակողմը դառնալով)

Քհ. Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի. Հարաւային կողմն աշխարհիս, երկիրս. անդաստանս և պտղաբերութիւն տարւոյս. այս նշանաւ . . .

Դպ. Ամէն ալէլուիա . .

(Հիւսիսակողմը դառնալով)

Քհ. Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի. Հիւսիսային կողմն աշխարհիս, վանքս, անապատս, քաղաքս և գիւղս և բնակեալ ժողովուրդս ի սմա. այս նշանաւ . . .

Դպ. Ամէն։

(Արեւելեան կողմը դառնալով)

Քհ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից



ամէն։

Սրկ. Սուրբ խաչիւս . . .

Քհ. Պահպանիչ և յոյս հաւատացելոց . . .

---

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան։

Օրհնեցէք մանկունք զտէր, և օրհնեցէք զանուն Տեառն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան։

Յարեւելից մինչև ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն։

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր, և յերկինս են փառք նորա։

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր ի բարձունս բնակեալ և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի։

Յարուցանէ զաղքատ յերկրէ եւ բարձր առնէ զտառապեալս յաղբերաց։

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ, որպէս մայր որդւովք բերկրեալ։

## ԵՐԳ ՁԿՆԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Նորաստեղծեալ բանն յանէից ի սկզբանէ զերկինս երկնից, և զերկնային զօրս անմարմնոց իմանալեացն զուարթնոց և զգալի տարերց քաոսից հակառակաց միաբանից, որով յաւէտ փառաբանի Երրորդութիւնն անճառելի։

Երեքսրբեան մի տէրութիւն, միով բնութեամբ աստուածութիւն. լոյս որ անեղ արարչական ասաց լինել լոյս եղական, զոր և ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին, որով յաւէտ փառա..

Րաբունօրէն բացատրեսցուք, զծածկեալ խորհուրդն ծանիցուք, զի լոյսն անտես իմանալի, մաքուր հոգւոց տեսանելի, ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեան սուրբ ճառագայթ, եկայք փրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն։

Սէրդ սիրով խոնարհեցար ի փրկութիւն մեր մարմնացար, նովին մարմնով խաչեցար, ի գերեզման մահու եղար, այսօր յարեար աստուածաբար, ի հրեշտակաց քարոզեցար, եկայք փրկ..

Երեւեցար խնկաբերից յողջոյն կենաց ուրախալից, և ի լերինն Գալիլեա առաքելոց մետասանից, արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրն վերջին, եկայք փրկ..



Սիոնի որդիք, զարթի՛ք, հարսին լուսոյ տուք աւետիք, եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ գայ պսակէ զքեզ փառօք. ել ընդ առաջ պճնեալ զարդուք, երգեա երգ նոր յարուցելոյն ննջեցելոց կենաց պտղոյն։

## ԵՐԳ Ս. ՆԵՐՍԷՍԻ ՎԱՍՆ ԵՐԿՐՈՐԴԻ ԱՒՈՒՐ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՍՆ ԵՐԿՆԱՅՆՈՑ ԶՕՐԱՑՆ

Բշ.— Արարչական բանիւն հրաման ի յերկրորդումն աւուր սկզբան, զջուրսն ի ջուրցն բաժանեաց, հաստատութեամբ պարունակեաց. որով զաշխարհս հողեղինաց անջրպետեաց ի հրեղինաց. ընդ նոսին որդիք լուսոյ տուք օրհնութիւն երրեակ լուսոյն։

Բազմաչեայ հոյլք քրովբէից երեքսրբեանըդ սրովբէից. աթոռք անեղ աստուածութեանըն համագոյ երրորդութեանն. բարեխօս լերուք առ Տէր վասն մա-

կանց եկեղեցւոյ. ընդ նոսին ողջք լու . . .

Գերագոյն իշխանութիւնք և անփոփոխ միշտ տէրութիւնք. անյաղթելի սուրբ զօրութիւնք ի յարարչին փառաւորութիւն, աղաչեցէք զՏէրն ողորմած անոխ չառնել զգործս ձեռաց. ընդ նոսին . . .

Դասք անմարմնոցն պետութեանց հրեշտակապետըք բարձրութեանց. հոգիք հրեղէնք և սպասաւորըք հրեշտակաց զինուորութիւնք. մաղթեցէք զՏէրըն Տէրանց վճարըն մարդկան երկրաւորաց. ընդ նոսին . . .

Երկնաւորաց դասուց վերնոց օրհնաբանից քոց զուարթնոց, քաղցրասցին առ քեզ գթած որ վասըն մեր ձայն մաղթանաց. զօրս և տացես մեզ պահապան յայսմհետէ մինչ ի վախճան. ընդ նոսին . . .

Զօրութեանց և տէրութեանց, իշխանութեանց և պետութեանց, և ամենայն անուանելոց, որ ի յերկինս պաղատանօք. ընկալ Քրիստոս ողորմութեամբ զմեզ յօր մահու և յարութեան, ընդ նոսին օրհնել հոգւով զքեզ ընդ Հօր փառաւորելով:

═══

Գշ. Նախկան բանն որ ընդ Հօր արարչակից և համագոր, յերրորդ աւուր զջուրսն զատոյց ըզբոյսս և



զտունկըս բղխեցոյց. իսկ ի յերրորդ զաւուրն դարձեալ զջուրսն հեղեղ ցամաքեցոյց. զՆոյ տապանաւն իւր ապրեցոյց. զկենդանեաց սեռս աճեցոյց. տուք օրհնութիւն անճառ լուսոյն Հօր և որդւոյ եւ սուրբ Հոգւոյն:

Ընդ ծառոց երկրի զգալեաց տընկեաց և զտունկս իմանալեաց. զհեղեղ մեղացըն ցածուցեալ զդասս արդարոց բազմացուցեալ. յորոց և մեզ ի ծնունդս կանանց միջնորդ շնորհաց եւ օրինաց, տուք օրհ . . .

Թագաւորին երկնից զինուոր արքայութեանն աւետաւոր, խնդրեմ զընել ես ի սրտի առ ի հովտէս տըրտմականէ, յուխտեալ տեղին տէրունական ի խոստացեալն որդւոց մարդկան. տուք օրհ . . .

Ժառանգին Հօր բազմաւոր և յարգանդէ երկըրպագող, Կարապետ և Մկրտիչ այնմ որ մեղաց մերոց քաւիչ, լեր բարեխօս առ նոյն գըթած, ջնջել զգիր մեր յանցանաց. տուք . . .

Ի Հօրէ լոյս ծագեցար մեռեալ բնութեանս կենդանարար. առաքեցեր յառաջընթաց սուրբ զՅովհաննէս քարոզ կենաց սորին հայցմամբն ամենակալ ըզպաղատանըս մեր ընկալ. տուք օրհ . . .

Լուսաշաւիղ յերկինս ելին հոգանիւթեայ սուրբ հրեշտակըն, արժանացո ըզմեզ նորին նեղ և անձուկ

Ճանապարհին զի հետեւող գոլով Նորին հօր քո վերին օթեւանին. և երգեսցուք ընդ երջանկացն որդւոց լուսոյ քեզ երգս փառաց։

---

Դշ. Խաւարն անգոյ և սկզբնածին հալածեցաւ յօրն առաջին. լոյսն այն պայծառ յոր չորրորդին յարեգական նիւթ հաւաքեալ. լուսինն ի տիպ լուսոյ ստեղծեալ և աստեղաց պարք յօրինեալ. որով օրհնի ստեղծողն էից ի բանաւոր պաշտօնէից։

Ծածկեալ խորհուրդն ծանուցաւ չորրորդ դարուն Իսահակաւ. ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն ետ զաւետիսն կուսական. թէ լոյսն որ ոչ բովանդակի, ի քեն մարմնով պարունակի. յոր օրհնեցայք ազգք երկրածինք տուք օրհնութիւն պտղոյ կուսին։

Կուսին նախնւոյ մօրն Եւայի, յորմէ Ադամըն հին պարտի. բարձան անէծքըն տըրտմական քո սուրբ ծննդեամբ կոյս Մարիամ. աղաչեա զքո միածինն թողուլ ըզմեղս որդւոց նոցին. յոր օրհ . . .

Հարսն ընծայեալ յերկրէ յերկինս, յոր համբառնամք առ քեզ զհոգիս, յօր լսելոյ քո զաւետիս խնդրեա լինել մեզ լսելիս. զձայն աւետեաց քո միածնին եթէ եկայք օրհնեալք հօր իմ. յոր օրհ . . .



Զայնիւ առ քեզ Տէր պաղատիմք և առաջի քո անկանիմք. աղաչանօք Աստուածածնին շիջո ի մէնջ ըզբոց հնոցին. տուր արտասուօք զմեղըս ջնջել և վերստին զմեզ նորոգել. յոր օրհ . . .

Ղեկավար Ճարտարապետ անցեր ընդ ծովս կենցաղս անհետ. վերաբերեա ընդ Պետրոսի զմեզ ի յալեաց մեղաց ծովէս. պաղատանօք գերագունին անապական քում ծընողին. յոր օրհ . . .

---

Եշ. Ճառագայթեալ բանն ի Հօրէ յոր հինգերորդըն հրամայէ, բղխել ի ջրոց սեռս կայտառաց և թեւաւորս օդականաց, իսկ ի դարուն հինգ մկրտին յամպն և ի ծովն Իսրայէլ հին. տացուք հրաշից ներգործողին պատիւ և փառս անեղ բանին։

Մաքրապէս օրինակի առաքելոցըն Քրիստոսի, որք ի ծովէն Տիբերական ի յերկնայինսըն կոչեցան. անցին ընդ ծով աշխարհական և ի հոգին մկրտեցան. տացուք հրաշից . . .

Ցուրախութիւնն անպատմական ի հարսանիսն անապական. զձեզ առաքեաց հայրըն փառաց հրաւիրատուք տըրտմականաց. սուրբ հարսանեացն այն հայցե-

ցէք ընդ ձեզ լինել մեզ պարակից. տացուք հրա . .

Նորոգողք ոլեղերայ ի նախահօրըն յանցանաց, Նորափետուր զարդարեցիք զեկեղեցիս հեթանոսաց, պաղատեցէք առ Նոյն գթած զմեզ նորոգել ի հնոյ մեղաց. տացուք հրա . . .

Ծնող էիցըս համայնից արարածոց ի յանգոյից, Նոյն շինեցեր զեկեղեցի վէմդ ի վերայ վիմին բանի. ընդ եղեալ Հիմունս ի Նոր Սիոն ըզմեզ յօդեա շին-ծամբ ի Նոյն. տացուք . . .

Ուրախացաւ գնացիւք գետոյ քաղաք ի քեն շի-նեալ Յիսուս. յորմէ վտակք շնորհաց հոսեն զոգիս մարդկան ոռոգանեն. արբո և զմեզ ի ջրոյն կենաց հայցմամբ հոգւոյն մաքրուակաց. զի բանաւոր երկի-րըս քո պըտղաբերի ի փառըս քո:

---

Ուր. Զըհանդուրժեալ բնութեամբ բարւոյն ու-նել միայն զանճառ բարին. այլ ստեղծեալ մարդ յիւր պատկերին ի վեցերորդն առաւօտին և ի յերրորդ ժամ զկողածինն ի յօգնութիւն ետ հողածնին. զոր ի դրախտին եդ վայելել բայց ի պտղոյն մահու արգել:

Պայմանձեալ առ դատողին յետ յանցանացն Ա-



դամըն հին. զկինըն պատճառ եղեալ խաբմանն և կի-նըն զօձըն զաւաճան. որով երկիրս այս անիծաւ փուշ և տատասկ ի սմա բուսաւ. վճիռ մահու մարդոյն տըւաւ դառնալ ի հող ուստի ստեղծաւ:

Ջնջել փութայր հայրըն փառաց ըզգիր պարտ-եաց մեր յանցանաց. որով զգեցաւ որդին գթած ի վեց դարուն զմարմին մեղաց. հօր հաճութեամբ ի մահ խաչին եկըն կամաւ ի յուրբաթին զառըն զենաւ ի հին զատկին փոխան զառանցն օրինակին:

Ոտահիւ լուսոյ պատուիրանին արդարութեան ճա-նապարհին. բարձրանալով քո ի խաչին բարձրացու-ցեր զմեզ ի յերկին. քո անպատում խոնարհութեամբդ և կամաւոր խաչելութեամբդ հաշտեաց ընդ մեզ Տէր գթութեամբ և թող ըզմեղս ողորմութեամբ:

Մոակալըդ սերովբէից և ահաւորըդ քրովբէից, խոնարհեցար ի չարչարանս չարչարելի բնութեամբ մարդկան. ի խաչին զմեղս ըսպաներ և զդատակնիք մահու լուծեր, հաշտ . . .

Վեհագոյն բնութեանց էից և արարիչըդ բոլո-րից, յորժամ ծագես զխաչիդ նըշան ի գալստեան քո միւսանգամ, զերկրպագուս այժմ հաւատով լուսաւո-

ռեամ նորին լուսով. զի համաձայն խաչազգեցելոցն ըդ-
քեզ օրհնեմք յաւիտենից:

Շբ. Տէրն յետ ստեղծման արարածոց հան-
գեաւ յեօթն օրն ի գործոց. այն որ հանգիստ աշխա-
տելոց և կամքըն գործ է եղելոց. ուստի և մեզ յոյս
հաստատուն ետ հանգստեամբըն շաբաթուն. թէ աստ
գործել զգործս Աստուծոյ, անդ է հանգչիլ ընդ Աս-
տուծոյ:

Րաբունաբար վարդապետիմք, յօրինակէ Տեառն
խրատիմք. որ ի յերկրորդ արարչութեանն՝ յետ կա-
տարման տնօրէնութեան. յեօթներորդ օր հանգստեան
իջեալ մարմնով ի գերեզման. զկապեալ հոգիսըն վե-
րածեաց զանանց հանգիստըն պատրաստեաց:

Ցօղդ որ ի քոյդ կողէ ցօղեալ բժշկեցէ զհան-
գուցեալսն. իջցէ ի հող մահու նոցին և բուսուցէ
յօրըն վերջին. կենդանարար ձայնիւդ քո կոչեա զնո-
սա ի կեանըս քո. և դասեցո ընդ արդարոցն երգել
քեզ փառս ընդ զուարթնոցն:

Լուծեալ զբնութիւնս կենաց ունող, դարձոյց
յանցանքն ի մահու հող. իսկ անմահից մեռելութիւն



շնորհեաց դարձեալ զանմահութիւն. զորս են ընդ քեզ
թաղեալ մահուամբ աւազանին մկրտութեամբ, յարո
ընդ քեզ քոյին փառօք արեգական նման լուսով:

Փայլին արդարքն յարքայութեան եւ ձգնաւորքն
ի հանգստեանն. մարտիրոսքըն պսակին և կուսա-
նաց լապտերք վառին. դասեցո Տէր ընդ նոսին որք
զքեզ Աստուած խոստովանին. արդարութեամբ մի դա-
տեսցին, այլ գթութեամբ քո քաւեսցին:

Քո անպատում խոնարհութեամբդ որ թաղեցար
մեռելութեամբ. եւ յարուցեր յորդւոց մարդկան որք
հաւատով ի քեզ անկան. յարո և զմեզ արդարութեամբ
և զննջեցեալսն ողորմութեամբ. զի կենդանեացըս բե-
րանով տացին քեզ փառս ընդ Հօր Հոգւով:

Խնդրես. Կեցո.

## ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

## Ի ԴԻՄՍ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

Դպ.— Խորհուրդ խորին անհաս անսկզբըն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ. ի յառագաստ անմատոյց լուսոյն. զերապանծ փառօք զդասըս հրեղինաց։ Անճառահրաշ զօրութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր տիրական, և նազելի փառօք զգեստաւորեցեր, ի դրախտն Ադենի տեղի բերկրանաց։ Չարչարանօք ցո սուրբ միածնիդ, նորոգեցան արարածք ամենայն և վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի։ Անձրևածին բաժակ հրահոսան, որ հեղեր յառաքեալսն ի սուրբ վերնատան, հեղ և ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած, ընդ պատմուճանի զքո զիմաստութիւն։ Տան քում վայելէ սրբութիւն որ զգեցար զվայելչութիւն, սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ, պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ։ Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդ դէմ աստեղաց, հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ, համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիլ։ Իլուսամբ թագ ի գլուխ պատեցես ըզմիտս և զզգայարանս, խաչանիշ ուրարմամբ ըստ ահարոնին ծաղկեալ յուսկեթել ի զարդ խորանի։ Բանից բոլորից տիրապէս Աստուածպետական, նախորդապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր։ Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան։



## ՇԱՐԱԿԱՆ Դ.Ձ. ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԱՒՈՒՐՑ

## ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող, որ յառաջգիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ ի պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր, վասն որոյ բարեխօսութեամբ սորա փրկիչ կեցո ըզմեզ այժմ և ի քո ահաւոր գալստեան։

## ՇԱՐԱԿԱՆ ԴՁ. ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԱՒՈՒՐՑ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Որ զշնորհս Աստուածային առ ի վերուստ իջեալ յերկնից. պարգեւեցեր հիւսիսականացս, ի ձեռն սուրբ վարդապետին, աղաչանօք սորա ողորմեա մեզ Աստուած:

Սրկ. Ալէլուիա, ալէլուիա:

Բհ. Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քով տէր:

Սրկ. Դատ արա ինձ տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի. ի տէր յուսացայ՝ զի մի եղէց հիւանդ:

Բհ. Փորձեա՛ զիս տէր և քննեա՛ զիս, փորձեա զերիկամունս իմ և զսիրտ իմ:

Սրկ. Ողորմութիւն քո տէր առաջի աչաց իմոց, և հաճոյ եղէց ճշմարտութեան քում:

Բհ. Ոչ նստայց ես յաթոռս նանրաց, և ընդ անօրէնս ես ոչ մտից:

Սրկ. Ատեցի ես զժողովս չարաց, և ընդ ամբարիշտս ես ոչ նստայց:

Բհ. Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ



եղէց զսեղանով քով տէր:

Սրկ. Լսել ինձ զձայն օրհնութեան քո, եւ պատմել զամենայն սքանչելիս քո:

Բհ. Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց:

Սրկ. Մի՛ կորուսանէր ընդ ամբարիշտս զանձն իմ, և մի՛ ընդ արս արիւնահեղս զկեանս իմ:

Բհ. Որոց ձեռք խւրեանց յանօրէնութեան են, և աջ նոցա լի է կաշառօք:

Սրկ. Ես յանբծութեան իմում գնացի, փրկեա զիս Տէր և ողորմե՛ա ինձ:

Բհ. Ոտն իմ կացցէ յուղղութեան:

Սրկ. Յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:

Բհ. Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Սրկ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Դպիրք երգեն. Թագաւոր երկնաւոր . . . ( ըստ վերնոյն )

Բհ. Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեանն, Տէ՛ր, ընկա՛լ զաղաչանս մեր և կեցո՛ զմեզ:

Սրկ. Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա:

Քհ. Ընկա՛լ Տէր զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի միածնի որդւոյ քո, և աղաչանօք ամենայն սրբոց քոց և որոց այսօր է յիշատակ: Լո՛ւր մեզ, Տէր, և ողորմեա. Ներեա՛, քաւեա՛ և թող զմեղս մեր: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն: Մեղայ Աստուծոյ, խոստովանիմ առաջի Աստուծոյ և սրբուհւոյ Աստուածածնին և առաջի ամենայն սրբոց և առաջի ձեր հարք և եղբարք, զամենայն մեղս զորս գործեալ եմ, քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով, և ամենայն մեղօք զոր գործեն մարդիկ՝ մեղայ. մեղայ, աղաչեմ զձեզ, խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:

Աւագերէցն. Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած, և թողութիւն շնորհեսցէ յամենայն յանցանաց քոց, անցելոց, այժմոյս և յառաջակայէն փրկեսցէ զքեզ և հաստատեսցէ զքեզ յամենայն գործս բա-



րիս, և հանգուսցէ զքեզ ի հանդերձեալ կեանսն յաւիտենից, ամէն:

Քհ. Ազատեսցէ և զձեզ մարդասէրն Աստուած, և թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ, և գործելոյ զբարիս, ուղղեսցէ և զառաջիկայ կեանս ձեր, շնորհօք սուրբ Հոգւոյն հզօրն և ողորմածն, և նմա փառք յաւիտեանս ամէն.

---

## ՔԱՐՈԶ ՓՈԽԱՆ ՈՂՈՐՄԵՍՑԻ

(Ի բացակայութեան քահանայի)

Սրկ. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Խնդրեսցուք հաւատով ի հօրէ վասն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց. փրկելոյ զմեզ ի վշտաց և ի նեղութեանց. իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան տեառն Աստուծոյ ամենակալին կեցո՛ և ողորմեա:

Դպ. Յիշեսջիր և զմեզ առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Քհ. Յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Դպ. Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր,

ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծանիրուք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ, և ոչ մեք էաք, մեք ժողովուրդ և խաշն արօտի նորա:

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Սրկ. Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա:

Քհ. Ի մէջ Տաճարիս և առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս, խոնարհեալ, երկիւղիւ երկրպագանեմք. ըզսուրբ և զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո



սուրբ օրհնեմք, գովեմք, և փառաւորեմք, և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս, ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սրկ. Դատ արա՛ ինձ Աստուած, և իրաւ արա՛ ինձ ի դատաստանի իմում:

Քհ. Յազգէ՝ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, յառնէ անիրաւէ, նենգաւորէ փրկեա՛ զիս:

Դու Աստուած, հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Քհ. Առաքեա՛ Տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո:

Սրկ. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Քհ. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ՝ Աստուած Աստուած իմ:

Սրկ. Արդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովա-

նեա նմա՝ փրկիչ յերեսաց իմոց Աստուած է։

Քհ. Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Սրկ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն. եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. օրհնեսցուք զամենակալն Աստուած՝ զհայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջս փառաբանութեան, և երգել զերգս հոգեւորս։ Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո և ողորմեա։

Քհ. Ի յարկի սրբութեան, և ի տեղւոջս փառաբանութեան. հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս. առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս. և սուրբ սեղանոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք. զսուրբ և զհրաշալի և ըղյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

---



## ՏԱՂ. Ի ՊԷՏՍ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՑՑ ԱՒՈՒՐՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ընտրեալդ յԱստուծոյ ո՜վ երջանիկ սուրբ հայրապետ. նմանեալ Ահարոնի և Մովսէսի Մարգարէին։

Այնմ՝ որ զգեստուցն էր յօրինող, զոր Ահարոն միշտ զգենոյր։ Յօրինէր զպատմուճանն, զոր ի չորից կողմեալ նիւթոց։ Ի կարմրոյ ի կապուտոյ, ի բեհեզոյ ի ծիրանւոյ։ Թել զթելն յօրինէր, կարգն առաջին էր կարկեհան։ Եւ օծումըն զրապանին, շուրջանակի բոլորաշէն։ Եւ յընթացս զարշապարին, հընչէր երկիր ցընծայր խորանն։ Արդ ի նոյն նըմանութեան, Քրիստոս ըզմեր Տէրս յօրինէ։ Յորժամ մըտցես ի սուրբ խորանն, անդ յիշեսցես զմեր ննջեցեալսն։ Յորժամ առնես զպատարագս, յիշեա՛ և զիս ըզբազմամեղս։ Զի և մեզ ողորմեսցի ի միւսանգամ իւր գալըստեանն։

Հօրըն փառք՝ որդւոյն պատիւ, և սուրբ հոգւոյն այժմ յաւիտեան։ Յաւիտեանս յաւիտենից. Քրիստոս օրհնեալ ի համայնից։

## ՄԵՂԵԴԻՔ Ի ԴԷՄՍ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

Ծննդեան

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն երկու փայլակնաձեւ. Քրէյ րի րէյ . . .

Ծննդեան

Է՛ և անխախտ ծննդութիւն. Քրէյ րի րէյ . . .

Ծաղկազարդի

Յիսուս Քրիստոս եմուտ այսօր ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ, Ովսաննայ երգով: Քրէյ րի րէյ . . .

Յարութեան

Ի կոյս վիմէն յարեաւ այսօր. և զգերեալսն ի գերողէն ազատեաց: Քրէյ րի րէյ . . .

Յարութեան

Այսօր մեռեալք ընդ կենդանեաց ձայնէին աւետիս: Քրէյ րի րէյ . . .

Յարութեան

Այսօր Հարսն լուսոյ զգեցեալ ծիրանի: Քրէյ . . .

Յարութեան

Այսօր ողբային առ գերեզմանին: Քրէյ . . .



Յարութեան

Տօնեմք զքո յարութիւնդ: Քրէյ . . .

Համբարձման

Տօնեմք զքո Համբարձումդ: Քրէյ . . .

Յարութեան

Յարեաւ Քրիստոս այսօր աւետիս, ողջիք Սիօնի. ընդ իւր յարոյց մեզ նախաՀայրն զանկեալն ի դրախտէն. նաեւ յարոյց զՀոգիս սուրբ Հարանց զգերեալսն ի բանտէն. էառ աւար եւ գերեաց զՀզօրն ի պատերազմէն. ցնծացուք, ցնծացուք, ո՜վ ազատեալք արեամբ գառինն. քանզի եբաց մեզ ճանապարՀ իւրով խաչիւն. և շնորՀեաց զայն զոր կորոյս Հայր մեր նախկին. և զուարթունք երկնից ընդ մեզ երգակցեալ զոչեն. օրՀնեալ է սուրբ յարութիւնդ. գովեալ է սուրբ յարութիւնդ:

Խաչի

Ծարաւեցաւ Տէրն ի խաչին որպէս զմարդ, այն որ արար զովկիանոս, ծով գեղեցիկ Սամարացւոյն ջուր խնդրելով աղբիւրն Տէր. ոէրիրէյ . . .

Խաչի

Նշանի Տեառն Աստուծոյ մերոյ փայլեալ. ի նաւակատիս որ յերուսաղէմ. ժողովուրդք բարեբանելով զՔրիստոս, տօնեցէք ուրախութեամբ։

Խաչի

Տիրամայրն հանդէպ որդւոյն առ խաչին կայր տրտմագին.
Եւ լսելով ըղձարուին հառաչմամբ լայր ցաւագին.
Ի փուշ պսակըն դիտելով, ողբ, կոծ, վայ տայր իւր անձին.
Աչացըս լոյս, որդեակ Յիսուս, ես ընդ քեզ մեռանիմ, ո՜հ մեռանիմ։

## ՏԱՂ Ս. ԿՈՒՍԻՆ

Ո՜վ ամենապայծառ, նազելի, սուրբ անարատ կոյս,
Ո՜հ, գովելի՜, գովելի՜ ես, գովելի՜, նազելի, սուրբ, անարատ կոյս։
Ո՜հ, ես՝ կորստեան որդի, ի քեզ եմ ապաւինեալ մայր,
Ո՜հ, գովելի՜, գովելի՜ ես, գովելի. ի քեզ եմք ապաւինեալ մայր։



Ո՜վ ամենագովելի ճառագայթ և աշխարհի լոյս ես, կո՜յս։

Ո՜վ ամենագութ կոյս, այլ ոչ ունիմ քեզ նման յոյս.
Ո՜հ, գովելի՜, գովելի՜ ես, գովելի. ոչ ունիմ քեզ նման յոյս.

Ո՜հ, ես՝ կորստեան որդի, ի քեզ եմ ապաւինեալ մայր։

Ս. Կուսին

Համեմատ քեզ ոչ գոյ նման գովելի ես, գովելի.
Անեղին մայր եղեր դու Կոյս, նազելի ես նազելի.
Մեղաւորաց հաստատուն յոյս, անձկալի ես անձկալի.

Մեր փրկութեան դու ես պատճառ, խնկելի ես խնկելի.

Սերովբէք և քերովբէք զքեզ օրհնեն, սուրբ կոյս
Տէրութիւնք և պետութիւնք զքեզ գովեն Ս. Կոյս.
Քեզ նըման երանեալ մայր, ո՛չ յերկնի և ո՛չ յերկրի.
Քրիստոս բանն Աստուած ի քէն ծնաւ Ս. Կոյս.
Կոյս անարատ, լոյս գերազանց, Մայր գովելի ես գովելի։

Կոյս, հիանալի Կոյս, զարմանալի Կոյս,

Համափիւռ Լոյս, փառընդելի Լոյս։
Ամենօրհնեալ Լոյս, դու երջանիկ լոյս.
Մեղաւորաց յոյս, լեր բարեխօս Լոյս։

## ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

Ցայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարիս՝ ժողովեալքս առաւօտ ի խորհուրդ պաշտաման պաղատանաց յառաջակայ սուրբ պատարագիս, խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք ի վերնայարկ սրահ խորանիս. ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ խնկոց տաշխից և կինամոմաց, և զմատուցօղս պահեա սրբութեամբ միշտ և հանապազ քեզ սպասաւորել։

Բարեխօսութեամբ մօր քո և կուսի, ընկալ զաղաչանս քոյ պաշտօնէից։ Որ զերադոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քո Քրիստոս, և ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց և մարգարէից, սուրբ վարդապետաց, այսօր ժողովեալքս դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերիկոսաց, խունկ մատուցանեմք առաջի քո Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ, ընկալ առ ի մէնջ



զխնկամուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբէլի, զՆոյի և զԱբրահամու, բարեխօսութեամբ վերին քո զօրացդ, միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայս։

Զանապական կոյսն Մարիամ Աստուածածին խոստովանի սուրբ զեկեղեցի, ուստի տուաւ հացն անմահութեան և բաժակ մեղ· ուրախարար, տուք օրհնութիւն նմա հոգեւոր երգով։

### Առաքելոց

Այսօր ցնծացէք եղբարք, պարակից եղեալ վերնոցն զսուրբ զառաքեալսն, զովեմք յօր միշտանկի նոցին։

### Հայրապետաց

Ի հանդէս տօնի ցնծամք հայր և վարդապետ, սուրբ հայրապետդ ընտրեալ.

### Մարտիրոսաց

Իսկ ի հեղմանէ արեան ձերոյ հոտ անոյշ բուրեաց ի յերկինս և հոտոտեցաւ Տէր ի հոտ անուշից, ընդ կամաւոր պատարագս Ձեր, ո՜վ սուրբ (Մարտիրոսք) (Վկայք) (Ղեւոնդեանք)։

### Մեծի Ուրբաթու

Աստուածածին կոյսն Մարիամ կայր առ խա-

չին խորոց միածնին: Հեղոյր զարտօսր կսկծմամբ սըր-տին. և զայս ասէր ձայնիւ ողորմելի. այ ո՜հ, այ ո՜հ, զքեզ ի խաչ տեսողիս, հազար եղուկ մօրդ այ-րած սրտիս:

Վարդավառի

Այսօր ցնծայ լեառն Թափօր և զուարճանայ մեծն Հերմոն, քանզի լոյսն Աստուածային, այսօր ծագեաց յայն սուրբ լերինն, ա՜յ ցընծայ, ա՜յ ցընծայ, ցըն-ծայ լեառն Թափօր և զուարճանայ:

Վերափոխման

Բանին Հօր ծոցոյ մարմնարան, Արփիահրաշ կոյս Մարիամ:

---

## ԹԱՓՕՐԻ ՇԱՐԱԿԱՆՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ

(Ըստ ութ ձայնից)

Ած.- Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզմանն, ի խնկել զանապական մարմինն: Եւ գտին ըզվէմըն բարձեալ ի դրանց գերեզմանին, և լըւեալ բարբառ ի հրեշտակէն. եթէ յարեաւ Քրիս-տոս և խափանեաց ըզմահ: Եւ հանդիպեալ քո Տէր



առաքելոցն. և տըւեալ ողջոյն կենդանարար. առաքե-ցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց:

---

Ած.- Փա՜ռք յարութեան քո Տէր:

Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն. իսկ յարութեամբ միածնիդ ըզգեցաք զանմահութիւն. փառք յարութեան քո Տէր: Խաբանօք փայտին ճաշա-կեցաք ըզմահ. իսկ ի փայտէն կենաց նորոգեցաք ա-մենեքեան. փառք յարութեան քո Տէր:

---

Ակ.- Առաքեցար ի Հօրէ բանդ Աստուած ի փրկութիւն ազգի մարդկան. օրհնեմք ըզքեզ սուրբ Աստուած: Ի գերեզման իջեր Թագաւոր անմահ, և ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք զքեզ սուրբ Աստուած:

Ի յերրորդ աւուր յարեար աստուածապէս և ի յերկինս համբարձար. փառք յարութեան քո Տէր. օրհնեմք զքեզ սուրբ Աստուած:

---

Բձ.- Ձայն աւետաւոր հրեշտակին զուարճա-ցոյց զաւաւօտեան կանայսն, զՔրիստոսի պատմելով զյարութիւն: Մի յուսահատիք տրտմութեամբ այլ ցնծացէք բերկրելով. խնկազգեացք աստուածայնոյն և փափաքողք յարութեան: Փութացարուք ի Գալիլիա,

աւետարանեցէք աշակերտաց, եթէ յարեաւ Քրիստոս և խափանեաց զմահ։

═══

Բկ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Ընդ արշալոյսն առաւօտուն կանխեալ կանանցն ի գերեզման ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Եւ առ նոսա ասէր հրեշտակն, զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Փութացարուք ով սուրբ կանայք և պատմեցէք աշակերտացն ասելով Քրիստոս յար . . .

═══

Բկ, Իջեր Տէր և մարմնացար ի կուսէն, և զհոգեղէն բնութիւնս պատուեցեր ի մեզ։ Ելեր Տէր, բևեռեցար ի խաչին, զմեռանիլ յանձն առեր, կենդանատու մեռելոց։ Եղար Տէր ի նորափոր ի վիմի, և ծառայնեաւ կնքեցար, գանձդ կենաց աշխարհի։ Յարեար Տէր, աւերեցեր զդժոխս, ի յերկինս համբարձար, և ընդ աջմէ հօր նստար։

═══

Գձ.– Այսօր յարութիւնն Քրիստոսի տօնեցէք հաւատացեալք. ի մի Աստուած հայր ամենակալ։ Այսօր և կանայքն իւղաբերք, աւետիս տային առաքե-



լոց, օրհնեն զԱստուած՝ հայր ամենակալ։ Այսօր և հրեշտակք ի յերկինս հոգևոր հնչմամբ երգով, օրհնեն զԱստուած հայր ամենակալ։

═══

Գձ. Տեսիլ փայլակնաձև զուարթնոյն ի վիմին հնչեցեալ առ խնկաբերս կանայսն, փարատեցոյց զերկիւղալից տրտմութիւնն։ Պահապանքն պակուցեալ ահաբեկ լինէին, և կանանցն աւետարանեալ՝ մահ մահու յաղթեաց և ծանուցաւ մահ։ Բարոյս առաքելով առ երջանիկ առաքեալսն. փութացարուք ի Գալիլեա և տեսանիցեք զկենագործողն զՔրիստոս։

═══

Գկ.– Զքո յարութիւնդ օրհնեմք մարդասէր. աղաղակելով Տէր փառք քեզ։

Զոր օրհնեն սերովբէքն և զովեն քերովբէքն աղաղակելով Տէր փառք քեզ։

Անդադար բերանով անհանգիստ բարբառով աղաղակելով Տէր փառք քեզ։

═══

Գձ.– Կանանցըն կանխելով ի թաղումըն կենդանւոյն, տեսին ըզվէմն ի դրանցն ի բաց մերժեալ։ Թափուր տեսին ըզգերեզմանն և ունայն տեսանէին և տրտմութեամբ

լոյին յուսահատելոց։ Մայր խաչեցելոյն, զի՞ լաս յուսահատեալ քանզի Քրիստոս փառօք մեծաւ յարեաւ։

Դճ.– Փառաբանակից Հօր Որդի, որ վասն մեր խաչեցար, զդժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի, փառք յարութեան քո Տէր։ Հրեշտակապետին իջումն որ ըզպահապանն երկիւղիւ զարհուրեցոյց առ գլանըն գերեզմանին. փառք յարութեան . . . ։ Եւ ըսքանչելի սուրբ կանանցն աւետարանէր ասելով. յարեաւ Քրիստոս յարուցիչըն մեռելոց. փառք յարութեան քո Տէր։

Դկ.– Ի գերեզման յարուցելոյն անմահին, այսօր գոչէր Հրեշտակն երկնային, յարեաւ Քրիստոս, զարթեաւ Քրիստոս ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն։ Պահապանքն զարհուրեցան ի յահէն, քանզի կոյսն ի նորափոր տապանէն յարեաւ Քրիստոս . . . ։ Առ սուրբ վիմին նստեալ գոչէր Հրաշալի, իւղաբերքն քարոզելով ձայնէին. յարեաւ Քրիստոս . . .



## ԱՄ ՏՈՒԱԾԱԾՆԱՅ, ԿԻՒՐԱԿԷԻՑ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ

Բձ. Անկանիմք առաջի քո Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ. բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա զմիածին որդին. փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

## ԾՆՆԴԵԱՆ Ս. ԿՈՒՍԻՆ

Բկ.– Այսօր ցնծան երկնայինք, և պար առեալ ի բարձունս. երգեն զերգս հոգեւորս յաւուր ծննդեան սրբուհւոյն։ Այսօր վերինն սիօն. գոչեն զերգս սրովբէից. զերեքսրբեանն ասելով յաւուր ծննդեան սրբուհւոյն։ Այսօր աստեղք և լուսին ընդ արեւու հրճուելով, գովեն զլոյսն ի Հօրէ յաւուր ծննդեան լուսոյ մօրն։

Այսօր ծերքն օրինականք մանկամբք նորոյ սիօնի. երիտասարդք և կուսանք խնդան ծննդեամբ տիրուհւոյն։

Այսօր գունդք առաքելոցն և պարըք նախատեսացն. յաւուր ծննդեան մօր բանին երգեն զփառս ի բարձունս։

Սրկ. Օրհնեա Տէր։
Քհ. Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և . . .
Դպ. Եւ ասի ժամամուտ ըստ պատշաճի աւուրն։
Սրկ. Եւ եւս խաղաղութ . . . Օրհնեա Տէր։
Քհ. Օրհնութիւն . . . խաղաղութիւն ամենեցուն։
Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։
Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք։
Դպ. Առաջի քո, Տէր։
Քհ. Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ . . .

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՔ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ

Ած.– Զթագաւորն փառաց Քրիստոս որ վասն մեր մարմնացաւ ի սրբոյ կուսէն, և խաչի համբերելով. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք։ Որ զթաղումն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ, միաբանութ . . . ։ Կարողապէս զդրունս դժոխոց խորտակեաց, եկեղեցւոյ իւրում զգեցոյց զմեծ վայելչութիւն, միաբանութեամբ . . . ։

Ակ. Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանո–



սաց, և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկե–ղեցի, ժողովո՛ւրդք զՔրիստոս բարեբանեցէք։ Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած. քանզի շիջոյց զխայթոց մահու խաչին իւրով սրբով. ժողովուրդք . . . ։ Յարեաւ Աստուած և տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան և մանկունք հաղորդեցան մարմնոյ և արեան կենարարին, ժողովուրդք . . . ։

Բձ. Թագաւորին յաւիտենից մատուսցուք զօրհներգութիւն որ ի կուսէն մարմնացաւ, հաստատեաց զաշխարհս ի հաւատս անսասանելի, փառք նմա այժմ և յաւիտեան։ Որ կամաւ համբերեր մահու խաչի Աստուած բանն, և եհեղ զարիւն իւր սուրբ ի փրկութիւն տիեզերաց, փառք նմա . . . ։ Աստուածապէս յարուցեալ ի նորափոր ի վիմէն, լուսազարդեաց զեկեղեցի իւր սուրբ, ի փառս և ի գովեստ անուան իւրոյ, փառք նմա . . ։ ։

Բկ.– Օրհնութիւն ի բարձունս, անօրինեցելոյն ի կուսէն թագաւորին մերոյ, Ալէլուիա, ալէլուիա։ Օրհնութիւն ի բարձունս, անսասանելի և հաստատուն յա–

տոյն մերոյ Ալէ. ։ Օրհնութիւն ի բարձունս, անբաժանելի և միանական սուրբ Երրորդութեանն Ալէ. ։

---

Դ.Ձ. Զթագաւորն Քրիստոս օրհնութեամբ երգով բարեբանեցէք ամենայն երկիր։ Արարողին երկնի և երկրի մատուսցուք երգով գոհաբանութիւն ամենայն երկիր։ Երրորդութեանն և մի Աստուածութեանն մատուսցուք պատիւ, երկրպագութիւն յաւիտեանս ամէն։

---

Դ.Կ.- Լուսով աստուածութեան քո Քրիստոս, լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, պահեա զսա անշարժ յաւիտեան։ Տօն է այսօր Երուսաղէմ հաւատացելոց բազմութեամբ զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ պահեա զսա ... ։ Բացան դրունք հաւատոյ Նոր Սիոնի ընդունիլ զանմահ փեսայդ յառագաստ, բաշխէ զմարմին քո և զարիւն պահեա զսա ... ։

---

Դ.Ձ.- Թագաւոր Քրիստոս էակից Հօր և Հոգւոյն, որ վասն մեր մարմնացար ի սուրբ կուսէն. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։ Որ կամաւոր մահուամբ զմահ մեռուցեր և անապական յարութեամբդ քո նորոգեցեր զաշխարհս, Թագաւոր փա ..... ։



Որ կենդանարար արեամբդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով, Թագաւոր փա ... ։

---

Դ.Կ.- Որ անբաւելի յաղթող զօրութեամբ Թագաւոր ես երկնի և երկրի Քրիստոս Աստուած, օրհնաբանեմք զքեզ։ Որ փառակցութեամբ ընդ Հօր վե[illegible]հնիս յանմահից և խոնարհեալ մարմին ըզգեցար փառաց Թագաւոր, օրհնաբանեմք զքեզ։ Որ կարողապէս զմահ կոխեցեր և յարուցեալ լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի անմահ էութիւն, օրհնա ... ։

---

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհ. Զի քո է կարողութիւն և զօրութիւն ... ։

Սրկ. Պռօսխումէ։

Դպ. Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ։ ( Երիցս կրկնեա )։

Սրկ. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղա . ։

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ. Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ. Վասն հայրապետին մերոյ տեառն ( այս անուն ) կենաց և փրկութեան հոգւոյ նորին, զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ. Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ. Վասն բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց, զօրավարաց և զօրաց նոցին զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ. Վասն Հոգւոցն հանգուցելոց որք . . . :

Դպ. Յիշեա Տէր և ողորմեա։

Սրկ. Եւ ևս միաբան վասն ճշմարիտ . . .

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ. Զանձինս մեր և զմիմեանս . . . :

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Սրկ. Ողորմեա մեզ Տէր Աստուած մեր , . . :

Դպ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Սրկ. Օրհնեա Տէր։



Քհ. Զի ողորմած և մարդասէր ես . . . :

( Դպիրքն ընթեռնուն ճաշու գիրքն։ )

## ԱԼԵԼՈՒԻԱՅՔ ՃԱՇՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

( Ըստ ութ ձայնից )

Աձ.– Դու յարուցեալ զթագցիս ի վերայ Սիօնի, ժամանակ զթալոյ նորա հասեալ է ժամ։

Ակ.– Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն ի նոր, օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

Բձ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։

Բկ. Արի, Տէր Աստուած իմ ի հրամանս քո զոր պատուիրեցեր և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքև։

Գձ. Ուրախ եղև Իսրայէլ յարարիչ իւր, որդիք Սիօնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց։

Գկ.– Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որպէս ահեղ են խորհրդով քան զամենայն որդիս մարդկան։

Դձ.– Հաճեցար Տէր ընդ երկիր քո և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։

Դկ.– Յարեաւ Աստուած և ցրուեսցին ամենայն

թշնամիք նորա, փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

---

## ՍԱՂՄՈՍ ՅԵՏ ՃԱՇՈՒ ԳՐՔԻՆ
## Ի ՊԷՏՍ ՅԻՆԱՆՑ

Դպ. Ալէլուիա, ալէլուիա, գովեա Երուսաղէմ զՏէր։

Սրկ. Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն։

Դպ. Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Սրկ. Որ եդ զսահմանս քո ի խաղաղութիւն. պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։

Դպ. Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք նորա։

Սրկ. Դնէ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս փոշի ցանեաց։

Դպ. Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ։

Սրկ. Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա, շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք։

Դպ. Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւն



և զիրաւունս Իսրայէլի։

Սրկ. Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր։

Դպ. Եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։

Սրկ. Ալէլուիա օրթի.

Քհ. Խաղաղութիւն ամենեցուն.

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք.

Քհ. Սրբոյ աւետարանի . . .

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր.

Սրկ. Պռօսխումէ.

Դպ. Ասէ Աստուած.

---

Քհ. (Ընթեռնու ճաշու աւետարանն.)

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Սրկ. Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի երևելեաց և աներևութից. Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միածին՝ այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի երե-

ւելիք և աներևոյթք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և ի սուրբ Հոգին, յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբսն։ Հաւատամք և ի միմիայն ընդհանրական և յառաքելական սուրբ եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ Հոգի, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել



զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ փոփոխելիք են կամ այլայելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհ. Իսկ մեք փառաւորեսցուք . . . :

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ, Եւ եւս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ և ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման և աղօթից,զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց. թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր։ Աղօթք մեր և խնդրուածք յամենայն ժամ մատցեն առաջի մեծի տէրութեան Նորա։ Եւ նա տացէ մեզ միաբան, միով հաւատով և արդարութեամբ վաստակել ի գործս բարեաց, զի զողորմութեան զշնորհն իւր արասցէ ի վերայ մեր. Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Դպ. Կեցո Տէր։

Սրկ. Զժամ սուրբ պատարագիս և զյառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ . . . :

Դպ. Շնորհեա Տէր։

Սրկ. Զհրեշտակ խաղաղութեան պահ . . . ։

Դպ. Շնորհեա Տէր։

Սրկ. Զքաւութիւն և զթողութիւն . . . ։

Դպ. Շնորհեա Տէր։

Սրկ. Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութ . . .

Դպ. Շնորհեա Տէր։

Սրկ. Եւ ևս միաբան վասն Ճշմարիտ . . . ։

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ. Զանձինս մեր և զմիմեանս . . . ։

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Սրկ. Ողորմեայ մեզ, Տէր Աստուած մեր . . . ։

Դպ. Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

Սրկ. Օրհնեա՛ Տէր։

Քհ. Որպէս զի արժա . . . ։ Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպ, առաջի քո Տէր։

Քհ. Խաղաղութեամբ քով Քրիստոս . . ։

Սրկ, Օրհնեա՛ Տէր։



Քհ. Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանս։

Դպ. Ամէն։

Սրկ. Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս։

Դպ. Մարմին տէրունական և արիւն փրկչական կայ առաջի, երկնային զօրութիւնքն յաներևոյթս, երգեն և ասեն անհանգիստ բարբառով, սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց։

Սրկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգևորս։

( Եւ դպիրքն երգեն զսրբասացութիւն ըստ խորհրդոյ )

## ԾՆՆԴԵԱՆ, ԱՒԵՏԵԱՑ, ՎԱՐԴԱՎԱՌԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Բազմութիւնք հրեշտակաց և զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից ընդ միածին Թագաւորին։ Որք երգէին և ասէին. սա է Որդին Աստուծոյ, ամենեքեան ասասցուք. ուրախ լերուք երկինք և ցնծասցեն հիմունք աշխարհի. զի Աստուածն յաւիտենական ի

յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր:

## ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Զերդս հոգեւորս, որ վերնատունս ի կատարս Հրանիւթս քառակերպեանս անճառելի բանդ Աստուած:

Այսօր իջեալ ի յերկնայնոյն վասն քո արարածոյս, յանձն առեր բազմիլ ընդ աշակերտսն: Եւ սերովբէքն եւ քերովբէքն հիացեալ զարմանային, եւ պետութիւնք վերին զօրացն սքանչացեալ աղաղակէին ասելով՝ սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց:

## ՑԻՆԱՆՑ ԵՒ ԽԱՉԻ

Ո՞վ է, որպէս Տէր Աստուած մեր խաչեցաւ վասն մեր, թաղեցաւ եւ յարեաւ, հաւատարիմ եղեւ յաշխարհի եւ համբարձաւ փառօք: Եկայք ժողովուրդք, զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեցուք նմա ասելով. սուրբ, սուրբ, սուրբ ես Տէր Աստուած մեր:

## ԿԻՒՐԱԿԷԻ, ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զքո սուրբ զեկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակա-



պետք կան առաջի քո եւ բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն զքեզ Տէր, եւ ի մարդկանէ հաճեցար ընդունել զօրհնութիւն ձայնիւ խորհրդականաւ. սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց:

## ՊԱՀՈՑ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Վասն յիշատակի հանգուցելոցն, ընկալ հայր սուրբ մարդասէր զպատարագս: Եւ համարեա զհոգիս նոցա ի թիւ սրբոց քոց յարքայութեանդ երկնից: Մանաւանդ զի հաւատով մատուցուք զպատարագս, հաշտեսցի Աստուածութիւնդ եւ հանգուսցէ զհոգիս նոցա:

## ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

Սրբութիւն սրբոց, մեծ ես եւ ահաւոր. եւ զինուորութիւնք հրեշտակաց օրհնեն զքեզ եւ ասեն. փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն:

## ՄԱՐԳԱՐԷԻՑ, ԱՌԱՔԵԼՈՑ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

Ամենակալ ես Տէր զօրութեանց, որ թագաւորդ

ես յաւիտենից։ Որ նստիս յերկնից ի յերկիրս. և լոյս ծագես յարարածս քո։ Որ խոնարհութեամբ իջեր ի յերկիր, քեզ պատարագս մատուցանեմք և սուրբ զանունդ քո փառաւորեմք Տէր որ պսակիչդ ես քոյ սրբոց (այս անուն), վասն զի սոքա են մեզ բարեխօս Տէր ամենակալ, ի քում յարքայութեանդ։

---

Սրկ. Համբարձէք իշխանք զդրունս Ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց։

Քհ. Ո՞վ է սա թագաւոր փառաց, տէր հզօր զօրութեամբ իւրով, տէր կարող ի պատերազմի։

Սրկ. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտենից և մտցէ թագաւոր փառաց։

Քհ. Ո՞վ է սա թագաւոր փառաց տէր զօրութեանց։

Սրկ. Սա ինքն է թագաւոր փառաց։

Քհ. Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

Սրկ. Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա։



Սրկ. Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ։ Մի՛ խղճիւ և գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ. մի՛ պատրանօք և խաբէութեամբ։ Մի՛ երկմտութեամբ և մի՛ թերահաւատութեամբ. այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի և առաւելեալ ամենայն գործովք բարութեան։ Կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ. և գտցուք զողորմութեան զշնորհս։ Յաւուր յայտնութեան և ի միւսանգամ գալստեան՝ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, կեցուսցէ և ողորմեսցի։

Դպ. Կեցո՛ Տէր և ողորմեա։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհ. Շնորհօք և մարդ . . . ։ խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպ. Առաջի քո Տէր։

Սրկ. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան և որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք և աղօթեցէք։

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ Էնն Աստուած աստ բազմեցաւ. Խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տուաւ: Եկեղեցիս մի անձն եղեւ համբոյրս յօդ լրման տուաւ: Թշնամութիւնն հեռացաւ, սէրն յընդհանուրս սփռեցաւ: Արդ՝ պաշտօնեայք բարձեալ զձայն տուք զօրհնութիւն ի մի բերան, միասնական Աստուածութեանն, որում սրովբէքն են սրբաբան:

( Ոմանք եւ զայս ասեն ի հանդիսի տօնի )

Սրկ. Որք հաւատով կայք յանդիման, սուրբ Սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ զՔրիստոս արքայն եւ շուրջ պատեալ զօրք վերնական:

Դպ. Վերհամբառնամք զաչս ունելով, եւ պաղատիմք զայս ասելով, զմեղս մեր մի՛ յիշեսցես. այլ գթութեամբ քո քաւեսցես, ընդ հրեշտակաց օրհնեմք զքեզ եւ ընդ սրբոց քոց Տէր փառք քեզ:

═══

Սրկ, Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք եւ նայեսցուք զգուշութեամբ:

Դպ. Առ քեզ Աստուած:

Սրկ. Պատարագ Քրիստոս մատչի անարատ գառն Աստուծոյ:



Դպ. Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:

Սրկ. Օրհնեա, Տէր:

Քհ. Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար . .

Դպ. Ամէն եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Զդրունս, զդրունս, ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:

Դպ. Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:

Սրկ. Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ:

Դպ. Արժան եւ իրաւ:

Սրկ. Օրհնեա, Տէր:

Քհ, Եւ ընդ Սրովբէսն եւ ընդ Քերովբէսն . . , :

( Իսկ ի հանդիսի աւուրս, զկնի Արժան եւ իրաւին զայս ասեն ):

Սրկ. Եւ զատոյդ փրկութեան՝որ միշտ ընդ ամենայն տեղիս, գոհութիւն մատուցանեմք քեզ Քրիստոս:

Դպ. Որով եւ զհաշտելի զյարութիւնդ քո զովեն զօրութիւնք:

Սրկ. Սարսին սերովբէքն:

Դպ. դողան քերովբէքն:

Սրկ. Եւ իշխանութիւնք վերին պետութեանցն պար առեալ բողբոջ ձայնիւ եղանակեն և ասեն։

Դպ. Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց։ Լի են երկինք և երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս օրհնեալ, որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն. ովսաննա ի բարձունս։

Սրկ. Օրհնեա Տէր։

Բհ. Առէ՛ք կերէ՛ք, այս է մարմին իմ . . . ։

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Բհ. Արբէք ի սմանէ ամենեքեան, այս . . . ։

Դպ, Ամէն։ Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետու ի մահ փան մեր պարտապան պարտեաց մերոց, հեղմամբ արեան Նորա աղաչեմք զքեզ, ողորմեա քո բանաւոր հօտի

Սրկ. Օրհնեա՛ Տէր։

Բհ. Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք. . . ։

Դպ. Ցամենայնի օրհնեալ ես Տէր, օրհնեմք զՔեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զՔեզ, Տէր Աստուած մեր։



Սրկ. Օրհնեա՛ Տէր։

Բհ. Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ. Առաջի քո, Տէր։ Որդի Աստուծոյ, որ պատարագեալ հօր ի հաշտութիւն, հաց կենաց բաշխիս ի մեզ, հեղմամբ արեան քո սուրբ աղաչեմք զքեզ ողորմեա արեամբ քով փրկեալ հօտի։

Սրկ. Օրհնեա՛, Տէր։

Բհ. Որպէս զի եղիցի սա ամենեցուն . . . ։

Դպ. Հոգի Աստուծոյ, որ զփառակիցդ Քո զխորհուրդ իջեալ ի յերկնից. կատարես ի ձեռս մեր հեղմամբ արեան սորա, աղաչեմք զքեզ, հանգո զհոգիս մեր ննջեցելոցն։

Սրկ. Օրհնեա՛, Տէր։

Բհ. Ընդ որս և մեզ այց արասցես բարե . . . ։

Դպ. Յիշեա, Տէր և ողորմեա։

Բհ. Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամ . . .

Դպ. Յիշեա, Տէր և ողորմեա։

Սրկ. Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց և ամենայն հայրապետաց սրբոց։

Առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղա-

փառ սարկաւագաց, և ամենայն սրբոց։ Եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք։

Դպ. Յիշեա, Տէր և ողորմեա։

Սրկ. Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ. Հրաշալի և աստուածպարգև յարութեանն (կամ՝ տէրութեանն) Քրիստոսի Աստուծոյ մերոյ երկրպագանեմք։

Դպ. Փառք յարութեան (կամ՝ տէրութեան) քո Տէր։

(Ի տօնի սրբոց առաքելոց, մարգարէից և հայրապետաց եւյնից փոխան օրհնեալ գովեալն պէտք է կարդալ հետեւեալը)։

Սուրբ և աստուածահաճոյ (առաքելոյն) (մարգարէիցն) (Հայրապետացն) (ճգնաւորացն [illegible] այսօր է յիշատակ. ի սուրբ պատարագս աղաչեմք։

Դպ. Յիշեա Տէր և ողորմեա։

Սրկ. Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն. և Գրիգորի լուսաւորչին, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսէսի, Սահակայ, դանիէլի եւ Խադայ. Մեսրոպայ վարդապետին, և Գրիգորի Նարեկացւոյն, և Ներսէսի Կլայեցւոյն, Յովհաննու որոտնեցւոյն, և Գրիգորի և Մովսէսի Տաթեւա-



ցեացն, սրբոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց, Հովուաց և Հովուապետացն Հայաստանեայց, եղիցի յիշատակ...

Դպ. Յիշեա, Տէր և ողորմեա։

Սրկ. Միանձնացելոց սրբոց, առաքինասէր և աստուածուսոյց կրօնաւորացն, Պօղոսի, Անտօնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրիոսի, Աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի, Բարսամայ, Յովհաննէսեանց եւ Սիմէօնեանց, սրբոց Ոսկեանց և Սուքիասեանց և ամենայն սրբոց հարց և աշակերտելոց նոցին ընդ տիեզերս, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք։

Դպ. Յիշեա, Տէր և ողորմեա։

Սրկ. Թագաւորաց հաւատացելոց, սրբոց Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ և Թէոդոսից և ամենայն սուրբ և բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց. եղիցի յիշատակ . . . ։

Դպ. Յիշեա, Տէր և ողորմեա։

Սրկ. Ընդհանուր ամենայն հաւատացելոց արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք։

Դպ. Յիշեա, Տէր և ողորմեա։

Սրկ. Օրհնեա, Տէր:

Քհ. Եւս առաւել զեպիսկոպոսս . . . :

Սրկ. Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր, վասն սուրբ և անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զի սա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգևեսցէ: Սովաւ շնորհեա, զսէր զհաստատութիւն և զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց. եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամենայն հայոց տեառն (այս անուն), և սրբոյ Երուսաղիմայ պատրիարք տեառն (այս անուն), և Կ. Պոլսոյ պատրիարք, տեառն (այս անուն), և քահանայիս որ զպատարագս մատուցանէ, և վասն զօրութեանց և յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից և իշխանաց բարեպաշտից: Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ րաբունապետաց մերոց և շինողաց սրբոյ եկեղեցւոյս և որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: Ազատութիւն եղբարց մերոց գերելոց և շնորհս յառաջիկայ ժողովրդեանս, հանգիստ հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս կատարելոց, եղիցի յիշատակ ի սուրբ պա-



տարագս աղաչեմք:

Դպ. Ըստ ամենայնի, և յաղագս ամենեցուն:

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհ. Եւ եղիցի ողորմութիւն մեծին Աստուծոյ և փրկչին մերոյ . . . :

Դպ. Ամէն և ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Ամէն և ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք:

Դպ. տէր ողորմեա:

Սրկ. Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք ևս առաւելապէս զտէր աղաչեսցուք:

Դպ. տէր ողորմեա:

Սրկ. Վասն մատուցեալ սուրբ և Աստուածային անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս. զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Որպէս զի տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ երկնային և յիմանալի իւր մատուցարան. փոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգևս Հոգւոյն սրբոյ զտէր աղաչեսցուք:

Դպ. տէր ողորմեա:

Սրկ. Ընկալ կեցո և ողորմեա և պահեա զմեզ

տէր քոյին շնորհիւդ։

Դպ. Կեցո՛ տէր և ողորմեա՛։

Սրկ. Զամենասրբուհի զԱստուածածինն զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով զտէր աղաչեսցուք։

Դպ. Յիշեա՛, տէր և ողորմեա՛։

Սրկ. Եւ եւս միաբան վասն ճշմարիտ . . . :

Դպ. տէր ողորմեա՛։

Սրկ. Զանձինս մեր և զմիմեանս . . .

Դպ. Քեզ, տեառնդ յանձն եղիցուք։

Սրկ. Ողորմեաց մեզ, տէր Աստուած մեր . . . :

Դպ. տէր, ողորմեա՛, տէր, ողորմեա՛, տէր ողորմեա՛։

Սրկ. Օրհնեա՛ Տէր։

Քհ. Եւ տուր մեզ համարձակաձայն . . .

Դպ. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի, զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, թող մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ։

Սրկ. Օրհնեա Տէր։



Քհ. Զի քո է արքայութիւն . . . : Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպ. Առաջի քո Տէր։

Սրկ. Օրհնեա՛, Տէր։

Քհ. Քրիստոսիւ, Յիսուսիւ, Տերամբ մերով . . . :

Սրկ. Պռօսխումէ։

Քհ. Ի սրբութիւն սրբոց։

Դպ. Միայն սուրբ, միայն Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր, ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհ. Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ։

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհ. Օրհնեալ, Որդին սուրբ, Աստուած ճշմարիտ։

Դպ Ամէն։

Սրկ. Օրհնեա, Տէր։

Քհ. Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ։

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . . . :

Դպ. Ամէն։ Հայր սուրբ, Որդին սուրբ, Հոգին սուրբ։ Օրհնութիւն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սրկ, Օրհնեա Տէր։

Քհ. Ի սուրբ, ի սուրբ պատուական . . . :

Դպ. Տէր ողորմեա ( չորիցս կրկնեա )։

Սրկ. Տէր ողորմեա ( չորիցս կրկնեա ) :

Դպ. Ամենասուրբ Երրորդութիւն տուր աշխարհիս խաղաղութիւն։

Սրկ. Եկեղեցեաց հաստատութիւն և հիւանդաց բժշկութիւն։

Դպ. Տէր ողորմեա Տէր ողորմեա Յիսուս փրկիչ մեզ ողորմեա։

Սրկ. Միջնորդութեամբ սուրբ և անմահ և կենարար Պատարագիս։



## ՅԱՏՈՒԿ ԵՐԳՔ ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՅԻ

ՊԱՀՈՑ.– Արի Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Հաս յօգնութիւն ծառայից քոց,
Լեր օգնական ազգիս Հայոց։

ՊԱՀՈՑ.– Եկ Տէր Յիսուս ողորմեաց մեզ,
Ողորմութեան ժամ է արդ Տէր.
Եկ բարեխնամ այց արա մեզ.
Այցելութեան ժամ է արդ Տէր։

ՊԱՀՈՑ.– Բանին կենաց բարձող եղեր,
զԱստուած մարմնով պարագրեցեր.
Յարքայն Աստուած բարեխօս լեր,
Ի փորձանաց զմեզ փրկել։

ՊԱՀՈՑ.– Արդ անկանիմք առաջի քո,
Գոչեմք մեղայ Տեառնդ մերոյ.
Անցո ի մէնջ զցասումըն քո,
Վասն անսպառ գթութեան քո։

ՊԱՀՈՑ. Զի գիտացաք մեք հաւատեաւ
Որ չափ մեղաց մերոց լցաւ.
Ուստի և Տէրն մեր բարկացաւ,
Առ ի խրատել ըզմեզ գթութեաւ։

ԽԱԶԻ.– Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ,
Եւ անարատ սուրբ ծնողիդ,
Յիշեա՛ զհեղումն արեան փրկչիդ
Եւ ի խնդիր փոքու հօտիդ:

ԽԱԶԻ.– Մեք ի յայն փայտն եմք յուսացեալ
Յոր տէր Յիսուս բեւեռեցաւ.
Եւ խոնարհեալ երկրպագեմք
Աստուածային սուրբ նշանիս.

ԽԱԶԻ.– Խաչն ի նախնումն երեւեցաւ
Ծագեալ ի դրախտն Աստուածատունկ,
Մխիթարիչ եղեւ Սեթայ,
Նախապուշակ հօրն Ադամայ:

ԿԻՐ.– Ով սուրբ մարմին հաց կենդանի
Եւ սուրբ զարիւնդ ըմպելի.
Որ բաշխեալ կայ սուրբ սեղանի,
Խաղաղութիւն տայ աշխարհի:

ԿԻՐ.– Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Լոյս ծագեցաւ արարածոց:
Սուրբ յարութեան քո կենարար,
Յարո՛ զմեզ ի կեանս անմահ:

ԿԻՐ.– Սուրբ պատարագ զհացն կենաց



Ողորմութեան մեզ դուռն բաց.
Խոստովանիմք Քրիստոս Աստուած,
Փրկեա զաշխարհս ի փորձանաց:

═══

Դպ. Ընկալ Տէր և ողորմեա:

Սրկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս: Զի սմա վայելեն սաղմոսք և օրհնութիւնք, ալէլուք և երգք հոգեւորք: Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք և զՏէր յերկինս օրհնեցէք:

Դպ. Օրհնեալ է Աստուած. Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում, ալէլուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր և սուրբ զարիւն իւր ցօղէ ի մեզ , ալէլուիա:

Մատիք առ Տէր և առէք զլոյս, ալէլուիա:

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր ալէլուիա:

Օրհնեցէք զՏէր ի յերկինս, ալէլուիա:

Օրհնեցէք զնա ի բարձունս, ալէլուիա:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա, ալէլուիա:

Օրհնեցէք զնա, ամենայն զօրութիւնք նորա, ալէլուիա:

## ՇԱՐԱԿԱՆՔ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Բկ.- Երրորդութիւն անբաժանելի և զօրութիւն երկնային. լոյս ծագեալ յաշխարհ. Նմա հանցուք զօրհնութիւնս երգով: Որ էջըն յերկնից այսօր և հանգեաւ յառաքեալսն ճշմարիտ սուրբ հոգին. Նըմա հան . . . : Որ ի խորհուրդըս փրկական, այսօր ընդ իջանել յառաքեալսն ծանուցաւ մարգարէին. Նըմա հան . . :

Գձ. Որ կազմեցեր սեղան խորհրդոյ, և արբուցեր յանմահական բաժակէդ. սրբոց քոյ առաքելոց այսօր ի սուրբ վերնատունն. աղաչեմք փրկիչ ողորմեա: Բաշխէ զմարմին իւր և զարիւն. Նոր ուխտ անուանեալ. և յիշատակ կամաւոր մահուանն, մերձեցելոցս ի նա սրբութեամբ:

Սրկ. Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և



սրբութեամբ հաղորդեցարուք:

Քհ. Ասացէք մեղայ Աստուծոյ, հաւատամք ի հայր սուրբ Աստուած ճշմարիտ, հաւատամք յորդին սուրբ Աստուած ճշմարիտ, հաւատամք և ի հոգին սուրբ Աստուած ճշմարիտ. խոստովանիմք և հաւատամք զի սա է ճշմարիտ, կենդանի և կենդանարար պատուական մարմին և արիւն տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ լինի մեզ ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց:

Դպ. Աստուած մեր և տէր մեր, երեւեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Քհ. Կեցո, Տէր զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո, հովեա և բարձրացո զսոսա յայսմհետէ մինչև յաւիտեան:

Դպ. Լցաք ի բարութեանց քոց Տէր, ճաշակելով զմարմին քո և զարիւն, փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ և հանապազ կերակրես զմեզ, առաքեա ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն, փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Սրկ. Ամէն և ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Եւ ևս հաւատով ընկալեալք յաստուածային սուրբ, երկնային անմահ անարատ և անապական խորհրդոյս զՏեառնէ գոհացարուք:

Դպ. Գոհանամք զքէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ: Բաշխելով զմարմին և զարիւն ի փրկութիւն աշխարհի, և կենաց անձանց մերոց.

Սրկ. Օրհնեա, Տէր:

Քհ. Որ օրհնես զայնոսիկ, ոյք օրհնեն զքեզ Տէր, և սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Դպ. Օրհնեալ է Աստուած:

Քհ. Կեցո, զժողովուրդս քո . . . :

Դպ. Ամէն.

Քհ. Սրբեա զսոսա ոյք ողջունեցին . . . :

Դպ. Ամէն:

Քհ. Զխաղաղութիւն պարգևեա ամենայն աշ . . :

Դպ. Ամէն:

Քհ. Զի ամենայն տուրք բարիք և . . , :

Դպ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան: ( Երից կրկնեա )

Քհ. Կատարումն օրինաց և մարգարէից . . . :

---



## ՇԱՐԱԿԱՆՔ Ի ՊԷՏՍ ՆՆՋԵՑԵԼՈՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

Դպ. Եւ ևս խաղաղութեան . . . :

Քհ. Օրհնութիւն և փառք Հօր . . . :

Դ.Ձ. Գըթա Տէր ի հոգիս մեր ննջեցելոցն և յիշեա ողորմութեամբ, քանզի գինք սուրբ արեան քո են, ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն և կան առաջի ահաւոր քո բեմին:

Զընկղմեալքս յահագին մեղաց ծովուս, ապրեցո ի գեհենոյն, ըղձաւանողըս սուրբ երրորդութեանդ, ի յորժամ հրաշալի . . . :

Զյուսացեալքս ծնընդեամբ սուրբ աւազանին մի բարկութեամբ խրատեր, և մի սրտմտութեամբդ քով յանդիմաներ. ի յորժամ հրաշալի . . . :

---

Դ.Ձ: Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր բանդ Աստուած, Թողութիւն շնորհեա ննջեցելոց, քոց ծառայից. յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր: Որ ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի սուրբ կուսէն. Թողութիւն շնոր . . . : Որ ի խաչին

անշնչացար, զմահու լուծեր զիշխանութիւն. թող . . : Որ պատկերդ ես քոյ որդոյ, և անխախտան բարեաց բաշխող. Թողութիւն շնորհ . . . :

## ԱԼԵԼՈՒԻԱՅՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ
## ԸՍՏ ՈՒԹ ՁԱՅՆԻՑ

Ա.ձ. Ալէ . . . ալէ . . . Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս:

Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ:

Ա.կ. Բարձր առնեմ զքեզ Տէր՝ զի ընկալար զիս, և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս:

Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ՝ և բժշկեցեր զիս. Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ, և փրկեցեր զիս յայնցանէ՝ որք իջանեն ի գուբ:

Բ.ձ. Աստուած յանուան քում կեցո՛ զիս, և ի զօրութեան քում իրաւ արա ինձ:



Աստուած, լուր աղօթից իմոց, ունկն դի՛ր բանից բերանոյ իմոյ:

Բկ.– Աստուած, ողորմեա մեզ և օրհնեա զմեզ.
երեւեցո՛ զերեսս քո ի մեզ և ողորմեա մեզ:
Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազինս ամենայն զփրկութիւնս քո:

Գ.ձ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ:

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Գկ, Տէ՛ր, լո՛ւր աղօթից իմոց՝ աղաղակ իմ առ
քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն:
Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո՛ առ իս զունկն քո.
յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ:

Դ.ձ. Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո Տէր,
ըստ բանի քում իմաստուն արա զիս:
Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, և բանիւ
քով փրկեա զիս:

Դկ. Ի խորոց կարդացի առ քեզ Տէր, Տէր, լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։

Սրկ. Ալէլուիա օրթի։

Քհ. ( Ընթեռնու զաւետարանն հանգստեան )

---

## ՇԱՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԿԱՐԳԻ

### ՆՆՋԵՑԵԼՈՑ

Դ.Ճ.— Անըսկիզբն Աստուած, սկիզբն արարչութեան, ի հողոյ ստեղծեր զմարդն առաջին, գործել և պահել յանպատում ի կեանս. խակ ի ստունգանել հրամանի քո Տէր. զմ՜իւ մահու ի վերայ եղեալ, հող էիր անդրէն և ի հող դարձցիս, և այժմ աղաչեմք զստեղծողդ ամենից, ընկալ և հանգո՛ զհրաժարեալ հոգիս, յեօթնաստեղեան լուսեղէն խորանս, ուր ժողովքն են սրբոցն ի խաղաղութեան. հոգւով հեզութեամբ յերկնից բարութիւնն։ Ոսկի եղեալս անպիտանացայ, գեղեցկայարմար շինուածոյս քակտումն, իմաստունս յիմարացայ, ի յալեաց մեղաց յոր ընկղմեցայ. և այժմ. . . Կոչողն եհաս, վերին կոչողին, կոչնատէրն ահեղ, կոչողն ահաւոր, դատաւորն անաչառ, դատաստանն արդար,



հրեշտակք անողորմք դատեն զմեղաւորս, և այժմ աղաչեմ , . .

---

## ՁԿՆԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԱԻԵՏԱՐԱՆԻ

Փառաց ի փառս բարձրանեան, աջակողմեանքն վերանեան, յորժամ լսեն զերանական ձայն օրհնութեան ի քէն կոչման, ննջեցելոյս մեր լսել զԱստուածային բարբառդ քո, դասաւորեա զսա վերնոցն երգել զփառս ընդ զուարթնոցն։

Բաճանայք և ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր բարեգութ, ընդ ննջեցեալսն հաւատով, ընկալ զմեզ նովին յուսով։ յԵրուսաղէմ քաղաք վերին յորում արդարքն ժողովին, փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին։

Ի վերինն Երուսաղէմ. ի բնակարանըս հրեշտակաց, ուր Ենովք և Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, ի դրախտին եդեմական պայծառացեալ արժանապէս, ողորմած Տէր ողորմեա, հոգւոցն մեր ննջեցելոց։

Քհ. Հոգւոցն հանգուցելոց Քրիստոս Աստուած, արա հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւորացս շնորհեա զքաւութիւն և զթողութիւն յանցանաց։

Սրկ. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս, զի ընդ արդարն դասեսցէ և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր. կեցո և ողորմեա։

Քհ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Քրիստոս, որդի Աստուծոյ, անոխակալ և բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Մանաւանդ յիշեա Տէր զհոգիս . . . . . . . . . . . . . . . . . . . . . որոց վասն մատուցաք զպաշտօնս և զպաղատանս զայս։ Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քո. արա արժանի ողորմութեան, քաւութեան և թողութեան մեղաց։ Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն։ Զի դու ես Տէր և արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Սրկ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան մեր։

Քհ. Օրհնեալք եղերուք ի շնորհաց սուրբ հոգւոյն, երթայք, հանգերուք խաղաղութեամբ, և Տէր Յի-



սուս եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանս ամէն։

## ՇԱՐԱԿԱՆ ԳՉ.

## (Ի ՊԷՏՍ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԱՒՈՒՐՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՅԱՒԱՐՏ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ)

Այսօր քահանայապետ ճշմարիտ Աստուածային օրինօքըն պատուեալ. կանգնէ զքաւանկիւն սեղան խաչին. արժանապէս պատարագեալ բաշխէ զմարմին և զարիւնըն Տեառն. մաքրապէս մերձեցարուք փըրկեալք նոր ժողովուրդք. և հայցեցէք ի Քրիստոսէ զի շնորհեսցէ ըզսա մեզ ընդ երկայն աւուրս։

## ԿԱՆՈՆ ԽԱՉԱՀԱՆԳՍՏԻ

## ՇԱՐԱԿԱՆ ԳՃ.

Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի, սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։

Քանզի ի սմա բարձրացար Աստուած, և ի սմա

Հեղեր զպատուական սուրբ զարիւնդ, սա պահեսցէ . . .

Եւ զքո միւսանգամ զգալուստդ նշանաւ խաչի քո

ցուցեր աշխարհի, սա պահեսցէ զմեզ . . .

Աստուած մարդասէր որ զմաքսաւորն արդարացուցեր. քաւեա զիս զմեղաւորս:

Որ զգանձիւ հանդերձի քո զմերձեցեալն ի քեզ բժշկեցեր. քաւեա զիս զմեղաւորս:

Որ բանիւ հրամանի քո, զանդամալոյծն առողջացուցեր, քաւեա զիս զմեղաւորս:

Որ զանազան վիրօք մեղաց հարաք յոգիս ի Թըշնամւոյն. և ի բազմապատիկ հիւանդութիւնս կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ զցաւս մեր. վասն որոյ բըժշկեա զմեզ Քրիստոս, որպէս մարդասէր:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Առ քեզ ապաւինիմք, Ամենասրբուհի, գերագոյն և հրաշալի և բաշխող բարութեանց. աղբիւր ես ծարաւեաց և հանգիստ աշխատելոց. և եղեր վերընկալ աստուածային բանին:

Այժմ և միշտ և յաւիտեանս . . .

Քհ. Սրբեա, Տէր, զմեղուցեալ քոյ ծառայիդ զգայարանս, և շնորհեա տեսանել զքեզ, և լսել զհայրական զձայն, եթէ դա է որդի իմ սիրելի:

Դպ. Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Քհ. Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս նշանաւ



սուրբ խաչիւս և սուրբ աւետարանաւս (և սուրբ կենաց փայտի մասամբս) (և սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի մասամբս) և յաւուրս շնորհիւ, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Դպ. Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:
(Երիցս կրկնեա. 3րդ անգամ կրկնուած ատեն «անուամբ Հօր»էն առաջ պէտք է աւելցնել հետևեալ նախադասութիւնը. եղիցի բժշկութիւն և փարատումն ամենայն ցաւոց հաւատացելոց, անուամբ Հօր . . .)

Դպ. Ամէն:

Քհ. Օրհնութիւն և փառք. ·

Դպ. Տաճար են սուրբ հոգւոյն, կենդանի ոսկերք սոցա հիւանդաց բժիշկ, աղաչեսցուք զՏէր սոքօք խնայեա ի մեզ:

---

Սոքա են դեղ կենաց, պարգևեալ մեզ ի Քրիստոսէ ի բժշկութիւն, պատուական սուրբ արեամբն իւրեանց:

---

Սա է կարապետ յաւուր գալստեան փրկչին, և

պսակ պարծանաց հաւատացելոց, և սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:

Գաւազան զօրութեան զխաչ քո ետուր մեզ Քրիստոս. և սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:

Սրկ. Վասն հիւանդաց և ամենայն վշտացելոց աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց. և կատարեալ առողջութեամբ հաստեսցէ զամենեսեան ի մշտնջենաւոր և յանախտ կեանս: Որ առաքեցաւ ի հօրէ ի բժշկութիւն ազգի մարդկան՝ միածին որդին Աստուծոյ. Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, կեցո՛ և ողորմեա:

Քհ. Փարատեա զցաւս և բժշկեա զհիւանդութիւնս ի ժողովրդենէ քումմէ Տէր Աստուած մեր, և շնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչիւ քով. որով բարձեր զտկարութիւն ազգի մարդկան, և զատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ: Դու ես կեանք մեր և փրկութիւն՝ բարերար և բազումողորմ Աստուած. որ միայն կարող



ես թողուլ զմեղս՝ և մերժել զախտս և զհիւանդութիւնս ի մէնջ. որում յայտնի են պէտք կարեաց մերոց. պարգեւիչդ բարեաց՝ պարգեւեա զառատ ողորմութիւն քո ի վերայ արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից. յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ երրորդութիւնդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Սրկ. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ, ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա:

Քհ. Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր պահեա, պահպանեա և օրհնեա զհաւատացեալ և զբարեպաշտ հայկազուն ժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան. փրկեա, ազատեա յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն և ի փորձութեանց: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Սրկ. Օրհնեցից զՏէր . . . տե՛ս էջ 180

Քհ. Օրհնեալ եղերուք . . . տե՛ս էջ 180

# ԿԱՆՈՆ
# ՑՕՆԱԿԱՆ ԱՒՈՒՐՑ
# ՇԱՐԱԿԱՆԱՑ

## ՕՐՀ. Դկ. ԾՆՆԴԵԱՆ

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ: Հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի: Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի, Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ. Ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ: Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեօք. Եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան: Այսօր յայրին ընծայեցաւ Քըրիստոս որդին Աստուծոյ. Եւ հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ: Այսօր հովուացըն աւետեալ զարդարութեան արեգակն. Եւ ընդ հրեշտակս երգէին փառք ի բարձունս Աստուծոյ: Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս. Արդարութեան արեգակն Տէր փառըք քեզ: Ծընար ի յայրին ընծայեցաւ



Բեթղեհէմ: Արդարութեան արեգակըն Տէր փառըք քեզ: Հովուացն յայտնեցար երկրպագելոյ ի մոգուց. Արդարութեան արեգակըն Տէր փառըք քեզ: Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմնացար. Արդարութեան արեգակն Տէր փառըք քեզ:

---

Հրց. Գձ, Անսկիզբն էակից բանըդ Հօր· որ էիր յառաջ քան զյաւիտեանս. և եկիր ի փրկութիւն ըստեղծուածոց քոց· ընդ քեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց: Ծընար ի կուսէն անճառ միութիւն. անբաժանելի և միշտ գոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ. ընդ քեզ օրհնեմք . . . Ցնծութեամբ տօնեսցուք ըզծընունդ քո սուրբ, որ յայտնեցար մեզ լոյս ի լուսոյ եւ լուսով քով լցեր զտիեզերս. ընդ քեզ օրհնեմք . . .

Գործք Տեառն զՏէր օրհնեցէք, և բարձր արարէք զնա յաւիտեան:

Ըզծնեալն ի սրբոյ կուսէն օրհնեցէք. բարձր արարէք զնա յաւիտեան. Զանճառելի զծընունդ փրըկչին գովեցէք, և առաւել բարձր արարէք ըզնա յաւիտեան:

## ՏԱՂ. ԵՒ ԹԱՓՕՐԻ ՇԱՐ. Ս. ԾՆՆԴԵԱՆ

Այսօր տօն է սուրբ ծընընդեան Աւետիս.
Տեառն մերոյ և յայտնութեան »
Այսօր սուրբ կոյսն անապական »
Ծընաւ եբեր զանմահ արքայն »
Այսօր արևն արդարութեան »
Երևեցաւ ի մէջ մարդկան »
Այսօր հրեշտակք յերկնից իջեալ »
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն »

Տէրըդ սիրով խոնարհեցար »
Յարգանդ կուսին բընակեցար »
ԶԱդամային մարմին զգեցար »
Եւ աշխարհի լոյս ծագեցար »

Ի յանարատ կուսէն ծընար »
Ի խանձարուրս պատեցար »
Ի յանբանից մսուր եդար »
Եւ ի մոգուցըն պատուեցար »

Քառասնօրեայ ընծայեցար »



Ըստ օրինաց դու ի տաճար Աւետիս
Փակեալ դրան բացող ցուցար »
Ի Ծերունւոյն անդ գգուեցար »

Ի Յորդանան մկրտեցար »
ՅԱստուած հօրեդ վկայեցար· »
Ի Յովհաննէ քարոզեցար »
Գառն Աստուծոյ անուանեցար, »

Ի վերնատունն բազմեալ եղեր, »
Զահեղ խորհուրդն աւանդեցեր, »
Զաշակերտացդ զոտըս լուացեր, »
Խոնարհութեան վարս ուսուցեր: »

## ՕՐՀ. Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Շար. Գ.Ձ: Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի սուրբ կուսէն. զի վերըստին նորոգեսցես զապականեալն Ադամ: Դու Աստըւած ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար. և փրկեցեր ըզտխեղերըս յանիծից Ադամայ: Քեզ ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն, սա է իմ որդի. և սուրբ Հոգին զքեզ յայտնեաց աղաւնակերպ երևմամբ:

Զքեզ որ հոգւով և հրով մաքրեցեր զմարդկան ապականութիւն, որպէս զԱստուած և փրկիչ ամենեքեան օրհնեսցուք: Փրկիչն երևեցաւ և զաշխարհս ապրեցոյց ի պատրանաց թշնամւոյն, որդեգրութիւն շնորհելով ի ձեռն մկրտութեան: Ջրով կլլու զմեղս մեր այսօր երևեալ ապրեցուցիչն, և զլուացուցանէ զաշխարհս աստուածային ջրովն:

Զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց ի յորդանան ի գետն, և ինքեան իշխանութեամբ զամենեսեան ապրեցոյց: Զհին մարդն նորոգելով փրկիչն ի մկրտութիւն գայ այսօր, զի զապականեալ զբնութիւնս ջրովն նորոգս գործեսցէ. անապական զգեստ փոխարէն տալով մեզ: Մկրտի Քրիստոս և սրբին ամենայն արարածք. և տայ մեզ թողութիւն մեղաց. ջրով և հոգւով վերասրբելով ըզմեզ:

---

## ՔԱՐՈԶ ՋՐՕՐՀՆԷՆՔԻ

Գկ. Յամենայն ժամ օրհնեմք զօրհնեալ փրկիչդ Էմմանուէլ, ծնեալ ի կուսէն, և վերստին ծննդեամբ մկրտեցար ի Յորդանան ի Յովհաննէ, նորին բարեխօսութեամբ ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից. աղաչեմք: Լուր Տէր և ողորմեա:



Որ սրբեցեր զջուրսն Յորդանանու սրբիչդ աշխարհի, տալով զկնիք նորոգման որդւոց Սիոնի. տուր մաքրութիւն սուրբ եկեղեցւոյ և ազատութիւն քում ժողովրդեան. աղաչեմք:

Հեղցես Տէր ի մեզ ըզշնորհս հոգւոյդ, զոր ընկալար տնօրէնութեամբ ի Յորդանան, զհոգի իմաստութեան, զգիտութեան և զօրութեան, զհոգի հանճարոյ և խորհրդոյ, աստուածպաշտութեան, լցո զմեզ Հոգւով երկիւղի քոյ, աղաչեմք:

Եւ ևս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգևել մեզ խնդրեմք:

Տուր մեզ Տէր Աստուած:

Գոչմամբ Տիրուհւոյ խնկապէս Մօր քոյ և կուսի Մարիամու Աստուածածնի. և հուպ եղելոյ քեզ հողանիւթ հրեշտակին ի Յորդանան այսօր զջեղ ձեռնադրողին, կրկին բացողին զերկինս սրբոյն Ստեփաննոսի նախավկային. և հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և ամենայն սրբոց քոց Տէր որք յաւիտենից քեզ հաճոյացան. աղաչեմք:

Տէր ողոր. Տէր ողոր. Լուր Տէր և ողորմեա:

---

## ԵՐԳ ՋՐՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Ո՜վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ.
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ,
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
Զառնոյր Կարապետն զմկրտելն ի յանձն.
Յորդանան լուեալ փախստական դառնայր
Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր։
Գետ մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես,
Եկեալ մկրտիմ և լուանամ զմեղս։

Այսօր ձայնն հայրական յերկնից իջեալ հաճոյական սիրեցելոյ որդւոյ վկայն. ա՜յ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան։ Աւետաւոր ձայնիւ երգէր մեծ Կարապետն Յովհաննէս։

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ԵՐԵԿՈՅԻ

Հմբ. Ա՟ձ. Մարմնացեալդ ի կուսէն նախայաւիտեան բանդ, այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս, վասն փրկութեան հեթանոսաց։ Որ յանարուեստ աթոռ նստիս բարեբանեալդ ի հրեշտակաց այսօր ի Սիմէօնի բառնալոյ ի գիրկս. որ ընծայեցես զմեզ ի



կեանըդ յաւիտենից։ Որ արձակիչդ ես կապելոց պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զբաղմամեղս ի կապանաց մահու ի կեանըդ յաւիտենից։

Օրհ. Դ՟ձ. Այսօր անսկզբնական ծնունդ հայրական ծոցոյ. բանն եկաւորեալ ի տաճարն ընծայէ զարարածըս հօր ի յերկինս։ Այսօր բարձեալ եղեւ ի գիրկըս ծերունւոյն, որ բանիւ զարարածըս բարձեալ ունի օրհնաբանեսցուք։ Այսօր և մեք հաւատացեալքս ընդ ծերունւոյն Սիմէօնի, ըզբանն համագոյ հօր և սուրբ հոգւոյն օրհնաբանեսցուք։ Այսօր ի տաճարն եկեալ կենարարն և ի գիրկըն Սիմէօնի գգուեցաւ. զոր խնդութեամբ ընկալաւ Երուսաղէմ։ Այսօր երկիրս երկինք անուանեցաւ. զի Տէրըն տէրանց իջեալ յերկնից ի յերկիր. և ընծայիլ յանձն առնու ի գործոց ձեռաց իւրոց։ Այսօր հեթանոսաց լոյս ծագեցաւ Քրիստոս Աստուած և փառք իւրում ժողովրդեանն Իսրայէլի։

Հրց. Դ՟ձ. Օրհնեմք ըզքեզ որ առաքեցար ի հօրէ անճառելի բանդ Աստուած յանձն առեր մարմնանալ ի սրբոյ կուսէն. Աստուած հարցըն մերոց։ Այ-

սոր եկիր ի տաճարն անհասանելի փրկիչ. և ի գիրկսըն Սիմէոնի գգուեցար. Աստուած հարցըն մերոց:
Ուստի և Սիմէոն հոգևոր հնչմամբ աղաղակէր. արդ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն. Աստուած հարցըն մերոց:

Ըզտէր օրհնեցէք և բարձր արարէք ըզնա յաւիտեան: Ըզծնեալըն յամենասուրբ յորովայնէ յանարատ ի կուսէն օրհ . . . Զեկեալն այսօր ի տաճարն, զընկալեալն ի գիրկսըն Սիմէոնի. Օրհնե . . . :

Մեծ.- Աթոռ քրովբէական երևեալ այսօր սիմէօն. զԱստուածորդին ի գիրկս իւր բարձեալ մարմնով. զոր զօրք երկնից ի բարձունս հանապազ մեծացուցանեն: Հոգւովն գոչէր ցընծայր ալեօքըն ծերունին ասելով. սա է թագաւորն անմահ, զոր զօրք . . . Արտասուելով աղերսէր, արձակեա զիս ի խաղաղութիւն, անարատ ծնողի քո բարեխօսութեամբ. զոր . . :

Ողբ. Որոյ առեալ հրաման ի սուրբ հոգւոյն ոչ տեսանել ըզմահ մինչև տեսցէ զօծեալդ, Տէր աղօթիւք ծերոյն ողորմեա: Որոյ ընկալեալ ի գիրկս իւր զօծեալդ, և հայցէր ի կենացդ զմահ, և արձակիլ ի խաղաղութիւն. Տէր . . : Յորոյ այսօր ի գիրկսըն գգուեցար. և



կատարեցեր զփափաքումն ընծայելոյ քո ի տաճարին, Տէր աղօթիւք ծերոյն ողորմեա:

Տէր.- Զոր փառաբանեն ի բարձունս իմանալի զօրութիւնք. այսօր ի տաճարն եկիր յընծայումն Քրիստոս, որ ընծայես զարարածս բարձրելոյ քում Հօր: Ի գիրկըս մարմնով բարձեալ եղեր ի ծերունւոյն, որ բանիւ զարարածս բարձեալ ունիս Քրիստոս, որ վասն մեր մարմնացար ի սրբոյ կուսէն: Վասն որոյ և մեք ընդ սիմէոնի գոչեսցուք, որ ի հօրէ լուսոյ լոյս ծագեցար մեզ և կեանք. փառք գալստեան քո Տէր:

---

## ՏԱՂ.

Քրիստոս փառաց թագաւորն, այսօր եկեալ յընծայումն: Կատարելով նա զօրէնս քառասնօրեայ գալստեամբն: Զոր մարգարէն Եսայի յառաջագոյն գուշակեաց յԵրուսաղէմ քաղաքի Սիմէոնի ծերունւոյն:
Ի գիրկս առեալ ծերունւոյն զԱստուածորդին և ասէր.

Մեծ աւետիս է այսօր Նահապետաց ամենից:
Մեծ աւետիս է այսօր Մարգարէից ամենից.
Մեծ աւետիս է այսօր Առաքելոց ամենից.

Մեծ աւետիս է այսօր Քահանայից ամենից.
Մեծ աւետիս է այսօր ժողովրդոց ամենից։
Այլ մեծագոյն աւետիս՝ Քրիստոնէից համայնից։

Քարոզ։ Խնդրեսցուք։ Կեցո։

Շար. Բկ. Ի գալստեան Տեառն դրունք երկնից բանին. և ճառագայթիւք անճառ լուսով սուրբ խաչն երեւի։ Ցերեւաց Տեառըն լերինըք հալին, և ի յահէ փառաց նորա շարժին զօրութիւնք։ Աւետեօք Տեառըն մեռեալըք յառնեն. և սուրբք ամենայն անճառ փառօք պարդարին։

## ՕՐՀ. ԵՒ ՀՄԲ. ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ

Դկ. Բանն որ ընդ Հօր յէութեան և Համագոյ սուրբ Հոգւոյն. զպատկերն իւրական խառնեալ ընդ հողանիւթ բնութեանս, զոր զարդարեալ փառօք եղ ի դրախտին փափկութեան։ Յորում ցընծայր զուարճացեալ անտըխրական խնդութեամբ. քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեալ ի դրախտին. յորմէ զլուսոյն ճառագայթ տպաւորէր ի յինքեան։ Վասն որոյ



աղաչեա մայր Աստուծոյ Մարիամ, զմիածին քո զորդին. զի շնորհեսցէ ըստ աւազակին ժառանգել վերըստին մեզ զդրախտին վայելչութիւն։

Այսօր յօրինակ նախաստեղծին Ադամայ որ ի դրախտին փափկութեան ուրախանայր ընդ հրեշտակս. ցնծասցուք և մեք ի յօրհնութիւնս հոգևորս։ Այսօր ի խորհուրդ աստուածաստեղծ նախահօրն. որ ի պըտղոյն ազինայ ճաշակելով զուարճանայր, ճաշակեսցուք և մեք ըզպատուիրանս Աստուծոյ։ Այսօր ի տիպ պատմուճանին առաջնոյ, որով պճնեալ զարդարիւր ի փառս մարդն առաջին. զարդարեսցուք և մեք Աստուածային օրինօք։ Ցնծա Մարիամ արեգականն արդարութեան արեւելք. և աղաչեա զառ ի քէն ծնընեալն Աստուած վասն մեր. զի դարձուսցէ վերստին զմեզ ի դրախտին ժառանգութիւն։

## ԵՐԳՔ ԱՐԵՒԱԳԱԼԻ

Ցարեւելից մինչ ի մուտս, ի հիւսիսոյ և ի հարաւոյ. ամենայն ազգք և ազինք, յօրհնութիւն նոր օրհնեցէք զարարիչն արարածոց, որ ծագեաց զլոյս արեգականն այսօր յաշխարհս։

Եկեղեցիք արդարոց, փառաբանիչք ամենասուրբ երրորդութեանն. յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս գովեցէք ընդ Հօր և Հոգւոյն. որ ծագեաց ըզլոյս գիտութեան իւրոյ ի մեզ։

ՅՈՐԴՈՐԱԿ

Յարեւելից յարեւմուտս մանկունք սիոնի. օրհնեցէք միշտ անդադար զծագողն լուսոյ։

Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք. բարեբանեցէք որ ետ զիմաստս լուսոյ։

( ԲԱՐՈԶ, ԱՂՕԹՔ, ՍԱՂՄՈՍ, )

Ճգնաւորք Աստուծոյ, և ժառանգորդք երկնից արքայութեանն. որք փոխանակեալք զանցաւորս աւուրց զանանցն բարութիւնն. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ։

Նահատակք պանծալիք, և սիրեցեալք ի յերկնաւոր Հօրէն. որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին. բարեխօսեցէք առ . . .

Մարտիրոսք ցանկալիք և օծեալք Հոգւոյն Ճշմարտութեանն. որք յաղթեցիք Հոգւով կարեաց և



ցանկութեան. բարեխօսեցէք առ Տէր . . :

Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոյն պետութեանց. որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարեխօսեցէք առ Տէր . . :

Կամաւոր պատարագք. մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ. որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ. բարեխօսեցէք առ Տէր . .

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճգնաւորք Ճշմարիտք վկայք Քրիստոսի. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց։

Նահատակք կենդանիք սիրողք Քրիստոսի. որք չարչարեցայք մարմնով վասն անուանն Տեառն։

Մարտիրոսք ցանկալիք մարդկան ըղձալիք. հայցեցէք ի սուրբ Հոգւոյն տալ մեզ զբարիս։

Գովելիք վերնոյ դասուց. պարծանք աշխարհի. խնդրեցէք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ։

Կամաւոր սուրբ պատարագք հասակաւ մանկունք. հայցեցէք լինել և մեզ՝ Ձեզ պսակակից։

Մաղթանք, Քարոզ, աղօթք, Սաղմոս, Ած. Ած. խմ. . .

Լոյս արարիչ լուսոյ առաջին լոյս, բնակեալդ ի լոյս անմատոյց, Հայր երկնաւոր, ի դասուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս. ծագեա ի հոգիս մեր զլոյս Քո իմանալի։

Լոյս ի լուսոյ ծագումն արեգակն արդար.անճառ ծնունդ Հօր որդի. յառաջ քան զարև անուն Քո գոլեալ ընդ Հօր. ի ծագել լուսոյ . . :

Լոյս ի Հօրէ բղխումն աղբիւր բարութեան. Հոգիդ սուրբ Աստուծոյ, մանկունք եկեղեցւոյ ընդ Հրեշտակս զՔեզ բարեբանեն. ի ծագել լուսոյ . . .

Լոյս երրեակ և մի անբաժանելի սուրբ երրորդութիւն. զՔեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք. ի ծագել լուսոյ . . :

ՅՈՐԴՈՐԱԿ

Անեղանելիդ Աստուած Հայր ամենակալ. ընկալ զաղաչանս մեր Քոց պաշտօնէից։

Ի Հօրէ ծագումն անճառ արեգակն արդար. ծագեա ի յանձինս մեր զլոյսդ ողորմութեան։

Ի Հօրէ բղխեալ Հոգի, աղբիւր բարութեան. լուսով Քով լցո զմեզ յայսմ առաւօտուս։

Երեք անձինք և մի բնութիւն, մի աստուածու-



թիւն. զՔեզ խոստովանիմք յաւէտ սուրբ երրորդութիւն։

( Մաղթ. Քարոզ. Աղօթք. Սաղմոս, Տէր Հով. . )

Ճանապարհ և ճշմարտութիւն, և կեանք Քրիստոս, առաջնորդեա հոգւոց մերոց, յերկրէ ելանել յերկինս։

Դուռն կենաց մտից Յիսուս. մոյծ և զմեզ առ Հայր Քո և Հոգի. երգել միշտ ընփառս։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճանապարհ բարի Քրիստոս և ճշմարտութիւն. առաջնորդ հոգւոց մերոց, յերկրէ ելանել յերկինս։

Դուռըն կենաց մտից Յիսուս. Աստուած ճշմարիտ. մոյծ և զմեզ առ Հայրդ Քո, Հոգւովդ սրբով։

( Մաղթանք. Քարոզ. ԵՒն։ )

## ԵՐԳ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄՈՒ

Շնորհեա մեզ, Տէր, ի գիշերի զերկնային զխաղաղութիւն Քո. և պահեա զմեզ ի պատրանաց Թըշ-

նամւոյն՝ ամենայաղթ զօրութեամբ սուրբ խաչի քո։ Տէր Աստուած փրկութեան իմոյ ի տուէ կարդացի և ի գիշերի առաջի քո։ Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեցի ունկն քո ի խնդրուածս իմ։ Եկեսցէ առ մեզ, Տէր,պահապան ի քէն, և պահեսցէ զմեզ յամենայն ժամ։ Առաքեա ի մեզ, Տէր զզօրութիւն սրբոյ խաչին՝ որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ։ Արժանի արա, Տէր, զերեկս զայս խաղաղութեամբ և առանց փորձութեան անցո զմեօք։ Արժանաւորեա, Տէր, զգիշերս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահելով զմեզ։ Ընդ մեզ Տէր Աստուած՝ գիտասջիք հեթանոսք և պարտեցարուք. զի Աստուած ընդ մեզ է։ Եւ լուարուք զայս ի ծագաց մինչև ի ծագս երկրի. զի . . . Եւ հզօրացեալքդ պարտեցարուք զի . . Եւ զի թէպէտ և դարձեալ զօրանայք, դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք. զի . : Եւ զխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ Տէր. զի . , Եւ զբանն զոր խօսիք՝ մի՛ մնասցէ առ ձեզ. զի . . Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք, և ո՛չ խռովիցուք. զի . . Եւ զՏէր Աստուած մեր փառաւոր արասցուք, և նա եղիցի մեզ յերկիւղ. զի . . Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա, և նա եղիցի մեզ ի սրբութիւն. զի . . Եւ յուսացեալ եղի-



ցուք մեք ի նա, և նա եղիցի մեզ ի փրկութիւն, զի . . . Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած. զի . : Եւ ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝ ետես զլոյս մեծ. զի . . Եւ որ բնակեալքդ էք ի խաւարի և ի ստուերս մահու, լոյս ծագեսցի առ ձեզ. զի . . Եւ քանզի մանուկ ծնաւ, որդի և տուաւ մեզ. զի . . Եւ որոյ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց. զի . . Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդոց հրեշտակ, զի . . Եւ սքանչելի խորհրդակից. զի . . Եւ Աստուած հզօր իշխան. զի . . Եւ իշխան խաղաղութեան հայր հանդերձելոյ յաւիտենին. Տէր Աստուած ընդ մեզ է։ Եւ փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

## ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ

Բձ. Նայեաց սիրով հայրըդ գթած ի քո ստեղծեալ գործս ձեռաց. և զբանակըս հրեշտակաց տուր պահապան մեզ օտարացս. փրկեա զանձինս ի փորձանաց ի խաւարի շրջող դիւաց. զի ի տուընջեան և գիշերի տացուք քեզ փառս անլըռելի։

Էին անեղ անըսկզբեան ծնունդ անճառ որդի և բան. որ արարեր զտիւ գործոյ և զգիշեր ի հանգիստ քնոյ. տուր ի ննջել աչաց մարմնոյ արթուն լինել մեզ ըստ հոգւոյ. զի . .

Բանուն հոգւոյ բանաւորաց աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց. ի փակել դրանց բնութեանց մարմնոյ լոյս տուր աչաց սրտից մերոց. ի գիշերայ առ քեզ կանխել ընդ հրեղինացն օրհնաբանել. զի , .

Սուրբըդ սրբոց Երրորդութիւն զմեզ մաքրեա քեզ բնակութիւն. շնորհեա ընդ մանկանցն առաւօտի, հանգչել ընդ քեզ ի յանկողնի. տուր ըղհայցուած բարեկամին զփոխ երից նկանակին. զի . .

Երեւելի լոյս ստեղծեր. զտիւ և զգիշեր բաժանեցեր. ծագեա մեզ Տէր ի գիշերի ըղճառագայթս իմանալի. տուր յամենայն ժամանակի զպահպանող աջ քո հովանի. զի ի տուընջեան . .

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր բորբոքեսցի ի հոգիս մեր. զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ զլոյս գիտութեան քո փայլեսցէ. ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ զմիտս բոցով քո վառեսցէ. զի . .



Ի քեզ նայիմք լոյս անմատոյց ի զգայական ծածկեալ լուսոյ, որ վասն մեր եղար ի գբի և ննջեցեր ի տապանի. առ մեզ ննջեա արթուն բնութիւն հերքեա զչարին ներգործութիւն. զի . .

Էիդ լուսոյ անըստուերի պաղատանօք կամք առաջի. որ փակեալ զդրամբք յերեկոյին, երեւեցար մետասանիցն. ընդ Թովմայի առ քեզ գոչեմք. Տէր և Աստուած զքեզ դաւանեմք. էջ և առ մեզ յերեկոյիս և տուր զողջոյն քո ի հոգիս։

Բամեալքս զքեզ Տէր աղաչեմք մեզ յօգնութիւն նայեա հայցեմք. պահապանդ խորալէլի անձանց մերոց լեր հովանի. օթեա առ մեզ խաղաղարար և ննջեսցուք անխռովաբար. զի ընդ առաւօտս կանխեսցուք օրհնել զքեզ ընդ Հօր Հոգւով։

Գոչման փողոյն Գաբրիէլի որ ի վերջնումն գիշերի. լսել արա զմեզ արժանի և աջակողմն օղեաց դասի. անշէջ վառեալ լոյս լապտերաց ըստ իմաստուն հինգ կուսանացն. զի ընդ փեսային ի յառագաստ հարսանիք հոգւով մտցուք ի փառս։

Հալածեա ի մէնջ, Տէր, նշանաւ խաչի քո զընդդիմամարտ և զաներեւոյթ զաղանն. և մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնս։

Բարեխօսեա վասն մեր Աստուածածնին Մարիամ. որ ծնար զՏէր Աստուած որ հովուէրն զԻսրայէլ. ամենազօր և սքանչելի փառօքն իւրովք։

Գ.Ճ. Ի քէն հայցեմք հայր գթութեանց և Աստուած մխիթարութեանց. ի տխրական գիշերային մերձեալ ժամուս. մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց, և շնորհեա զուրախութիւն գործովք արդարութեան. աղաչանօք սուրբ Աստուածածնին և ամենայն արդարոց։

Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչման որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք և ծանրաբեռնեալք. թեթևացո ի ծանրութեանց մեղաց զանձինս. և զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոյ պատուիրանաց. աղաչան . .

Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս մարդասէր հոգի Աստուծոյ. յորժամ նորոգես զերեսս երկրի, և վերստին ստանաս զոգիս մարդկան. նորափետուր զարդարեա զննջեցեալսն մեր զծնեալսն ի քէն սուրբ աւազանաւն. աղաչա . .

Զկենդանագիր անարատ ծնողի քո. արկանեմք առաջի անախտակալ տէրութեանդ քո. յորժամ գաս փառօք հօր դատել զթըշնամին խաչի քո. ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և կուսի. աղաչեմք զքեզ Տէր պահպանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ։



Հաղորդս արա և զմեզ Տէր. ընդ սրբոց քոց առաքելոցն. որք արժանի եղեն տեսանել զՔեզ ի յարութեան Քո. արժանաւորեա Տէ՛ր, տեսանել զՔեզ ի միւսանգամ Քո գալստեանն. օրհնութիւն առաքողին ի բարձունս։

Ի նըստիլ Քո յատենի, դատաւոր ահեղ, աղաչանօք սուրբ Աստուածածնին յիշեա զննջեցեալսն մեր, յորժամ գայցես անճառ փառօք. քանզի Քո են փառք յաւիտեանս ամէն։

## ՕՐՀ. Գ.Ճ. ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ

Որ զօրէնըս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր. զոր ոչ պահելով նախաստեղծիցըն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին զդառնութիւն մեղաց և մահու. վասն որոյ շնորհեա մեզ Տէր ճա-

շահել զքաղցրութիւն քոյ պատուիրանաց: Որ զանապան վիրօք մեղաց հարաք հոգիս ի թշնամւոյն, և ի բազմապատիկ հիւանդութիւնս կարօտացաք մարդասիրին բառնալոյ զցաւըս մեր, վասն որոյ բժշկեա ըզմեզ Քրիստոս որպէս մարդասէր: Որ եկիր ի փըրկութիւն մարդկան ծնընդեամբ կուսին Մարիամու և կենդանարար քո յարութեամբդ հրաւիրեցեր ըզմահացեալսն ի յարութիւն անմահութեան. վասն որոյ աղաչանօք մօր Քո կեցո զմեզ փըրկիչ:

Որ գերագոյն փառօք բարձրացուցեր զմանկունս եկեղեցւոյ Քո Քրիստոս. խոնարհութեան Քո ճանապարհաւ առաջնորդելով ի յերկնային վայրըս հրեշտակաց. աղաչեմք առաջնորդեա մեզ Տէր ի յարդարութիւն: Որ զդառնութեան պտղոյն ճաշակն որով մեռաք արդարութեան, պահելով Քո քառասնօրեայ փոխեցեր ի քաղցրագոյն օրինաց Քոյ ճաշակումն. աղաչեմք արբո մեզ Տէր զուրախարար սիրոյ Քո զբաժակ: Որ անապական ծնընդեամբըդ Քո լուծեր զերկունս նախամօրն, Մարիամ մայր Աստուծոյ. բարեխօսեա առ միածին որդին լուծանել զկապանըս մեղաց մերոց. և աղաչեա փըրկել զանձինըս մեր ի փորթենէ:



## ՕՐՀ. ԳԿ. ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ

Օրհնեմք ըզքեզ անըսկիզբըն հայր որդւոյդ միածնի, զոր առաքեցեր ի դարձումն մոլորեալ ոչխարին, դարձո և զմեզ ի մեղաց որդւոյ քո չարչարանօք: Գովեմք զքեզ բան և լոյս, որ զտիրական քո պատկեր լուսով ճրագի քո գտեալ վերականգնեցեր. կանգնեա զանկեալքս մեղօք քոյին սուրբ չարչարանօք: Բարեբանեմք զխառնակիցըդ հօր զհոգին ճշմարիտ, որ նորոգեցեր ըզհնացեալքս մեղօք հընոյն Ադամայ. նորոգեա և զմեզ ի մեղաց նորոգութեամբ քո շնորհաց: Ուրախացիր բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ. և բնակարան սուրբ հոգւոյն, որով ծնար զբանն Աստուած. բարեխօսեա վասն մեր աստուածածին Մարիամ:

Լոյս ի լուսոյ ծնունդ և ծագումն, որ եկիր ի խնդիր մոլորեալ ոչխարի բնութեան. զոր ընդ խաչին բարձեր ի վերայ ուսոյդ. մաքրեա զմեզ ի մեղաց մերոց: Սուրբըդ սրբոց էից մաքրութիւն. որ ածեր տան քո աւել ի մեղաց զաշխարհս մաքրելով. ի նմա զգտեալ զպատկեր քո նորոգեցեր. նորոգեա զմեզ ի հնութենէ մեղաց: Ընդ անառակին որդւոյ գոչեմք առ հայրըդ զթած. մեղաք յերկինս և առաջի քոյ քաւիչ

յանցանաց. եւ ընդ առաջ սիրով գրկեմ համբուրիւ, մաքրեա զմեզ ի մեղաց մերոց: Աղբիւր կենաց բըղխեալ յեղեմայ սուրբ աստուածածին, որով արբեցաւ երկիր ծարաւոտ հոգւոյն իմաստիւք. տուր մեզ մաղթեա աղբիւրս արտասուաց. մաքրել ըզմեզ ի մեղաց մերոց:

## ՕՐՀ. ԳՃ. ՉՈՐՐՈՐԴ ԿԻՒՐԱԿԷԻ

Որ արարեր զօրութեամբ զիմանալեացն աշխարհ վերին. եւ ի նմա հաստատեցեր տընտես ըզդասս հրեղինացն. օրհնեմք զանհասանելի զօրութիւնդ: Որ տիրապէս մեծատունդ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի. եւ ի դրախտն որ յադենի տընտես եդեալ զմարդն առաջին. օրհնեմք.. Որ շինեցեր բարձրագոյն զեկեղեցի քո խորհրդեամբ. եւ ի սմա կարգեալ տընտես զքարոզ բանին ճշմարտութեան. օրհնեմք.. Անստանելոյն տաղաւար բարձող էիցըս բարձողին, որ ծընար զԱստուած մարմնով զանմարմնաբար ծնունդըն Հօր. բարեխօսեա վասն մեր աստուածածին Մարիամ:

Որ զտիրականս առ ի քէն կարգեալ տընտես փրկութեան մերոյ, իմաստութեամբ զպարտիս եթող քո-



քոյ պարտապանաց. թող եւ ըզմեր զյանցանս ողորմութեամբդ քով Քրիստոս: Որ զպատմուճանն առաջին զոր զգեցուցեր օծմամբ հոգւոյն, մերկացաք մեղօք ըստ նախահօրըն պատրանաց. զգեցո ըզնոյն վերստին ողորմութեամբդ քով Քրիստոս: Ցաստուածային կայծակունս ի սրովբէիցն անհըպելին. անմաքրապէս մերձեցաք զոլ պարտապան քում խորհրդոյն. շնորհեա ըզնոյն մաքրութեամբ ի թողութիւն մեղաց մերոց: Որ վառեցար ի յարփւոյն եւ ոչ կիզար ըստ մորենւոյն. այլ ետուր զհացըն կենաց կերակուր բանաւորաց. բարեխօսեա առ Քրիստոս ջնջել ըզգիր մեղաց մերոց:

## ՕՐՀ. ԲԿ. ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՒՐԱԿԷԻ

Որ պատուիրան ճշմարտութեան աւանդեցեր եկեղեցւոյ քո Քրիստոս. անսահման ժամանակս աղօթել միշտ առ Աստուած հոգւով եւ մտօք:

Որ ըզբան քո օրինաց հաստատեցեր գործով մեզ օրինակ, հանելով ըզգիշերն ի գլուխ յաղօթսն Աստուծոյ, բնութեամբ մերով անօրինաբար որում կրկնի ծունր ամենայն: Վասն որոյ եւ մեք պաղատեցուք առ քեզ Քրիստոս. շնորհեա մեզ յամենայն ժամ լինել

քեզ յանդիման, մաքուր աղօթիւք ըստ անմարմնոցն որ յերկինս: Աղաչանօք աստուածածնին անապական քում ծնողին. զիմանալի աչըս սրտից մերոց բացցես ողորմութեամբ հայիլ ի լոյս քո Քրիստոս:

Դատաւոր արդարութեան հաստատեցեր ի մեզ զխիղճ մեր. դատել զհոգի և զմարմին. արդարապէս դատմամբ ըստ օրինաց քոց Քրիստոս: Իսկ անիրաւ դատաւորին որ ի քաղաք բնութեան մերոյ, ոչ ունելով զերկիւղ քո սուրբ, և անպատկառ ի մարդկանէ, ոչ ունելով դատ զրկելոյն: Այլ անմահ սուրբ փեսայիդ այրի հոգի իմ պաղատի. ուսո՛ զիրաւունս քո լինում դատաւորիս, առնել ինձ դատաստան արդար ընդ ոսոխի մարմնոյ իմոյ: Մարիամ կոյս անարատ զանապական փեսայդ աղաչեա. զի հաշտեսցի ընդ այրի եղեալ հոգիս. և միաւորեսցի դարձեալ սիրով ընդ հեռացեալսն ի նմանէ:

---

## ՕՐՀ. ԲՃ. ՎԵՑԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԷԻ

Որ ըղխորհուրդ քո գալստեանդ յառաջագոյն գուշակեցեր, մարգարէիւքն Իսրայէլի զորս ընտրեցեր



յետ Մովսէսի. որք խօսեցան հոգւով սրբով բազմապատիկ օրինակօք. տուր մեզ փրկիչ ողորմութիւն և ըզմեղաց զթողութիւն: Ի մերձենալ ամաց վերջին զոր տեսանողքն ծանուցին. ըզհաւանիլ մեր փրկողիդ առ ի վախճան ժամանակին. երեւեցար ի մէջ մարդկան զգեցեալ ըզկերպ ծառայական. տո՛ւր մեզ փրկիչ ողորմ.. Ի վեցերորդ աւուր զԱդամ ստեղծեր ի տիպ քո տիրական. որ ոչ պահեալ ըզպատուիրանըն մերկացաւ ըզպատմուճանն. իսկ նոր Ադամդ ի վեց դարուն այց արարեր կորուսելոյն. տուր մեզ փրկիչ ողոր..

Տաճար լուսոյ անըստուերին և առագաստ անճառ բանին. որ զնախնւոյ մօրն Եւայի բարձեր զանէծըն տրտմալի. հայցեա յորդւոյ քո միածնի հօր հաշտութեանըն միջնորդի. բառնալ ի մէնջ ըզխռովութիւն և տալ զոգւոյ խաղաղութիւն:

Ըստ աւետեաց մարգարէին որ առ փրկեալքս արեամբ զաւինդ. ցընծամք և մեք ծառք անտառի ընդ գալուստ Տեառնըդ կրկնակի. շնորհեա մեզ Տէր ընդ արդարոցն ընդ առ ի քէն տնկեալ ծառոցն. այժմ յուսով զուարճանալ և յերկրորդին ընդ քեզ ցընծալ: Սըմին նըման տայ աւետիս Զաքարիաս նոր Սիոնի, եթէ ուրախ լեր ահա գայ առ քեզ խոնարհ և հեզ

արքայ. նստեալ ի յէշ և յաւանակ կրկին ազանց գոլ օրինակ. Նստեալդ յաթոռ քերովբէից նիստ զթութեամբ ի մեր հոգիս: Զահեղ փառաց քոց երեւումն որ լինելոց է յերկրորդումն. եռես Դաւիթ յառաջագոյն ծանոյց կանխաւ ազդմամբ հոգւոյն, թէ յայտնապէս Աստուած գայցէ հուր առաջի իւր բորբոքէ. յայնժամ Յիսուս ի մեզ խնայեա գըթա՛ Քրիստոս և ողորմեա: Աստուածածին անհարսնացեալ յերկրէ յերկինս հարսն ընծայեալ, յորժամ բազմիս լուսոյ նման քո միածնիդ յաջակողմեան, յայնժամ մաղթեա ընդ մեր ըղնոյն փըրկել ըզմեզ յահեղ բոցոյն, համադասել ընդ արդարոցն երգել զփառս ընդ երկնայնոցն:

---

## ՕՐՀ. ԵՒ ՀՄԲ. ԱՋ. ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԵՒ ՑԻՆԱՆՑ

Որ վերօրհնիս յաթոռըս քերովբէից ի վերայ նըստիլ յաւանակի հաճեցար. բարեբանեալ որ եկեալդ ի կեցուցանել: Ուստի և մեք պաղթական օրհնութեանցն ըզձայն մատուցանեմք քեզ Թագաւոր փառաց ընդ տղայսն օրհնաբանելով. բարեբանեալ . . Ովսաննա ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն ալէլուիա. և օրհնութիւն որ գալոցդ ես անուամբ Տեառն ալէլուիա:



Այսօր զանսկիզբն բանն որ յաթոռ փառաց ընդ Հօր յերկրի երեւեալ տեսաք. քրովբէական ձայնիւն օրհնեցուք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Այսօր յաւանակ քերովբէ և տղայքն եբրայեցւոց բարեբանեն. օրհնութիւն որդւոյ Դաւթի օրհնեալ . . Այսօր զուարճացան տիեզերք գալըստեամբ աստուածորդւոյն յԵրուսաղէմ. և գոչէին հնչմամբ երգով, օրհնեալ եկեալ . .

---

Հրց. Գկ. Որ ի քրովբէական աթոռ ընդ Հօր նստէիր բանդ Աստուած. այսօր խոնարհութեամբ նըստար մարմնով նոր յաւանակի. զՔեզ բարեբանեմք Աստուած հարցն մերոց: որ ի սրովբէիցն սըրբասաց ձայնիւ անդադար օրհնաբանիս, այսօր ի դասուց Եբրայեցւոց որդի Դաւթի փառաբանեցար. զքեզ բարե . . Որ ի հրակերպիցն երգաբանեալ հնչմամբ ի բարձունս օրհնաբանիս. այսօր ի ծերոց և ի տղայոց գովեցար ովսաննա երգով. զքեզ . .

ԸզՏէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան:

Այսօր զգալուստ փրկչին մերոյ ցնծութեամբ տօ-

նէ Նոր Երուսաղէմ. ժողովուրդք որք ի հեթանոսաց, բարձր . . Այսօր ընդ մանկանց եբրայեցւոց զհին աւուրցն եկեալ Նոր արքայ ի սիոն. մանկունք սուրբ եկեղեցւոյ. բարձր արա . . Այսօր ընդ ծերոցն օրհնաբանից ուրախութեամբ բարեբանեցէք զանմահ Թագաւորն եկեալ. քահանայք հոգևոր երգով բարձր ա. .

Որդ. Բկ. Ուրախ լեր եկեղեցի սուրբ. ի գալըստեան սուրբ միածնին. ուրախ լե՛ր և ցնծա՛ հանդերձ ամենայն որդովք: Խնդա՛ յոյժ դուստր վերին սիոնի. ահա Թագաւոր քո գայ նստեալ ի յաւանակի նորոյ. արդար և փրկիչ փրկէ և կեցուցանէ: Զուարճացիր և բերկրեա՛ ժողովուրդ Աստուծոյ. մատո՛ զոստս ծաղկեալս հաւատով, և ասա. օրհնեալ որ եկիր Թագաւոր տիեզերաց:

Տէր. Բկ. ԶՔրիստոս Թագաւորն որ էն ի յաթոռ փառաց. տեսաք ի յերկրի նըստեալ ի նոր յաւանակի: Ընդ առաջ ելեալ արքային դասք եբրայեցւոց. ծերքն ոստովք ձիթենեօք և տղայքն արմաւենեօք: Միաբանական ձայնիւ գոչէին երգ նոր. բարեբանելով զանմահ Թագաւորն:



Ճաշու. Դկ. Անսկիզբն բանըն Հօր որ ի վերայ քերովբէիցըն հանգչէր, այսօր ի վերայ յաւանակի նորոյ նըստեալ. օրհնեալ արքայ եկեալ անյաղթելի Թագաւոր: Յառաջ քան զյաւիտեանս որդին, որ ի վերայ քառակերպիցն բազմի. այսօր ի ծերոց և ի տղայոց փառաւորեցաւ. օրհնեալ . . Եկայք նոր ժողովուրդք ընդ անմարմնոցն դասս բազմութեան. ըզսա հնչմամբ երգով քաղցըր ձայնիւ փառաւորեսցուք. օրհնեալ . .

## Գ.ձ. ՀԱՄԲԱՐՁԻ ՅԻՆԱՆՑ

Թագաւոր գոլով քո յաշխարհ, մըտեր ի քաղաքն Երուսաղէմ. նստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակի, կոչել զհեթանոս յերկրպագութիւն: Ծերքն ոստովք ձիթենեօք, և տղայքն ոստովք արմաւենեօք. և երամ երամ դասուքն աղաղակէին ովսաննա՛, օրհնեա՛լ եկեալ ի յանուն Տեառն: Ցնծացաւ սուրբ սիօն. բերկրեցան սուրբ եկեղեցիք, և խնդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ. օրհնէին զգալուստ քո փրկիչ յաշխարհ:

Յորժամ եկըն Յիսուս յԵրուսաղէմ ի քաղաքն, ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք, և զատուա-

ծողլին փառաւորէին: Ի լեռնէ ձիթենեաց, տարածանէին մանկունքն զհանդերձս իւրեանց. և ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին աստուածորդւոյն սուրբ Թագաւորին: Ոստովք և տերեւեալ ձիթենեօք եբրայեցւոց մանկունքն օրհնէին. ուրախ լեր Երուսաղէմ քաղաք, և ցնծա սիոն մայր եկեղեցի:

Զգալուստ Քո Քրիստոս այսօր յԵրուսաղէմ նոր եկեղեցի սուրբ, յաղթական երգով բարեբանեմք. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Որ վասն մերոյ փրկութեան յաւանակի նստիլ յանձն առեր, ընդ մանկունսըն բարեբանեմք, օրհ . . Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան:

Ի յարութեան յաւուր գալստեան փրկչին. տարածանէին մանկունքն զհանդերձս, և անդադար ձայնիւ օրհնէին. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն: Ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին աստուածորդւոյն առ Ճանապարհաւն. և անդադար ձայնիւ . . Ի ծերոց բըղխեալ օրհնութիւն և ի տղայոց փառաբանութիւն և անդադար ձայնիւ օրհ : .

---



## ԿԱՆՈՆ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Շար. Բձ. Շնորհեա մեզ Տէր արթնութիւն ընդ իմաստուն կուսանացն. և զհոգւոյ մերոյ լապտերս պայծառացո: Երկընչիմք ի քէն Տէր զարհուրեալք ի պատասխանւոյն, զամէնն ասելով եթէ ոչ գիտեմ զձեզ: Յորժամ գաս փառօք հօր դատել զտիեզերս ամենայն. շնորհեա և մեզ Տէր կալ ի յաջմէ քումմէ: Բացցի մեզ դուռն ողորմութեան երկնաւոր փեսային. և մըտցուք ի յառագաստ ընդ իմաստուն կուսանսն: Ժամանեսցուք ընդ առաջ փեսային և մտցուք ի յառագաստ նորա. զի մի մնասցուք արտաքս որպէս յիմար կուսանսն: Պայծառասցին լապտերք հոգւոյ մերոյ և բազմեցուսցես զմեզ ընդ հրաւիրեալսն ի կոչումն արքայութեանն երկնից:

═══

Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց մեզ, Տէ՛ր զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ:

Ո՞վ են դուք զի բացից, . .
—Ոչ թէ միայն արդարք մտանեն . . :
Զի սա է դուռն երկնից . . :

—Արժան և ճշմարիտ են այդուքիկ . . ։

## ՇԱՐ. Բկ.

Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւղ լապտերաց, ելին ընդ առաջ երկնաւոր փեսային վառեալ լապտերօք։ Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք ի յիւղոյ. անպատրաստ գտան գալտեան փեսային շիջեալ լապտերօք։ Վասն որոյ և մեք պատրաստեսցուք իւղ հոգևոր, զի մտցուք ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք։

Յոյս իմ ես դու Տէր, քաւիչ յանցանաց իմոց. մի անտես առներ զբղխումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ Աստուած։ Առ Քեզ ապաւինեցայ որպէս զանառակ որդին. հայր մեղա՛յ յերկինս և առաջի քո. ողորմեա . .

Փրկեա զիս Աստուած, ի բազում մեղաց իմոց, որ արժանի քոյին սուրբ արքայութեանդ. ողորմեա . .

Մեղք իմ բազում են յոյժ. ծանր են քան զաւազ ծովու. քանզի քեզ միայնոյ մեղայ. ողորմեա . . ։ Բա՛ց Տէր զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ. քանզի քեզ միայնոյ մեղայ. ողորմեա . . Հե՛ղ յիս զգթութիւնդ քո բազումողորմ և մարդասէր. քան-



զի քեզ միայնոյ մեղայ. ողորմեա . .

(«Բաց մեզ»։ Ապա շարական. Բձ.)

Թագաւոր փառաց Քեզ սպասեսցուք պատրաստեալք արթնութեամբ, ընդառաջել որ գաս ի դատել զերկիր։ Անաղօտ վառեալ լապտերօք հաւատոյ ընդ դասս իմաստուն կուսանացն. մտանել ի յառագաստ ընդ երկնաւոր փեսային։ Փութասցուք կանխեալ յառաջ քան զձայն աստուածային բարբառոյն. զի մի մնասցուք արտաքս ըստ՚ շիջման հինգ կուսանացն։

(«Բաց մեզ» ։ Ապա շարական Դկ։)

Զողորմութեան Քո զդուռն բա՛ց մեզ Տէր, և արժանի արա զմեզ լուսեղէն յարկաց քոց ընդ սուրբս Քո։ Ի պատրաստեալ քո յօթևանս սրբոց քոց, ընկա՛լ և զմեզ փրկիչ յորդեգրութիւն ի դպրութիւն կենաց։ Ի նստել Քո յատենի դատաւոր ահեղ, խնայեա յարարածս քո բարեխօսութեամբ և աղօթիւք սուրբ Ծնդնաւորացն։

( Օրթի, Աւետարան և տաղս Կեցո։ )

## ՄՆԿ. ԵՒ ՀՄԲ. ԱԿ. ԱՒԱԳ ԵՇ. ԱՒՈՒՐ

Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան, ի թողութիւն մեղաց մերոց։ Այսօր Տէրն մեր լուանայր զոտս աշակերտացն և պատուիրէր զայս առնել։ Մի ոմն ի ձէնջ, եղբա՛րք, մատնելոց է զիս ի մահ, և որոշի յաշակերտացդ։ Զայն լուեալ Պետրոսի, ակնարկէր առ Յովհաննէս, հարցանել թէ ո՞վ իցէ։ Բանն զոր ասաց Յիսուս, տրտմեցոյց զիւր զաշակերտսն, և խռովեցան ամենեքեան։

## ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆ

Որ վերնախմբից ի կառս հրանիւթս քառակերպեանս անճառելի բազմիս Աստուած. այսօր իջեալ ի յերկնայնոցն վասն քո արարածոցս. յանձն առեր բազմիլ ընդ աշակերտսն և սերովբէքն և քերովբէքն հիացեալ զարմանային. և պետութիւնք վերին զօրացն սքանչացեալ աղաղակէին ասելով. սուրբ, սուրբ



սուրբ Տէր զօրութեանց։

## ԿԱՆՈՆ
## ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ՈՏՆԼՈՒԱՅԻ
## ՔԱՐՈԶ Գկ.

Աստուած մեծ և սքանչելագործ զօրութիւն, անեղանելի բնութիւն. որ ողորմութեամբ հաճեցար առնել զարարածս ամենայն յոչընչէ. աղաչեմք։

Լուր Տէր և ողորմեա։

Զգեցեր զվերնայարկս երկնից որպէս խորան ի վերայ ջուրց. ծածուցեալ հաստատութեամբ ի բնակութիւն անպարագրելի աստուածութեանդ քո, և զամենայն հրաշակերտս ի զովեստ անուանդ քում սրբոյ. աղաչեմք . .

Եղեր լրումն օրինաց և մարգարէից, և եկիր կամաւ ի վերնատունն խորհրդոյ. լուացեր զոտս աշակերտացն քոյ անճառելի խոնարհութեամբդ. աղաչեմք։

Ընկալ Տէր և այժմ զլուացումն զայս զոր աւանդեցեր մեզ յօրինակ խոնարհութեան. բարեխօսու-

Թեամբ սրբուհւոյ մօր քո և միշտ կուսին Մարիամու Աստուածածնին. աղաչեմք:

Ընկալ Տէր և ողորմեա:

Եւ ևս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգևել մեզ խնդրեմք:

Տուր մեզ Տէր Աստուած:

Զանձինս մեր . . Ողորմեաց մեզ Տէր . .

## ԳԱՆՁ

Այս խորհուրդ լցաւ, անդ զուշակեցաւ աստ կատարեցաւ:

Աստուած մարդացաւ. ընդ օրինօք մտաւ, քահանայացաւ:

Տէր քոյին շնորհաւ, լուծ զմեզ բազկաւ, ար բո́ բաժակաւ:

Ահա ազատեա́ զմեզ ի մեղաց, քաւիչ յանցանաց. աղաչեմք: յ

Սիրտ իմ սասանի, սարսափ զիս ունի, վասն Յուդայի:



Նա ոչ ամաչէ և ոչ զարհուրի, սիրոյն արծաթի:

Նոր սեղան դընի, և հաց բաղարջի , և անապակ գինի:

Տէր իմ արժանի արա զմեզ հացի, քո սուրբ սեղանի:

Ահա ազատեա́ զմեզ ի մեղաց քաւիչ յանցանաց աղաչեմք:

Լուր Տէր և ողորմեա:

Որք որ փափաքին, ուտել զայն մարմին, որով սրբեցին:

Խոնարհիլ պարտին, իւր յանցաւորին ըստ օրինաց փրկչին:

Թողուլ կամօքին, զյանցանս ի սրտին զեօթանասնեկին:

Իսկ Աստուածային բնաւ ոչ սահմանին մեր բազմողորմին:

Ահա́ ազատեա́ զմեզ ի մեղաց քաւիչ յանցանաց աղաչեմք:

Լուր Տէր և ողորմեա:

Աստուածն ամենի՝ Մածին որդի. կամաւ հօր հոգւոյն ճշմարտի, յերկիր խոնարհի:

Տէր Յիսուս խօսէր. Պետրոսի ձայնէր. դու այժմ ոչ գիտես զայս խորհուրդ իմոյս թէ վասն է՞ր:

Ցնծասցուք հոգւով. զնոյն ճաշակելով, փառք հօրն տացուք և հոգւոյն Միածնի մարմնով:

## ԿԱՆՈՆ
## ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹՈՒ ԳԻՇԵՐԻ

Օրհ. Բձ. Արծաթսիրութեամբն մոլեալ Յուդա, զիւր ըղձեծ զվարդապետն ընդ երեսուն արծաթոյ Հըրէից մատնէր: Ընդ որում ես համբուրեցից, նա՛ է՝ զնա կալարուք. ով համբոյր նենգութեան, նշան և աուխթ մահու: Մերկացաւ յինքենէ զԱստուածային տուրբ հոգին, և զգեցաւ զսատանայ, որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ:

Ի գիշերին յորում մատնիւր փրկիչն մեր ի մահ խաչի, եկ ի լեառն ձիթենեաց, աղօթելով զայս ասէր, հա՛յր, անցո՛ յինէն զբաժակս: Իսկ անօրէն աշակերտին թողեալ զգութ սիրոյ նորա, և փութայր առ քահանայսն. ասէր. ինձ զի՞նչ կամիք տալ, զի մատնեցից զվարդապետն: Ժողովեալ Հըրէիցըն կշռեցին արծաթ բազում. առեալ տարան առ Պիղատոս, ասեն ի



խաչ հան, ի խաչ, զի հայհոյիչ է օրինաց:

Ալէլուք. Զարթեաւ աղեղն քո . . տե՛ս էջ 93

Հրց. Գձ. Իջեր յերկնից անըսկիզբըն որդի. ի Հօրեղէն ի բնութենէ մարդկան զչարչարանըս յանձն առեր. օրհնեմք զքեզ որ էիր յառաջ քան զամենայն յաւիտեանս: Որ ասացեր բանիւ լինել ամենայն երկրի. ի յերկրի յառենի կացեալ տեառնէին արարածք. օրհնեմք . . Յորմէ դողան զուարթունք երկնից, այսօր եկիր կամաւ ի խաչ գեղարդեամբըն խոցեցար. օրհ . .

Ըզ Տէր օրհնեցէք, բարձր արարէք յաւիտեան:

Եւ զինուորըն գեղարդեամբըն յարձակեալ, խոցեաց զկող կենարարին. բարձր . . Ուստի աղբիւր կենդանարար բըղխեալ լըւաց զախեղերս ի մեղաց. բարձր . .

Տէր. Ով սքանչելի և տեսիլ ահաւոր, զարարիչն երկնի և երկրի այսօր տեսաք ի խաչի: Տեսեալ զՏէրն ի խաչին խաւարեցաւ արեգակն. և վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ի վայր: Անարգաբար խաչեցաւ Տէրն ի մէջ ի յանօրինաց. զի լցցի գիրն որ

ասէ, թէ ընդ անօրէնս համարեցաւ։

## ՈՂԲԵՐԳ Ի ԲԵՐԱՆՈՅ ՏԵԱՌՆ ՅԻՍՈՒՍԻ

Ու՞ր ես, մայր իմ, քա՛ղցր և անո՛յշ,
Մեր ծընողիդ գիս այրէ.
Լըցան աչք իմ դառն արտասուօք,
Ոչ դոք ունիմ որ սըրբէ։

Թըքին, հարին, ապտակեցին,
Պըսակ եդին ի փըշէ։
Ի փայտ խաչին բեւեռեցին,
Ներկեալ եղէ յարենէ։

Յանապատին որ ծարաւեայ,
Արբուցին ջուր ի վիմէ։
Ո՛վ Մարիամ Մագթաղինէ,
Եւ ազգակից Սողոմէ։

Ջո՛ւր խընդրեցի, քացախ արբի,
Յանօրինաց ձեռանէ։
Այդ արարէք մօրըն իմոյ
Թող գայ կարօտըն առնէ։



Գուցէ երբեք յետոյ եկեալ,
Եւ գիս մեռեալ գըտանէ։

## ՈՂԲԵՐԳ Ի ԲԵՐԱՆՈՅ ՏԻՐԱՄՕՐՆ

Վա՛յ ինձ, Յիսու՛ս, միածին որդի,
Արեգակըն կորուսի։
Ու՞ր ես, աչացս լոյս իմ որդեակ,
Հոգւոյս հոգի իմ զաւակ։

Ա՛յ իմ սիրու՛ն, անոյշ գառնուկ,
Ես առանց Քեզ՝ մնացի որբուկ։
Առաջ թող ես մեռնիմ, հոգի՛,
Որ քեզ նման չեմ գտանիր։

Թող իմ ականջքս խըլանային
Որ այդ ձայնը չի լըսէի.
Մէկ մի տեսնեմ զքեզ կենդանի,
Այնուհետև թող մայրդ մեռնի։

Աւա՛ղ հոգւոյս մօր այդ կուսին,
Զքեզ ուշ գտայ՝ շուտ կորուսի։

## ՇԱՐԱԿԱՆ ԲԿ.

Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք և զսուրբ խաչելութիւնդ քո մեծացուցանեմք և զսուրբ թաղումնդ քո փառաւորեմք։

Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի, սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ որ մատնեցար վասն մեր, ողորմեա մեզ։ ( Երիցս )

Փառք սուրբ խաչիդ ալէլուիա. սուրբ մատնութեանդ ալէլուիա. չարչարանացդ ալէլուիա։

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Փառք սուրբ խաչիդ ալէլուիա։ ( Կրկնէ )

Փառք և երկրպագութիւն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Փառք սուրբ խաչիդ ալէլուիա։ ( Կրկնէ )

Խաչն կենարար որ եղև մեզ փրկութիւն. սովաւ



ամենեքեան զքեզ բարեբանեմք։

( Սուրբ խաչիւ։ Աղօթք։ Պահպանիչ։ )

## ՕՐՀ. ԲՃ. ՄԵԾԻ ՇԱԲԱԹՈՒ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Պարգևատուն ամենեցուն այսօր խնդրի պարգևս ի Պիղատոսէ, և արկողն զլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ ի Յովսեփայ։ Կենդանատուն ամենեցուն այսօր դնի ի նոր գերեզմանի. և զանձն անմահութեան կնքի տապանաւ քահանայիցն։ Արարածոց փրկութիւն Քրիստոս, այսօր եդաւ ի նորափոր ի վիմի. զոր օրհնեն զօրք երկնից երգով պահպանի ի զինուորացն։

Հարց. Գ.Ճ. Զքեզ օրհնեմք Թագաւոր յաւիտենից, անմահ, Աստուած հարցն մերոց։ Զոր ոչ բնութիւն արարածոց զԱստուած տանիւր. մահուամբ սահմանեալ դնի ի նոր գերեզմանի. Նոր զիս ընդունելով մարդ, զովեմք զքեզ Տէր հարցն մերոց։ Որ անփակ գրով հաստատեալ քարտէս, կնքի տապանաւ անկոբուստ պահելով զմեզ հաւատով երրորդութեանդ. զօ·

Օրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր օրհ-

նեցէք և բարձր արարէք զնա յաւիտեանս: Տիւք և գիշերք զՏէր օրհնեցէք: ԶՔրիստոս Թագաւորն յիմանալի զօրացն ահիւ պատուեալ. և բարձր արարէք.. Իսրայէլ զՏէր օրհնեսցէ: Զանյաղթելի զԹագաւորն, որ պահի ի զինուորաց զանձն անմահութեան. և բարձր..

## ԿԱՆՈՆ
## ԾՐԱԳԱԼՈՅՑԻ Ս. ԶԱՏԿԻ

Ճար. Գձ. Լուսաւորեա Երուսաղէմ զի հասեալ է լոյս քո, զարդարեա զամուրս քո և փառք Տեառն ի վերայ քո ծագեսցի: Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ Աստուած օրհնութիւն ի Սիոնէ, և քեզ մատուցին աղօթք յԵրուսաղէմ: Գովեա Երուսաղէմ զՏէր, և օրհնեա զԱստուած քո. նոր ժողովուրդ դշխոյ դուստր Սիոնի:

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ Աձ.

Գովեա Երուսաղէմ զՏէր,
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա:
Եկայք ժողովուրդք երգեցէք Տեառն. ալէլուիա:



Յարուցելոյն ի մեռելոց ալէլուիա. որ զաշխարհըս լուսաւորեաց, ալէլուիա:

## ԿԱՆՈՆ
## Ա. ԱՒՈՒՐ Ս. ԶԱՏԿԻ
## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Աձ.

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր, քեզ աւետիք խնդութեան. հարսն ի յերկրէ եկեղեցի. օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիօն: Այսօր անձառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց ըզմանկունս քո, լուսաւորեա՛ Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիօն: Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն, և քեզ ծագեաց լոյս գիտութեան. յարուցեալն ի մեռելոց Քրիստոս, օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիօն:

Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի, արացուք տօն ցնծութեան, նորոգեալքս ի հնութենէ մեղաց ատելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Այսօր հրեշտակն լուսափայլ ի յերկնից իջեալ. զարհուրեցոյց զպահապանսն. և ասէր կանանցն քարոզել ա-

սելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս, ազատեալք արեամբ գառինն Աստուծոյ, պարեսցուք ընդ երկնայնոցն ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

═══

Հրց. Դկ. Այսօր մեծ աւետիք Ադամայ նախաստեղծին տուաւ. արև որ ննջէս, լուսատու եղև քեզ յարուցեալն Քրիստոս, Աստուած հարցն մերոց։ Այսօր ձայն աւետեաց Եւայի գոչէն լսելս դասերքն յուղաբերք, տեսաք յարուցեալ զյարութիւնն քո Քրիստոս Աստուած հարցն մերոց։ Այսօր Հրեշտակք յերկնից իջեալ տան զաւետիս մարդկան, յարեաւ խաչեցեալն և յորոց զձեզ ըստ խնքեան. Աստուած հար . .

ԶՏէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտ. .

Այսօր Տէրն մեր յարեաւ , եկայք պարեսցուք ընդ հրեշտակս յաղթական երգով. օրհնեցէք . . Այսօր սին լուսոյ ծագեաց սուրբ եկեղեցւոյ յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեցէք և բարձր արա. .

═══

Տէր. Դկ. Այսօր Հրեշտակք ի բարձունս ուրախանան ընդ մարդկան. որք իջեալ ի յերկնից տան զաւետիս աշխարհի. ցնծացէ՛ք այսօր, Քրիստոս յար-



եաւ ի մեռելոց։ Այսօր զուարթունն ի վիմին խնկաբերից սուրբ կանանցն. փողէր ձայնիւ ցնծութեամբ պատմէր աշակերտացն ասելով. ցնծացէք այսօր Քրիս. . Այսօր վիմին հաւատոյ և Յովհաննու սիրելւոյ ընդ հակառակս ընթացեալ ի գերեզման յարուցելոյն. զոր տեսեալ պատմէին Քրիս . . Այսօր և մեք զուարճացեալք պայծառասցուք տօնիս, ընդ հաշտութեանն Աստուծոյ միմեանց արկցուք գիրկս սիրով. և միաբան գոչեսցուք Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

## ԵՐԳ. ԹԱՓՕՐԻ

11 Միաշաբաթ օր հանգստեան, աւետիս
Կանայքն եկին ի գերեզման. »
Եւ ողբային արտասուական, »
Խնդրել զՅիսուս անապական. »
Ձայնեաց հրեշտակն ուրախական, »
Զայն որ եղին ի գերեզման։ »
Ձեզ աւետիս յարեաւ փեսայն. »
Դրունք դժոխոց խորտակեցան »
Մարխամեանքն ուրախացան, »

Եւ յԱստուծոյ միշտ գոհացան. աւետիս
Առ աշակերտսն անդրէն դարձան »
Տալ աւետիս վասն յարութեան »

---

## ԿԱՆՈՆ
## ՏՕՆԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏԵԱՌՆ

Օրհ. Գձ. Համբարձաւ Տէրն մեր յերկինս ասելով աշակերտացն. Նստարուք ի քաղաքիդ յԵրուսաղէմ. մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց: Միաբանեալ սուրբ առաքեալքն միախոհ և միակրօն. միաբան նստէին ի սուրբ վերնատանն. և այն ունէին զպատեան սուրբ Հոգւոյն: Յանկարծակի եհաս ի նմանութիւն լուսոյ փայլման. և եկեալ բնակեցաւ ի սուրբ յառաքեալսն. մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Համբարձաւ Տէրն մեր Քրիստոս օրհնութեամբ ընդ ամպս երկնից. և առաքելոցն երկրպագեալ դարձան յԵրուսաղէմ. միաբանութեամբ վեր առաքէին զաղօթս: Մտեալ ի յերկինս բիւրաւոր զօրօք բազմութեամբ հրեշտակաց. որք աղաղակէին և ասէին. օրհնեալ եկեալ ի յանուն Տեառն: Նստեալ ընդ աջմէ ծնողին. կատարելով զխոստացեալ պարգևսն. մխիթա-



րիչ սուրբ Հոգին գայ առ ձեզ. ազդերացուցանել զմեծ զօրութիւն:

---

Ճաշու Աձ. Որ համբարձան այսօր աստուածային իշխանութեամբ ի հայրական ի կառս. զպատաւուրելով ի հրեշտակական դասուցն. որք նուագէին ասելով, համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, և մտցէ թագաւոր փառաց:

Հիացան վերնական իշխանութիւնքն և սոսկալի ձայնիւ աղաղակէին առ միմեանս. ո՞վ է սա թագաւոր փառաց, եկեալ մարմնով և զքանչելի զօրութեամբ. Համբարձէք.. Եղանակէին վերնական պետութիւնքն հրաշալի ձայնիւ երգէին երգ նոր ասելով. սա ինքն է թագաւոր փառաց, ՓՐԿԻՉ ԱՇԽԱՐՀԻ և ԱԶԱՏԻՉ ԱԶԳԻ ՄԱՐԴԿԱՆ, համբարձէք իշ..

---

## ԿԱՆՈՆ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ
## ՕՐՀ. ԵՒ ՀՄԲ. Գձ.

Առաքելոյ ապաւնոյ, իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման հրավառեաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նստէ-

ին ի սուրբ վերնատանն: Աննիւթական ոգանի, անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ, զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր և զխուստանգամ զարուստն. զոր քարոզեցին համագոյականն: Օրհնութիւն ի բարձունս ելողին ի Հօրէ Հոգւոյն սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն և հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

Կենդանարար Աստուած մարդասէր Հոգի. ըզժողովեալն մարմնական սիրով լուսաւորեցեր Հրեղինօք լեզուօք. վասն որոյ և մեք այսօր տօնեմք ըզգալուստ քո սուրբ: Զուարճացան քո գալստեամբըդ սուրբ առաքեալքն գոչելով ի միասին. ըղյրուեալն ի միմեանց բազմաձայն լեզուօք. վասն որոյ և մեք այսօր տօնեմք զգալուստ քո սուրբ: Հոգևորական սուրբ մկըրտութեամբ զարդարեցեր նոքօք ըզտիեզերս ի զգեստ լուսափայլս և նորափետուրս վասն որոյ և մեք . . :

ՇԱՐ. Բկ.

Երրորդութիւն անբաժանելի . . տես էջ 172

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ

Բձ. Որ ի յարաշարժ ի յաղբերէն յառաջ բըղխեալ անհատաբար ի յորդւոյ տիրապէս սուրբ Հոգին, այսօր ի յերկնից սաստիկ հեղեալ ի դաս առաքելոցն լցուցիչ բոլորից. ընդ օրհնեսցուք երկըրպագելով: Որ յանսկիզբն և ի միշտ յէէն. նոյնագոյ բնութեամբ անուրիշ բաժանմամբ ի յորդւոյ. արարչակից սուրբ Հոգին. այսօր հրով բաժանեալ լեզուս քարոզեցն, ի լոյս ածեալ զազգս մարդկան բաժանմամբ պէսպէս շնորհաց. ընդ . . Որ ի վերայ ջուրցըն գոլով գոյացոյց զարարածս, անանջրպետն ի Հօրէ և յորդւոյ, իշխանակից սուրբ Հոգին. այսօր վերածնեաց զազգս ամենայն ջրոյ կենդանւոյ բղխեալ յերուսաղէմ. ընդ օրհնեսցուք . .



ԿԱՆՈՆ Է. ԱՒՈՒՐ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

ՀՄԲ. Գձ. Հոգին սուրբ էր միշտ և է և եղիցի, ոչ ըսկսեալ. և ոչ դադարեալ. այլ միշտ ընդ Հօր և ընդ որդւոյ կարգեալ և թըւեալ. և միշտ օրհնեալ է ի յաւիտեանս: Էր միշտ ընդունող սըրբող, և լցուցիչ աստուածացուցիչ. և միշտ ընդ Հօր և ընդ որդւոյ կարգեալ և թըւեալ և միշտ օրհ . . Մշտաշարժ ինքնաշարժ, ինքնիշխան ինքնազօր՝ ամենազօր, վասն

գի շնչէ ուր կամի, յորքան ախորժէ՝ յորժամ և որքան. և միշտ օրհ . . Ինքըն յինքեան, նոյն միշտ ընդ որս պատեցաւ աներևոյթ անժամանակ, անպարագրելի անփոփոխելի. և միշտ օրհ : . Առանց որքանութեան, առանց որակութեան, առանց տեսութեան՝ անշօշափելի. և միշտ օրհ . . Տէր առաքիչ որոշիչ, տաճար առնէ ինքն յինքեան, առաջնորդէ, զօրացուցանէ, որպէս և կամի՝ բաժանէ զշնորհս. և միշտ օրհ . . Կեանք և կենդանարար, լոյս և գոյացուցիչ լուսոյ, ինքըն բարի՝ աղբիւր բարութեան, հոգի ուղիղ առաջնորդական. և միշտ օրհ . . Հոգի զօրութեան և երկիւղի, որով հայր ճանաչի և որդի փառաւորի. որոց մի կարգ, մի պատիւ, մի երկրպագութիւն. կատարելութիւն սրբութեան. և միշտ օրհ . .

## ԿԱՆՈՆ Ի ՏՕՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

### ՕՐՀ. ԵՒ ՀՄԲ. Գ.Ձ.

Ուրախ լեր սուրբ եկեղեցի. քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց զքեզ խաչիւն իւրով. և զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօքն իւրովք: Խնդա յոյժ դուստր Սիոնի, քանզի երկիրս եր-



կինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ, և թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակել ի քեզ: Ընդ դասս երկնաւոր զօրացն վեր առեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառաւորութիւնս. ուրախ լեր հարսն անարատ անքըննելին քո խորհրդով:

Խորան սրբութեան կանգնեցաւ սուրբ եկեղեցի, և Քրիստոս թագաւորն ի սմա պատարագեալ. եկայք հաւատացեալք երգեսցուք Քրիստոսի երգ նոր: Դասք հրեշտակացըն վայր իջեալ յերկնից երգեն ասելով. հրաշալի ձայնիւն եղանակելով, երգեն զերգս օրհնութեան երրեակ սրբասաց ձայնիւ: Ուրախ լեր բերկրեաց հարսնացեալ սուրբ եկեղեցի. պայծառացո զմանկունս քո յօրհնաբանութիւն. ծագեցին շող լուսոյ ի քեզ մայր եկեղեցի:

Հրց Գ.Ձ. Այսօր պայծառ և սիւն լուսոյ լցեալ Աստուածային շնորհիւ սուրբ եկեղեցի, ի սմա զքեզ օրհնեմք Աստուած հայրըն մերոց: Հարսնարան արանց արդարոց, և ի սմա շող Աստուածեղէն ի հօրէ լուսոյ ծագեալ, ի սմա . . Տըւող ողորմութեան Տէր, տուր սըմա զանշարժ քո զխաղաղութիւնդ. ի սմա . .

ԶՏէր օրհնեցէք և առաւել բարձր արարէք յաւիտեանս: Ընդ անմարմնական բազմութեանն ըզՔրիստոս Թագաւորն, որ եկաւորի այսօր ի սուրբ եկեղեցի. ամենայն ազինք գովեցէք և առաւել բարձր արարէք.. Եկայք հաւատացեալք սուրբ երրորդութեան, յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. արարէ՛ք տօնս ուրախութեան մինչև յանկիւնս սեղանոյ. և առաւել բարձր..

---

## ԿԱՆՈՆ ՎԱՐԴԱՎԱՌԻ

### ՕՐՀ. ԵՒ ՀՄԲ. Աձ.

Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր պատուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս: Որ զճառագայթ փառաց քոց ցուցեր արեգակնակերպ փայլմամբ զարարածս լուսաւորեցեր. զքեզ փառս.. Որ ահագին տեսլեամբ զարհուրեցուցեր զքո զաշակերտան ի թմրութիւն հրաշիցն ի սէր աստուածային փառաց քոց. զքեզ..

Երեւի երբեմն աշակերտացըն հրաշալի տեսլեամբ. պայծառացեալ ի Թաբոր լերինն: Եւ զերրեակ միութեան զանտանելի ըզլոյսն տեսանելով կենդանւոյն մա-



հայցան: Հանգիտեալ նախահարցըն տեսութեամբ հայցէին ի Տեառնէ. ասեն բարւոք է մեզ աստ լինել: Արասցուք երիս տաղաւարս Տեառն և Մովսիսի և Եղիայի. և փառաւորեսցուք հանապազ զերրեակ միութիւն:

---

Տար. Գկ. Լերինք ցընծասցեն առաջի քո Տէր. որ երեւեցար ի փառս Աստուծոյ Հօր. միանգամ դուշակելով զգալուստդ. վասն որոյ աստուածային լուսովն զարդարեալ զքեզ հրաշալի ձայնիւ ընդ երկնային երկրածինքս ըզքեզ բարեբանեմք զԹաբոր լերինն: Զոր տեսեալ սոսկալի զանապական լուսոյն ծաւալումն. յայլակերպիլըն քո Քրիստոս որդի Աստուծոյ. առաքելոց և մարգարէիցըն պակուցեալ զարհուրեցան. վասն որոյ աստուա.. Որ զանճառելի խորհուրդ սուրբ երրորդութեանդ՝ Սիմոնի վիմի ծանուցեր. երակի տաղաւարացըն յօրինմամբ. և սիրելի ի հօրէ վկայեալ ճշմարիտ միածին որդի. վասն որոյ աստ..

---

Ճաշու Գկ. Ուրախացիր պըսակ կուսից տիրամայր. այսօր որդին քո զհայրենին փայլեաց ըզփառս.

նմա յաւէժ յանձն առա զանձինս մեր։ Նըմա Մով-սէս և Հեղիաս սպասեն յանուն նորա, ընծան Թա-փօր և Հերմոն. նըմա յա . . Եսայիաս զքեզ թեթև ամպ ասէ, և Հայր յամպոյն զքո զորդին իւր դա-ւանեաց. նըմա յաւէժ . .

## ԿԱՆՈՆ

## ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Օրհ. և Հմբ. Դձ. Այսօր ժողովեալ սըրբոցն ի միասին երանելի առաքեալքն և սուրբ կուսանքն, ջա-հազգեստք պայծառացեալք լուսանէին ըզլապտերս իւրեանց. և միաձայնեալ ասէին. օրհնեալ ես ամե-նօրհնեալդ ի կանայս։ Այսօր դնելով ըզսուրբ կոյսն առ դրանըն գերեզմանին, սպասէին և ակն ունէին Տեառն, խոկ ինքնին զօրով. զեր ի վերոյ տեսեալ զա-րարիչն եկեալ բազում հրեշտակօք. և նոցա միա-ձայնեալ ասէին, օրհնեալ ես ամենօրհ . . Այսօր տես-եալ ըզսուրբ կոյսն թռուցեալ յօդս և ամպեղէն կա-ռօքն ի վեր համբարձեալ յերկինս, մըտանելով յերկ-նային խորանսն ընդ իմաստուն կուսանսն. և նոցա . . Այսօր ընդ բազմաչեայ քրովբէսն և ընդ վեցթևեան



սրովբէսն, մըտանելով յեօթնատասնեան խորանսն, տե-սանելով զանապական աթոռըն, զոր պատրաստեալ է քեզ տէրունւոյդ, երգեմք և մեք, ասելով, օրհնեալ ես ա . .

Այսօր զգաստիչըն յանցանաց նախամօրն ըզկու-սութեանց մայրն. փոխադրեալ բանն Աստուած. յերկ-նայինսըն զասելով յաստուածակերտ խորանսն և յան-պատում ի կեանս. վասն որոյ հըճուողական ձայնիւ Ա-քեզ երգէ եկեղեցի սուրբ զնոր զօրհնաբանութիւն։ Ա-քեզ սոր տիրամայր սըբուհի կոյսն, աւանդեալ ըզսրբա-սոր նեալ հոգին ի ձեռըն հրեշտակական դասուցն. որպէս զերարփի փայլեալ, աշեղինըն նմանեալ հրեղինաց դա-սուցն. վասն որոյ . . Այսօր վերհամբարձեալ ըզմաք-րական մարմինն Աստուածամօր կուսին, անմարմին զը-ւարթնոցն. ամփոփեալ ի տեղի զերակայիցն. յերևելի զգայութեանցս անճառելին առնել հաղորդս. վասն . . Այսօր յուսապատար խնդութեամբ և յաւէժաբար հնչմամբ. նըւագեմք քեզ հոգեղէնքս ընդ հրաբուն սե-ւլիցն. տօնախմբելով զյիշատակ կուսի ազախնոյ և մօր քո. վասն որոյ . .

Հարց Դձ. Որ զնախամօրն ըզյանցանս երկանցն ձըբարձ. և զորդիդ քո միածին մարմնով ծընաւ. այսօր

տու ի մէնջ ի վերին զօրացն փոխեցեր զնախաստեղծին ծննունդն. զոր միշտ ունիմք բարեխօս առ Բեզ Տէր Աստուած Հարցն մերոց: Որ էակից ես Հօր և սուրբ Հոգւոյն. մարմնանալ ի յանձն առեր ի սրբոյ կուսէն. այսօր փոխադրեալ զանեցեր յերկնային խորանն զքոյին ծնողն, զոր միշտ . . Որ յամենայնի ես լցուցիչ բարեխնամ սուրբ Հոգի. այսօր պարգևօք Հանգուցեր յանապատում ի կեանս զկուսութեանց զմայրն. զոր . . .

ԸզՏէր օրՀնեցէք բարձր արարէք զծնող անտա-
նելի բանին զմիշտ կոյսն:

Որ ի կուսական զասակցութեանց և ի սրբոց Ճգնաւորաց փառաբանիս սրբուհի. ուստի և մեք Հաւատացեալքս վերապատուեմք զփոխումըն քո ի յերկինս. որ առաւել բարձրացեալդ ես յախտեան: Զբարեբանեալդ անդադար միշտ ի վերին զօրաց. և ըղձերափոխեալդ ի դասս առաքելոց և մարգարէից, ընդ որս և մեք Հաւատացեալքս վերապատուեմք զքոյին աստուածամայր զՀանգստեան տօնս. որ առաւել . .



## ՃԱՇՈՒ ՇԱԲ. ԲՃ. ՎԵՐԱՓՈԽՄԱՆ
## Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ

Անթառամ ծաղիկ անզատապարտ շառաւիղ, վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ. զքեզ Եսայիաս կանխաւ վերագուշեաց եօթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունարան զոլ, Աստուածածին և կոյս. զքեզ մեծացուցանեմք: Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ յուրախութիւն արտամեցելոց ի Ճաշակմանէ ծառոյն գիտութեան. Սըրբուհի անարատ ամենեցեան զքեզ մեծացուցանեմք: Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք. այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն վերափոխեցար յարքայութիւն որդւոյ քո և Աստուծոյ մերոյ, բարեխօս խոստովանողացս, զքեզ մեծացուցանեմք:

---

## ԿԱՆՈՆ
## ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՑ ԽԱՉԻ
## ՕՐՀ. ԵՒ ՀՄԲ. ԱՃ.

Որ լանարատ բազուկս քո ի խաչին տարածե-

ցեր Քրիստոս Աստուած, և նշան յաղթութեան տուր մեզ. տէր զկեանս մեր պահեա։ Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո Քրիստոս Աստուած. գաւազան զօրութեան տուր մեզ. տէր . . Որ զմեռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանաց կենաց փայտիւն կենդանացուցեր. տէր . .

Սուրբ խաչն օգնական հաւատացելոց կանգնեցաւ ի մէջ երկրի յաղթող թշնամւոյն. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք։ Արարիչն Աստուած բարձրացաւ ի խաչին. և զմեռեալս մեզօք փայտին ճաշակմամբն. ի սմա նորոգեալ կենդանացոյց։ Ի միասնական գալստեան աստուածորդւոյն սուրբ խաչն երևի և լուսաւորէ. զի նա է յոյս հաւատացելոց։

ՃԱՇՈՒ Գ.կ. Յաղթող և զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք. Թագաւորին Քրիստոսի հաւատացեալ ժողովուրդք։ Որ եկն ի լուսաւորել զընտրեալ սուրբ զեկեղեցի. և պսակեաց սուրբ խաչիւն. նմա ընծայս երգեսցուք . . Այսօր և մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին և փրկողին մատուցուք փառք և պատիւ յաւիտեան։



# ԿԱՆՈՆ

## ՎԵՐԱՑՄԱՆ Ս. ԽԱՉԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Հմբ. Դ.ձ. Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի. սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։ Բանզի ի սմա բարձրացար Աստուած. և ի սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ. սա . . Եւ զքո միանգամ զգալուստ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա . . ։

Ի տնկանելն Ադամայ ի կենդրոնն դրախտին. խաբմամբ պատրանօք փայտին ծառոյն գիտութեան. օձաջամբ պատրանօքն ճաշակեալ ի պտղոյն. և եղև վայրաբնակեալ մայրաքաղաքն Երուսաղէմ։ Արեւելք ի դրախտին ընծայեցին զփայտ խաչին. և եկեալ կատարիւր ի տեղւոջ կառափման, բարձրանայր ի գլխին տարրեղէն փայտակերպն սուրբ քառաթեւն պահապան անձանց մերոց։ Բանն անեղ համագոյ որ ընդ Հօր և սուրբ Հոգւոյն, երեւեալ ի մէջ երկրի պայծառացան արարածք. հրճուին կարողութեամբ և զմեզ վերագրեալ յորդեգրութեան շնորհս։

## ԹԱՓՕՐԻ ՇԱՐԱԿԱՆ

Գ.ձ. Որ ծագեցեր մեզ լոյս մեծ ըզնշան յայտնութեան խաչի քո Թագաւոր յաւիտենից. և ետուր պարիսպ ամրութեան հաւատացելոց քոց, աշտարակ հզօր յերեսաց թշնամւոյն. աղաչեմք զքեզ Տէր պահպանեա՛ զմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ։ Սա պսակ զարդարեալ ի շնորհաց իմանալի լուսոյն. և եղեալ ի գլուխ մեղուցելոցն. փայլերուչ երանգօք ներկեալ արեամբ և ջրով. ի տիգախոց կողէդ զոր ի զինուորէն ընկալար. աղաչեմք . . Որ զանդունդս մեղաց ծովուն ոտիւ բաժանեցեր. և զբռնաւորն ծածկեցեր խորոքն յաւիտենական հրոյն. հաներ զժողովուրդս քո ի բնակութիւնս երկնից անկեալ զօրացն. աղաչեմք . .

---

Շար. Գ.կ. Այսօր երեւումն մեծի ճառագայթի նըշանի Տեառն Աստուծոյ մերոյ փայլեալ. ի նաւակատիսն որ յԵրուսաղէմ. ժողովուրդք բարեբանելով ըզՔրիստոս տօնեցէք ուրախութեամբ։ Քանզի նըշոյլք կենսատու սուրբ խաչին արեգակնակերպ փայլմամբն թափանցիկ լուսովն ի յարեւելից յայտնեալ. ժողովուրդք բարեբա . . Ի յերկնից ցոլացեալ ահեղ և նորասքանչ հրաշիւք ցուցաւ առ սուրբ գողգոթայ, նշանըն տէրունական. ժողովուրդք . .



---

## ՃԱՇՈՒ ՇԱՐ. Գ.ձ.

Փայտ կենաց որ փոխանակ մահացու պըտղոյն զՔրիստոս պտղաբերեցեր, պարգեւեալ պահեա՛ զուխտս հաւատացելոց։ Քեւ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց ի սրովբէական պահպանութենէն, պարգ . . Քեւ պատեցաւ նախահայրն ի ճաշակմանէ պտղոյն, և քեզ երկրպագեն ամենայն հաւատացեալք. պարգեւեալ . .

Շար. Բ.կ. Խաչըն կենարար որ եղև մեզ փրկութիւն. սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք։ Որ ի հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի, և զաւազան զօրութեան հաւատացելոց. սովաւ . . Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. սովաւ . .

## ԿԱՆՈՆ
## ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉԻ

Օրհ. և Հմբ. Ակ. Նշանաւ ամենայաղթ խաչի-ւըդ քո Քրիստոս պահպանեա զմեզ մարդասէր յանե-րեւոյթ թշնամւոյն. զի դու միայն ես թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան: Որ ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկս քո, և հեղեր զարիւնդ ի փրկու-թիւն տիեզերաց. զի դու . . Ի միւսանգամ քո գալըս-տեանն յերևիլ սուրբ Նշանիս, արժանի արա ըղձա-ւորս քո վերստին նորոգման. զի դու . .

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն. բոցանիշ փայլ-մամբն իւրով խորտակեա զթշնամին և երյծ զգա-ւակնիք՝ անուանեալ փայտն կենաց ի փրկութիւն տի-եզերաց: Վեր առեալ ցնծան երկինք և երկիր ուրա-խանայ, ընդ յայտնիլ սրբոյ խաչին սեւակնաձև քա-ռաթեւին որ զաշխարհս լուսաւորեաց արեգակնակերպ ճառագայթիւք: Ցնծացաւ Երուսաղէմ, բերկրեցան հա-ւատացեալք նորահրաշ զարդարեցան, քանզի տեսին զյաղթող Նշանն, արարածք ամենայն ի լուսոյն պայ-ծառացան:



## ԿԱՆՈՆ
## ԳԻՒՏԻ ՍՐԲՈՅ ԽԱՉԻ

Օրհ. և Հմբ. Աձ. Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս. զաւազան զօրութեան ի յերկրի ե-րևեալ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Զոր հրէիցն ծածկեալ զանթաքչելի զգանձն փափաքմամբ թագուհ-ւոյն փայտ կենաց յայտնեցաւ, եկայք . . Սա է զէն յաղթութեան հաւատացելոց, ախոյեան և կնիք յաղ-թող ընդդէմ թշնամւոյն. եկայք . .

Անճառելի երևումն երևեալ Կիւրղին. Նստելով յատենի յԵրուսաղէմ. խնդրէր զպատուական փայտ խաչին, յոր եղեալ բարձրացաւ արարիչն արարածոց: Ընդ յայտնիլ սրբոյ խաչին ի տեղւոջն սրբութեան բուրմամբ անուշահոտ խնկոց. և լցան տիեզերք մե-ծապէս պարգևօք:

Որ զնախնոյն առիթ մահու փայտ կենաց շնոր-հեցեր. և ետուր յաղթութիւն մահացու բնութեանս, ի սմա բանիդ հօր երկրպագեսցուք: Որ զանճառ լու-սոյդ բարձողն ծածկեալ հրէիցն, ի յերկրէ ծագեցեր զերկնային ճառագայթ. ի սմա . . Որ ահաւոր հրա-շիւք ցուցեր զՆշան խաչի քո. յայտնելով աշխարհի

յարութեամբ պատանւոյն. ի սմա . .

Հարց Բձ. Որ փափագելի տենչմամբ եկեալ ի քաղաքն Երուսաղէմ աստուածասէր դշխոյն, խնդրէր զփայտ խաչին. զոր բարձեալ մարմնով յինքեան զԱստուած հարցն մերոց: Յորմէ զարհուրեալ դողային դասք բազմութեան հրէիցն ի յահէ թագուհւոյն, ազդմամբ սուրբ հոգւոյն ցուցաւ պատուական փայտ խաչին. զոր բարձեալ . . Ուստի բուրեալ խնկոց անուշահոտութիւն. ի տեղւոջն սրբութեան, ցնծացաւ Երուսաղէմ. ընդ յայտնել սրբոյ խաչին ի տեղւոջն Գողգոթա. զոր բարձեալ . .

Ըզծէր օրհնեցէք և բարձր արարէք զնա յա . .

Այսօր նշան սուրբ խաչին ի յերկրի երևեալ. օրհ: Այսօր ընդդէմ թշնամւոյն զէն անպարտելի ցուցաւ մեզ օրհնեցէք . :

## ԿԱՆՈՆ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑՆ ԳԱԲՐԻԷԼԻ ԵՒ ՄԻՔԱՅԷԼԻ

Օրհ. Բկ. Որ յանէից ստեղծեր զպաշտօնեայս քո ի հուր կիզելոյ հուրց անեղական. ընդ նոսին օրհնեմք ըզքեզ և մեք հողեղէնքս: Որ բանիւ զոյացուցեր զիննեակ դասըս հրեղինաց բանից ի սկզբանէ. ընդ նոսին զովեմք ըզ . . Որ արարեր յոգիս իմանալի ընդ հրեշտակս քո հոգի Աստուծոյ, ընդ նոսին բարեբանեմք ըզքեզ . .



Անդադար յերկինս օրհնաբանողք հօրն երկնաւորի զօրք լուսեղինաց. բարեխօս լերուք ընդ մեղաւորիս: Քաղցրաձայն երգով զոհաբանողք որդւոյն միւորայս անձնի դասըք հրեշտակաց. բա . . Անլռելի հընչմամբ բարեբանողք հոգւոյն ճշմարտի հոյլք հոգեղինաց. բարեխօս . . Երեքսրբեան ձայնիւ փառաբանողք սուրբ երրորդութեանն զունդք սերովբէից. բարե . .

Ալէլուք, Ո տէր . . տես էջ 89

ՀԱՐՑ Գկ. Անըսկիզբըն հայր առաջին լոյս անճառելի. որ ի լուսոյ լոյս ներգործեալ զիմանալեաց զոյակին. ըզքեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց: Էակից հօր ի լուսոյ լոյս ծագումն որդի, որ արարեր ի պաշտօն փառաց քոց զհրեղինացն զօրս. զքեզ . . Ի հօրէ բղխումն փառակից որդւոյ հոգիդ անեղ, որ ստեղծեր ի յոգիս կատարեալ զհոգեղինացըն դասս. ըզ.

ԸզՏէր օրհնեցէք, բարձր արարէք զնա յաւիտեանս։ Երկնային զւարթունք՝ հրեշտակք և հրեշտակապետք, վերին պետութիւնք, բարձր արարէք ըզհայրն երկնաւոր։ Անմարմնոց բազմութիւնք իշխանութիւնք, զօրութիւնք. անմահ տէրութիւնք, բարձր արարէք զՔրիստոս Թագաւորն։ Վեցթեւեան սերովբէք, քառակերպեան քերովբէք, աթոռք անեղին, բարձր արարէք զհոգին ճշմարիտ։

## ԿԱՆՈՆ

## ՍՐԲՈՑՆ ՅԱԿՈԲԱՅ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Օրհ. Գվ. Յաղթող և սուրբ հայրապետ նման մեծին Մովսէսի, բարձող խաչին պարծանաց ընդդիմամարտ հանդիսիւ. զքեզ ունիմք բարեխօս առ հայր յերկինս վասն մեր։ Առաքմամբ սուրբ հոգւոյն յանապատէ կոչեցար, առեր պատիւ մեծութեան նման մեծին Յովհաննու, երգակցելով ընդ վերնոցն. ըզքեզ.. Կարող եղեր զօրութեամբ զարմանագործ նշանիւք, նման մեծին Պետրոսի, հովիւ Շնորհեալ յԱստուծոյ ընտրեալ հօտին Քրիստոսի. ըզքեզ..։ Ուրախացան



զօրք երկնից ընդ քո մեծի ճգնութեան, որ ի մարմնի կառուցար նման վերին զւարթնոցն. ըզքեզ.. Բղխմամբ քո սուրբ աղօթից կենագործէիր զմեռեալս նման փրկչին Յիսուսի, կենագործողին ղազարու. զքեզ։..

Այլ մեք ձայնիւ ցնծութեամբ տօնեմք զքո սուրբ զյիշատակս, պատուեալ վկայ Քրիստոսի սուրբ հայրապետդ Յակոբ. զքեզ..

Յանձն առեր զչարչարանս վասն Նոյեան տապանին. ի հրեշտակէն ընկալար զփայտ փրկութեան աշխարհի. զքեզ ունիմք..

Հրց Գձ. Սուրբ ես Տէր և ի սուրբս հանգուցեալ, բարեբանեալ ի վերին զօրաց և ի սրբոց քոց. Տէր Աստուած հարցն մերոց..

Զարմանահրաշ մահապարտն ի ցասմանէ քում հրամանի. բարձ ի մէնջ բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Յակոբայ Տէր ատ..

Ի քէն հայցեմք զօգնութիւն, ամենասուրբ երրորդութիւն. օգնեա մեզ ի նեղութեան մերում, բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Յակոբայ. Տէր..

Գրծ. ԸզՏէր օրհնեցէք զՔրիստոս Թագաւորն,

միշտանկի տուր բարձր արարէք յաւիտեան։ Որ ընտրեաց զերանելի զհայրապետն, ի լուսաւորել զմանկունս սուրբ եկեղեցւոյ. զՔրիստոս թա . .

Որ բազմատարած հայցմամբ խնդրելով ի Տեառնէ զողորմութիւն. և առեալ բժշկութեան բղխեալ ի հայաստան աշխարհի. զՔրիս . .

Որ ի Հրանիւթիցն ազատաւորելով զարհուրեցոյց զթագաւորն, հովիւն քաջ բանաւոր հօտի և բըժիշկ ախտացելոց անձանց. զՔրիստոս թա . .

## ԿԱՆՈՆ ՍՐԲՈՑՆ ԴԱՒԹԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՑՆ

Օրհ. Դ.ձ. Յաղթող զօրու յօրհնաբանն երանելին Դաւիթ, որ զօրացաւ ի վերայ այլազգւոյն, և հաւատով պարտեաց զանօրէնն զԳողիաթ. զմարգարէն արասցուք բարեխօս առ Տէր վասն անձանց մերոց։ Ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի. նախեցարուք ընդ արդարն Յակոբ, որ հաճոյ եղև Աստուծոյ վարուքն իւրովք. զնա արասցուք . . Սա եղև գլուխ առաքելոց սրբոց. և կոչեցաւ եղբայր Տեառն ի տանէ



Դաւթի. զնա արաս . .

Որ երջանիկ լուսովն զուարճանայր մարգարէն Դաւիթ. և հոգւովն վերանայր ի կամարս լուսեղէնս. ըզնա . . Որ հոգանիւթ բնութեամբն զուգակցեալ ընդ սուրբ հոգւոյն և ազատէր զթագաւորն ի դիւական ախտէն. ըզնա . . Որ հրաշազարդեալ զօրու ի կարգս թագաւորաց. և մասնակից եղև սուրբ առաքելոցն. ըզնա . .

Հրց. Դ.ձ. Մեղաք յամենայնի և զպատուիրանս քո ոչ պահեցաք. այլ խոստովանիմք առ քեզ, մի անտես առներ, այլ գթա ի մեզ Աստուած հարցն մերոց։ Վասն Դաւթի սիրելւոյ քո և Յակոբայ արդարոյ աղաչեմք զքեզ, մի անտես առներ . . Որ նըստիս ի քրովբէս և հայիս յանդունդս, յիշեա ողորմութեամբ քով զԴաւիթ, և աղօթիւք սրբոյն Յակոբայ խնայեա ի մեզ Աստուած . .

Օրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր օրհնեցէք, բարձր արարէք զնա յաւիտեան։ Որ ընտրեաց զերանելին զԴաւիթ յառաջնորդութիւն Իսրայէլի. օրհ. . Որ կացոյց զաքանչելին զՅակոբ պարիսպ Շրջապատ եկեղեցւոյ իւրոյ. օրհնեցէք . .

# ԿԱՆՈՆ

## ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱԽԱՎԿԱՅԻՆ

Օրհ. Գկ. Նահատակ բարի Քրիստոսի եղեր այսօր ի մէջի մերում. և մըտեր ի վերնատունն խորհրդոյ յաւիտենականի։ Որ ընտրեցար ի դասս երկնաւոր զօրացն, պսակեցար ի թագաւորէն զանթառամ ըզպսակն, և մկրտեցար արեամբըդ քով սըբով, առաջին վըկայ Քրիստոսի սուրբ Ստեփաննոս. Նախասարկաւագըդ մեծ։ Մարտեար ընդդէմ թշնամւոյն. այսօր և գնեցեր արեամբդ քով զարքայութիւն. ի պարծանս ազգի մարդկան՝ ճգնաւոր Քրիստոսի, զոհութիւն երեքսրբենին, որ ընկալաւ ըզվկայդ իւր զսուրբ Ստեփաննոս, ի վերինն Երուսաղէմ։

Որ ընտրեցար ի կոչումն առաքելական քարոզութեանցն արժանաւոր լինելով սուրբ Ստեփաննոս. բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց մերոց։ Որ խնդրեցեր զթողութիւն ի վերայ քո քարաձիգ ժողովոյն, սուրբ Ստեփաննոս. և այժմ վասն քո ուխտաւորացս աղաչեա զԸնդ աջմէ Հօր նստեալն։ Որ արժանի եղեր զմարտիրոսականն առնուլ պսակ Նախդ ի վկայս. առ պսակիչն սրբոց և վասն մեր բարեխօսեա։



Գկ. Առաքեալ և նախավկայ Քրիստոսի սուրբ Ստեփաննոս. որ զքարկոծումն յանձն առեր և յանմահից բնակարանըն վերափոխեցար. աղաչեա զԱստուած շնորհել մեզ զկեանս անվախճան։ Տունկ անմահ իմանալի դըրախտին շնորհեցար ի Հօրէ, և լուսաւորեցար անճառապէս. այսօր ցնծան դասք հրեշտակացն ընդ քո մեծապայծառ ճըգնութիւնդ. աղաչեա զԱստուած . . Աստուածաստեղծ մարդոյն պըտուղ ընծայեցար մերձ յանմերձենալի լոյսն, և Հայրենի աւանդութեանն եղեր ժառանգորդ. աղաչ . . Ճանապարհ վըկայից յետ Քրիստոսի գըտար, և աստուածային փառացն արժանաւոր եղեր. բանսարկուն զինու քո վիրաւորեցաւ և Նախաստեղծըն պայծառացեալ բերկրեցաւ. աղա . : Դասակարգեալք և մեք ընդ անմարմնական բազմութեանն, վերահայցեմք ընդ հրեղէն լեգէոնացն, աղօթանուէր մաղթանօք հայցեմք ի Քէն մարդասէր փըկիչ խնայեա ի մեզ ստեղծող մեր և կեանք աշխարհի։

Ալէլուք։ Այսօր դասք . : տե՛ս էջ 95։

Հարց Գ.ձ. Ընդ երկնային հոգեղինաց դասս.

այսօր տօնեմք զյիշատակ սրբոյն Ստեփաննոսի. բարեբանելով զՔեզ Տէր Աստուած հարցըն մերոց: Որ հրեշտակակերպ տեսլեամբ արիաբար պատերազմեալ ըզքարկոծումն յանձն էառ, խոստովանելով ըզՔեզ Քրիստոս Աստուած . . Որ անպարտելի աստուածութեանդ տեսող, և բարեխօս լեր ուխտաւորացս. այսօր յիշատակաւ սրբոյն Ստեփաննոսի. գովեմք զՔեզ Քրիստոս Աստ . .

Ըզտէր օրհնեցէք. և բարձր արարէք զնա յաւիտեան: Որ յերկնային զօրացն միշտ օրհնի Քրիստոս Աստուած. այսօր յիշատակաւ սրբոյն Ստեփաննոսի, քահանայք ընդ վերին զօրացն երկնից զՔրիստոս գովեցէք, և բարձր արարէք զնա յաւիտեան:

## ԿԱՆՈՆ

## ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ

Օրհ. Գ.ձ. Ցընծայ այսօր եկեղեցի Աստուծոյ, յիշատակաւ սուրբ առաքելոցն. հաստատեալ ի վերայ վիմի հաւատոյ, զարդարեալ ի փառս մարմնացելոյ բանին: Որ զէութիւն անճառելոյ միածնին յայտնութեամբ Հօր ի վերուստ ուսանեալ. և երանականն արժանա-



ցեալ շնորհի, վէմ անուանելի ի դրանց դժոխոց:

Որ անմարմնոց դասուց հրեղինաց, հողեղէն բնութեամբ զերազանցեալ և բարձրացեալ ի յերկնային խորանն, անճառ բանին արժանաւորեալ:

Որ զերագոյն ընտրելոց առաքելոցն դասուց, անուանեցեր լինել զերանելին զՊետրոս, զլուխ սուրբ հաւատոյ՝ հիմն եկեղեցւոյ: Որ յառաջագոյն կոչմամբ առաքեցեր զանօթն ընտրութեան, յայտնելով աշխարհի զանճառ տնօրէնութեան քո զխորհուրդ յօրհնաբանութիւն կոչել զհեթանոսս: Որ երկոքումբք ընտրելովք լուսաւորչօքն աշխարհի, հաստատեցեր զեկեղեցի քո Քրիստոս. մաղթանօք սոցա խնայեա ի մեզ:

## ԿԱՆՈՆ

## ՍՐԲՈՑՆ ՈՐԴԻՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ

Օրհ. Գկ. Որ էն յէութեան որդի միշտ յէէն, անեղանելի ծնունդ հայրական, զոր ի վերուստ հնչեցին որդիքն որոտման. և յայտնեցին որդւոց մարդկան զծածկապէս խորհուրդ: Բանն անըսկիզբն ի կուսէն սկզբնաւորեալ ի յերկրի մարմնով երևեցաւ, զոր տեսին քարոզք բանին ճշմարտութեան և ծանուցին

տիեզերաց Աստուած և մարդ։ Խոնարհեալ բանն Աստուած միացաւ ի մարմնի անփոփոխ գոլով յէութեան, որում եղեն ականատես որդիքն որոտման և ընդհանուր քարոզեցին զբանն մարմին եղեալ։

Որ անմարմին ի Հօրէ մարմնացար ի կուսէն, թանձրացեալ բանդ անըմբռնելի, զոր ի մարմնի շօշափեցին որդիք որոտման, և հնչեցին ընդ տիեզերս զաւետիս կենաց։ Որ զանեղ յէից զոյգ անստանելի պարագրեալ մարմնով ծածկեցեր, զոր ի լերինն արտափայլեալ տեսին որդիքն որոտման և մաքրեցան անճառ տեսլեամբ զերապանծ լուսոյն։ Որ կենարար բանիւ քո անմահացուցեալք և մահու եղեն զերապանց, յանձն առին ըմպել զբաժակ չարչարանաց ընդ քեզ, զի ընկալցին ի քէն ըզփառս անվախճան կենացն։

---

Դկ. Շար. Որ յանատուեր ի լուսոյն ընկալար զծագումն շնորհաց, ով երանելի տէր Յովհաննէս, և հրաշազարդ զօր յերջանիկ դասս առաքելոցն, հայցեա ի Տեառնէ զթողութիւն յանցանաց։ Որ փարեցար զարտափելի պարանոցան զանմատոյց զլուսոյն և մաքրեցար որպէս զոսկի ի հուր, լուսազարդեալ երևեցար ի



մէջ սրբոցն որպէս յաստեղս արեգակն. Հայցեա ի . .
Որ ի կենդանի աղբերէն արբեր ըզբըղխումն շնորհաց, և ի թևս հոգւոյն հասեր յանիմանալին, աւետարանեցեր մշտնջենաւորակից հօր զէակից որդին. Հայցեա ի . .

---

## ՍԱՂՄՈՍ ՈՂԲԱՋԱՅՆ

Դարձ անձն իմ ի հանգիստ քո զի Տէր օգնեաց քեզ։

Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց, զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Շրջեցան զինև երկունք մահու և վիշտք դժոխոց զտին զիս։

Զնեղութիւն և զանձկութիւն գտի. և զանուն Տեառն կարդացի։

Ո Տէր փրկեա զանձն իմ, ողորմած Աստուած մեր. ողորմի և պահէ զտղայս Տէր։

Ես խոնարհ եղէ և Տէր կեցոյց զիս։ Դարձ անձն իմ ի հանգիստ քո զի Տէր կոչեաց զքեզ։

## ԿԱՐԳ

## ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅԻՑ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՒՈՒՐՑ

Ալէլուիա, Ալէլուիա։

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօրն երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս։

Եկեալքս ի մտանել արեգականն տեսաք զլոյս երեկոյիս։ Օրհնեմք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին Աստուծոյ։ Եւ ամենեքեան ասեմք. ամէն։ Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ՝ օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանն։ Որ տաս զկենդանութիւն վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ։

---

Հմբ. Ա՛. Սուրբ ես Տէր զօրութեանց որ բնակեալդ ես ի յերկինս և բարեբանիս ի սրբոց քոց։ Երկնային զօրութիւնք, սերովբէք և քերովբէք, անդադար օրհնեն սուրբ զանունդ քո։ Բաշխեալք ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրդք երկրպագեսցուք տէրութեանդ քո։ Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ առաքեցար, և լուսով իմանալեաւ լցեր զարարածս, օրհնեալ ես Թագաւոր յաւիտենից։ Որ զլոյսն ի



սկզբանէ հաստատեցեր վերստին, և զխաւարն անգիտութեան յարութեամբդ քով հալածեցեր. օրհնեալ . . Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս. օրհնեալ ես . .

Երկնաքաղաքացին Յովհաննէս մեծն ի ծնուն-
դըս կանանց ջարդէր յանապատի աղաղակող բար-
բառոյն, զծագումն լուսոյ արեգականն արդարութեան։
Ճշմարիտ մարգարէ և ձեռնադրող որդւոյն Աս-
տուծոյ՝ յառաջընթաց կարապետ և պատմող աստուա-
ծային օրինաց, հորդէր ճանապարհս Թագաւորին յա-
ւիտենից։ Յանօրէն զինարբուսն մոլեգնեալ Հերովդի-
ադայ ի պարգեւ մաւին խնդրէր զգլուխ մարգարէին,
շիջուցանել զարուսեակն և զանաղօտ լապտերն։

### ՓԱՌՔ ՀՕՐ ԵՒ . .

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա երկրպագուացս ամենասուրբ երրորդութեանդ, զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից։

### ԱՅԺՄ ԵՒ ՄԻՇՏ

Զհաւատացեալ ժողովուրդս սուրբ երրորդութեանդ

և զապաւինեալս ի խորան փառաց քոց. պահեա անխռովս ի խաղաղութեան:

Կամ. Որ զխորհուրդս փրկական աստուածգիտութեան շնորհեցեր մեզ ի ձեռն քահանայապետին քո և վկայի, նորին աղաչանօք խնայեա ի մեզ:

## ԿՑՈՐԴ Ի ՏՕՆԻ ԱՌԱՔԵԼՈՑ

Ի քէն հայցեմքս բազումողորմ ի ձեռն սրբոց քոց առաքելոցն, խնայեա Տէր ի յանձինս մեր: Զորս ընտրեցեր յառաջգիտութեամբ զարժանացելոց անձինս. ըսպաւորեալ ի նոսա զհոգի շնորհաց քոց. որով վանեալ հերքեցին զապատամբ զթշնամին բարեխօսութեամբ սոցա խնայեա.. Որք զխաւարն անգիտութեան մերկացին յամենայն ազանց, զգեստաւորեալ զհեթանոսս, առաքելական կոչմամբ ի լոյս կենացն յաւիտենից, բարեխօսութեամբ սոցա խնայեա.. Վասն որոյ և մեք հաւատացեալքս կատարեսցուք զյիշատակ սրբոց առաքելոցն. աղաչեմք զքեզ որ միայն զթած ես. առատաձեռնեա ի մեզ զմեծ քո ողորմութիւնդ, Տէր, որ կեցուցանես զամենայն արարածս:

ՓԱՌՔ.



Արդ աղաչեա մայր Աստուծոյ զծնեալն ի քէն փառքն մեր, զի ընդ նմին պահելով, սուրբ յարութեամբ նորա նորոգեսցուք. առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել զմեզ:

ԱՅԺՄ.

Եւ համբարձեալ ըղձայնըն Յուդայի խնդրելով ի Տեառնէ ըղտենչալին ամենեցուն սուրբ ըզխաչն. և հաւատով գտէր. եկայք, երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս. մեծացուցանելով ըզծնեալն ի կուսէն:

## ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Հայր մեր..

Անկանիմք առաջի քո սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյսդ: Բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա զմիածին Որդիդ՝ փրկել զմեզ ի մերոց, և աղաչեա զմիածին Որդիդ՝ փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց: Որ արձակիչդ ես կապելոց պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զբազմամեղս ի կապանաց մահու ի կեանս յաւիտենից:

Օրհնեալ Հայր, որդի և հոգի սուրբ Աստուած

ճշմարիտ ամէն։

Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ, Տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և յաղթող՝ ի դատել քեզ։

Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու, Տէր, զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա զիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա, և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ Տէր զցնծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն



անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քո, և հոգւով պետութեան քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ. Աստուած, Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ։

Բարի արա, Տէր, կամօք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։ Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանիցեն ի սեղան քո զուարակս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և

միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Հաւատամք ի մի Աստուած . . տես էջ 149

## ԱՂՕԹՔ

Զառաւօտու աղօթս և զբանաւոր պաշտօնս, ընկալ, ամենակալ, ամենամեծդ Աստուած, ի քո անապական և յերկնային խորանդ։ Ծագեա առ մեզ զարդարութեան և զիմաստութեան զլոյս քո. արա զմեզ որդիս լուսոյ և որդիս տուընջեան. որպէս զի ի գալ աւուրս երկիւղածութեամբ վարեսցուք զկեանս մեր, և առանց գայթակղութեան կատարեսցուք։ Զի դու ես օգնական և փրկիչ մեր. և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ, ամէն։

Քեզ երկրպագանեմք Տէր Աստուած մեր։



## ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Օրհնեալ Տէր մեր . . .

Անկանիմք առաջի քո . . տես էջ 208

## ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅՆ ԱՍԱՑԵԱԼ

### ԲԱՆ ԺԲ.

Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս, մատի՛ր գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛, ամենապարգեւ, զամօթական տխրութիւնս. բարձ յինէն, ողորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛ հնարաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա՛, միշտ յաղթող, զխաբողին հաճութիւնս. բացատրեա՛ վերնային, զմոլելոյն մառախուղ. կնքեա՛ կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս, ցրուեա՛ ծածկատես, զըմբռնողին չար զրօմունս. խորտակեա՛ անքննին, զմարտողին զխեղդմունս։ Տեառնագրեա՛ քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. զըծագրեա քո արեամբդ զմուտ սենեկիս. կերպա-

ցո՛ զքո նշանդ ի հետս ելից մաղթողիս. ամրացո՛ զքո աջովդ զհանգստեանս խշտի. մաքրեսցես ի հողբից զծածկարան անկողնոյս, պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ, կարգեսցես ի գլխի ընդդէմ զխւացն զատու: Տո՛ւր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբուհւոյ Աստուածածնին և ամենայն ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց, զգայարանացս իմաստից անպարհուրելի զետեղմամբ, ի ծփական խռովութեանց կենցաղական զբաղմանց, անրջական երազոց խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ: Եւ սթափեալ վերստին ի նինջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ, ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ, ամենօրհնեալ թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել: Զի դու փառա-



ւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## ԱՂՕԹՔ ԶՕՐԱՒՈՐ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

## ԲԱՆ ԽԱ

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, Հօրդ ահաւորի անքնին ծնունդ, որ տկարանայ առ ի քէն և ոչինչ: Որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց, հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խզին կապանք. խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մուայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն. և թագաւորէ ձեռն քո ամենակալ՝ քաւիչդ ամենայնի: Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թո՛ղ ինձ զանթիւ չարեաց իմ բազում ողորմութեամբդ: Զի դու միայն ես

յերկնի անճառ, և յերկրի անդնդին, ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի, ակնբերն ամենայնի, և յամենայնի ամենայն լրմամբ օրհնեալ ի բարձունս, և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

## ԱՂՕԹՔ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

Զոր արարեալ է սրբոյ Տեառն Ներսիսի
Հայոց Կաթողիկոսի

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ Հայր և Որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս. և ընդունել ի քէն



զխնդրուածս իմ. և ողորմեա քո արարածոց և ինձ . .

Հայր երկնաւոր, Աստուած ճշմարիտ. որ առաքեցեր զՈրդին քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղա՛յ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. և ողորմեա քո . .

Որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար, թաղեցար և յարեար ի մեռելոց և համբարձար փառօք առ Հայր, մեղա՛յ յերկինս և առաջի քո, յիշեա զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ քով, և ող . .

Հոգի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո, մաքրեա զիս վերստին աստուածային հրով քով որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. և ող . .

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս

վասն անուանդ քում սրբոյ. և ողորմ . .

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով, ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. և ող. .

Քննող գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քո, զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա . .

Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ո՛չ ևս հայել յայրատ, և ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, և սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողո . .

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս



գիտութեան քո ի սրտի իմում, և ողորմեա . .

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարին խորհել և խօսել և գործել առաջի քո, յամենայն ժամ ի չար խորհրդոց ի բանից և ի գործոց փրկեա զիս. և ողորմ . .

Կամեցող բարեաց, Տէր կամարար, մի թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմ . .

Արքայ երկնաւոր, տո՛ւր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո, և ողորմ . .

Խնամող արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ. ի պատրանաց մեղաց՝ ի փորձութեանց դիւաց և ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ, և ողորմ . .

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի, ի նըստել ի տան, ի գնալ ի ճանապարհ. ի ննջել և ի յառնել, զի մի՛ երբէք սասանեցայց, և ողորմ . .

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն

առնեմ զանձն իմ, զոր հոգւն եւ պատրաստեա զգեստ հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան, եւ ողորմ . .

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն, եւ բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, եւ զերկիւղ գեհենոյն, եւ զսէր արքայութեանն. զի զղջացայց ի մեղաց, եւ գործեցից զարդարութիւն, եւ ողորմ . .

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս մեղաւորին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս, եւ ողորմ . .

Պարգեւիչ ողորմութեան, պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ, եւ ողորմ . .

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս, քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն որք են ի ներքոյ երկնից. եւ ողորմ . .

Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, եւ հանգչել յուսով բարեաց յօթեւանս



արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քո, եւ ողորմ . .

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, եւ լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութեանդ, եւ ողորմ . .

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց. շնորհեա եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց, եւ դարձո զնոսա ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի եղիցին, եւ ող. .

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայի քո, եւ կատարեա ի բարի զխնդրուածս իմ՝ բարեխօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին: Եւ սրբոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձանց, եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց: Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրոր-

ղութեանդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՄԱՂԹԱՆՔ

Վասն Սրբուհւոյ Աստուածածնի բարեխօսու-թեանն, Տէր, ընկա՛լ պաղատանս մեր և կեցո՛ զմեզ։

## ՔԱՐՈԶ

Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս զի կամե-ցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո և ողորմեա։

## ԱՂՕԹՔ

Ընկալ, Տէր, պաղատանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին՝ անարատ ծնողի միածնի Որդ-ւոյ քո և աղաչանօք ամենայն սրբոց քոց և որոց այ-սօր է յիշատակ։ Լուր մեզ, Տէր, և ողորմեա, ներեա՛, քաւեա և թող զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր. .



## ՄԱՂԹԱՆՔ

Զհանգստեան զաղօթս և զաղաչանս ընկալ, մար-դասէր Աստուած, ի հաճոյս բարերար կամաց քոց. մեր մեղաց և բազում յանցանացն թողութիւն շնորհեա, ի չարեաց փրկեա՛, ի մեղաց պահեա՛, յանօրինաց ա-զատեա՛, ննջեցելոց մերոց հանգիստ եւ զերկնից սուրբ արքայութիւնդ պարգեւեա՛. և քեզ փառք յաւիտեանս ամէն։

Փառք քեզ, Տէր Աստուած մեր, որ պարգեւեցեր զօրս զայս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել։

Մարդասէր Աստուած, զառաջիկայ գիշերս որ ի վերայ մեր գալոց է՝ ի մեղաց փրկեա, ի չարեաց ա-զատեա և ի գործս բարիս առաջնորդեա։

Առաւօտու օրհնութեանցն և փառաբանութեանցն արժանի արա զամենայն հաւատացեալս անուանդ քում սրբոյ, և պահեա ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր, տուր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի, բարձ զցասումն և զպատուհասն ի յարարածոց

Ողորմեա հարց և եղբարց մերոց կենդանեաց և հանգուցելոց։

Ողորմեա եկեղեցւոյ շինողաց, երախտաւորաց, պտղատուաց, սպասաւորաց եւ այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցւոյ են հանգուցեալ։

Տէր Աստուած, օգնեա թագաւորացն քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից, զօրաց եւ եւ զաւակաց նոցին՝ պահելով ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր, պահեա զառաջնորդս եւ զեղբայրութիւնս մեր ամբողջ եւ անխռով ի կամս ողորմութեան քո։

Նշանաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քո հալածեա զերեւելի եւ զաներեւոյթ թշնամին ի սահմանաց մերոց եւ ի բնակութենէս մերմէ։

Փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից եւ արժանի արա երանաւէտ կենացն անվախճանից. եւ քեզ՝ փառք յաւիտեանս. ամէն։

Քհ. Օրհնեալ եղերուք ի շնորհաց սուրբ հոգւոյն, երթայք, հանգերուք խաղաղութեամբ եւ Տէր Յիսուս եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս ամէն։

---



## ԱՂՕԹՔ ՃԱՇԷ ԱՌԱՋ

Հայր մեր . .

Ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պատրաստեալ է մեզ ի Տեառնէ. օրհնեալ է Տէր Աստուած մեր. ի պարգեւս իւր ամէն։

## ԱՂՕԹՔ ՃԱՇԷ ՎԵՐՋ

Հայր մեր . .

Զլիութիւն սեղանոյս անհատ եւ աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց, եւ լիացոյց, նմա փառք յաւիտեանս ամէն։

## ՇԱՐԱԿԱՆ ԱԿ. ՆՇԱՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Նշանաւ ամենայաղթ . . տես էջ 252.

## ԿԱՆՈՆ

## ՀԱՑԱՒՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Սրկ. Եւ ևս խաղաղութեան զՏէր . .

Բհ. Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ . .

Շար. Բկ. Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս նորոգման. քանզի նորոգողն էից Հոգին էջ ի սուրբ վերնատունն, որով նորոգեցան դասք առաքելոցն: Այսօր Հողանիւթեայ բնութիւնս ցնծայ ընդ Հօր հաշտութեան, քանզի որ եբարձ զՀոգին ի մարդկանէ մարմին եղելոց, դարձեալ վերստին ըզնոյն պարգեւէ: Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցընծութեամբ զգալուստ սուրբ Հոգւոյն որով զարդարեցան ի զգեստս լուսափայլս և գերապայծառս. երգեն ընդ սրովբէսն զերեքսրբենին:

Որ ըզմիաբանեալն յաշտարակին բաժանմամբ լեզուացն քակեաց, այսօր ըզբաժանեալ լեզուս ազգաց միաբանեաց դարձեալ ի սուրբ վերնատունն, ամենայն Հոգիք օրհնեցէք զՀոգին Աստուծոյ: Որ էջ Հոգին Տեառն և առաջնորդեաց երկոտասան ցեղիցն Իսրայէլի ի յանապատին, այսօր երկոտասան առաքելոցն առաջնորդէ ի յաւետարան, ամենայն Հոգիք օրհնեցէք զՀոգին Աստուծոյ: Որ ելից Հոգին Տեառն ըզԲեսելիէլ ճարտարապետ խորանին, այսօր շինէ զմար-



դիկ խորան սուրբ երրորդութեանն. ամենայն Հոգիք . .

Մայր լուսոյն Մարիամ անհարսնացեալ, օրհնեալդ ի կանանս: Զլոյսն անըստուեր յարգանդի կրեցեր, օրհնեալդ ի կանանս: Մի դադարիր վասըն մեր բարեխօսել, օրհնեալդ ի կանանս: Ի վերայ վիմի հաւատոյ շինեցեր զքո սուրբ զեկեղեցի, ըզսա պահեա ի խաղաղութեան: Որ շնորհեցեր ողորմութիւն ի բնակարանս հրեշտակաց և մարդկան քաւարան, տուր սըմա զանշարժ քո զխաղաղութիւն: Ի տաճարի փառաց սրբութեան քո քեզ երգեն մանկունք, տուր սոցա զառատ քո զողորմութիւն: Փառք Հօր . . Այժմ և միշտ և . . Սիրոյ անմահ փեսային եղեր դու մայր Մարիամ բարեխօսեա վասըն մեր ի յայնմ աւուր ահեղին:

---

## ԿԱՆՈՆ

## ԹԱՂՄԱՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑ

( Կարգ Եկեղեցւոյ )

Շար. Գկ. Բանդ Աստուած որ ի ծոց Հօր, վասըն մերոյ փրկութեան ի յերկնից խոնարհեցար, զի զմեզ

նորոգեցես ի կեանս, Աստուած Հարցն մերոց։ Որ Հանդերձեալ ես գալ փառօք Հօր զարթուցանել զնըն-ջեցեալսն ի սուրբ անունդ քո. նորոգեա և զմեր ննջեցեալսն Աստուած . . Անմահութեանց տուող Քը-րիստոս և պարգևիչ կենդանութեան, ի միւսանգամ գալստեանն և յաշխարհական ատենին. Թողութիւն շնորհեա մեր ննջեցելոցն, Աստուած . . Որ նստիս ընդ աջմէ Հօր ծընողի իւրոյ և մարդասիրապէս խընամէ զարարածս, բարձր արարէք զնա յաւիտեան։

Որ զՀողացեալ բնութիւն մարդկան նորոգէ իւր աստուածութեամբն. և կենդագործէ ի կեանս անմահ, բարձր . . Յանըսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ բանդ մարմնացար ի կուսէն վասն փրկութեան մե-րոյ. աղաչեմք ըզքեզ, ըզննջեցեալսն մեր ի քեզ ու-ղիղ Հաւատով՝ յիշեա Տէր յորժամ գաս թագաւորու-թեամբդ քո։

Անոխակալ քաղցրութեամբ Որդի Աստուծոյ, Հա-ճեցար բառնալ զմեղս աշխարհի քո խաչելութեամբն, աղաչեմք զքեզ . . Կամաւորական մահուամբ քո լուծեր զերկուսն մահու, և արժանի արարեր Թողութեան յան-ցանաց քաւիչ քո արեամբ. աղաչեմք . . Որ փոխա-



նակ մեղաւորաց ըզմեռանել յանձն առեր. իջանելով ի դժոխըս փըրկեցեր ի մեղասաէր բանտէն ըզգերեալսն, աղաչեմք . . ։ Բարեբանեմք զանչափ քո զմարդասիրու-թիւնդ, որ երեքօրեայ յարուցեալ զկենդանութիւն պար-գևեցեր աշխարհի, աղաչեմք . . ։

Լոյս ի լուսոյ զմեզ լուսաւորեա. որ փառօք Հօր Հանդերձեալ ես գալ ի դատել զերկիր, արժանաւորեա և ըզմեր ըզննջեցեալսն անճառ խոստմանց քոց ընդ սուրբըս քո։ Հօր և Հոգւոյ Համագոյակից ի տիեզերա-կան ահեղ ատենին. արժանաւորեա . . ։ Երկնի և երկրի արդար դատաւոր, յորժամ Հատուցանես ըստ գործոց իւրաքանչիւրոց. արժանաւորեա . . ։

Լեառն վիմածին, աղբիւր յորդառատ, բարունակ ծաղկեալ. այգի վայելուչ սրովբէ Հողեղէն, բաբունւոյ բանին տուն տնօրէնութեան, տաճար Հոգւոյն, առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար Հայցմամբ շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն։ Փափկութեան դրախտին բացող բանալի, Քրիստոսի բարձող նըմանող երկնից, սափոր ոսկեղէն լի մանանայիւ, գա-ւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ, տաճար լուսոյ մայր, առ ծնեալն . . ։ Ցօղ քաղցրածաւալ, ցանկալի զուարթնոյն, նիւթեղէն սրովբէ, դեղ մարգարտափայլ,

հիմն եկեղեցւոյ, մաքուր աղաւնի, ամպ հովանաւոր սուրբ կոյս Մարիամ. առ ծընեալն ..։

Ով պահապան որ ծագեցար յԵդեմայ, նըշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թըշնամւոյն։ Դու փակելոյ դրախտին բացող և առաջնորդ աւազակին, որ զբոցեղէն սուրըն կապանաց անելին հրամանաւ։ Փառք հօր ..։ Այժմ և միշտ ..։ Քեւ ցընծան բառա-
լայինքս ամենայն ի միաւանդամ քո գալըստեանն և յաւէժ զուարճանան դասք անմարմնոյն առ էիցս։

---

## ԳԻՐՔ ԵՒ ԱՒԵՏ. (ԸՆԹԵՐՑՈՒՆ ՔԱՀԱՆԱՅՔ)

Փառաց ի փառս .. Քահանայք և ժողովուրդք էջ 179. Ի վերինն Երուսաղէմ .. տես էջ 179։

Ուրախացան ազգըք մարդկան, յորժամ լըւան զքո յարութիւնդ, նորափետուր զարդարեցան. ի յարութեան սուրբ միածնիդ ողորմած տէր ողորմեա հոգւոյն մեր ննջեցելոց։

---

## ՍԱՂՄՈՍ, ՆԱԽ ՔԱՆ զՅԻՇԵՍՑՈՒՔՆ

Տէ՛ր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ի վերայ իմ։



Բազումք ասէին զանձնէ իմմէ թէ չիք փրկութիւն սորա առ Աստուած իւր։

Այլ դու, Տէր, օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի, և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ։

Ես ննջեցի և ի քուն եղէ, զարթեայ և Տէր ընդունելի իմ է։

Ո՛չ երկեայց ես ի բիւրաւոր զօրաց նոցա ոյք շուրջանակի պատեալ պաշարեալ պահէին զիս։

Արի՛, Տէր, և փրկեա զիս, Աստուած իմ, զի դու հարեր զամենեսեան ոյք էին ընդ իս թշնամութեամբ ի տարապարտուց, և զատամունս մեղաւորաց փշրեցես։

Տեառնդ է փրկութիւն, ի վերայ ժողովրդեան քո՝ օրհնութիւն քո։

Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, խոնարհեցո ունկն քո ի խնդրուածս իմ։

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և կեանք իմ ի դժոխս մերձեցաւ, և համարեցայ ես ընդ այնոսիկ որք իջանեն ի գուբ։

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ի մեռեալս՝ ազատ :

Որպէս զվիրաւորս որք ննջեն ի գերեզմանս :

Զորս դու ո՛չ յիշեցեր՝ նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան :

Եդին զիս ի գբի ներքնումն՝ ի խաւարի և ի ստուերս մահու :

Ցիս հաստատեցաւ սրտմտութիւն քո, զամենայն զբօսանս քո ածեր ի վերայ իմ :

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց :

Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ :

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ, և համբարձի առ Քեզ զձեռս իմ :

Միթէ մեռելո՞ց առնիցես զսքանչելիս քո, կամ բժիշկք յարուցեալ խոստովան առնիցի՞ն առ քեզ :

Միթէ պատմեսցէ՞ ոք երբեք ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո ի կորստեան :

Միթէ ճանաչիցի՞ն ի խաւարի սքանչելիք քո, կամ արդարութիւն քո յերկրի մոռացեալ :

Ես առ քեզ, Տէր, աղաղակեցի. առաւօտու աղօթք



իմ ժամանեսցեն առ քեզ :

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն :

Տնանկ և վաստակաւոր եմ ես ի մանկութենէ իմմէ. ի բարձրութենէ խոնարհեցայ և ապշեցայ :

Ցիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս :

Շրջեցան զինև որպէս ջուր զօր ամենայն պաշարեցին զիս ի միասին :

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ վասն թշուառութեան իմոյ :

Օրհնեա՛, անձն իմ, զՏէր, և ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա :

Օրհնեա՛, անձն իմ, զՏէր, և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա :

Ո՛ քաւէ զմեղս քո՝ բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո :

Ո՛ փրկէ յապականութենէ զկեանս քո՝ պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ :

Ո՛ լնու ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո :

Առնէ ողորմութիւնս Տէր, և իրաւունս ամենայն

զրկելոց։

Ցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի, եւ որդւոցն Իսրայէլի զկամս իւր։

Գթած, ողորմած է, Տէր, երկայնամիտ եւ բազումողորմ։

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր եւ ո՛չ յաւիտեան պահէ ոխս։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, եւ ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։

Այլ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ի վերայ երկիւղածաց իւրոց։

Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնչափ հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթացի Տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, եւ յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի։

Շնչէ ի նմա հողմ, եւ ո՛չ է, եւ ոչ եւս երեւի տեղի նորա։



Բայց ողորմութիւն Տեառն մնայ յաւիտեանս յաւիտենից ի վերայ երկիւղածաց իւրոց, եւ արդարութիւն նորա յորդւոց մինչեւ յորդիս։

Որք պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա եւ առնեն զնա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նորա ամենեցուն տիրէ։

Օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ որք առնէք զբան նորա ի լսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք եւ արարողք կամաց նորա։

Օրհնեցէ՛ք զՏէր, ամենայն գործք նորա, զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա. օրհնեա՛, անձն իմ, զՏէր։

Տէ՛ր, լո՛ւր աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։

Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, եւ մի՛ մտանէր ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, եւ նստոյց զիս ի խաւարի որպէս

մեռեալ յաւիտենից ։

Ձանձրացաւ յիս հոգի իմ եւ սիրտ իմ խռովեցաւ յիս ։

Յիշեցի զաւուրս զառաջինս, խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ եւ համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ Տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ՝ ոյք իջանեն ի գուբ ։

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո, զի ես ի քեզ, Տէր, յուսացայ ։

Ցոյց ինձ ճանապարհ յոր եւ գնացից, զի առ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց, Տէր, զի զքեզ ապաւէն ինձ արարի ։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ ։

Վասն անուան քո, Տէր, կեցուսցես զիս, արդա-



րութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա՛ զթշնամիս իմ, եւ կորո՛ զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

Յիշեսցուք ի գիշերի . . (Տես էջ 12)։

ՎԵՐՋ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

## ՑԱՆԿ ԳՐՈՒԱԾՈՑ


| | էջ |
|---|---|
| Ալէլուք Ծննդ. Ճրագալուցի | 72 |
| » Ծննդեան (ըստ ութ ձայնից) | 73 |
| » Քառասնօրեայ գալստ. Քրիստոսի | 76 |
| » Յարութեան (ըստ ութ ձայնից) | 77 |
| » Համբարձման » » | 79 |
| » Հոգւոյն սրբոյ գալստեան » | 82 |
| » Սրբոյ Խաչի (ըստ ութ ձայնից) | 84 |
| » Եկեղեցւոյ » » » | 87 |
| » Հրեշտակապետաց | 89 |
| » Ղազարու յարութեան | 90 |
| » Ծաղկազարդի | 91 |
| » Աւագ շաբաթու վեց աւուրց | 91 |
| » Վարդավառի (կիր. բշ. գշ.) | 94 |
| » Ստեփաննոսի Նախասարկաւագին | 95 |
| Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր | 125 |
| Անբաժանելի և Համագոյ | 14 |
| Անդաստանի երգեցողութիւնք | 107 |
| Անկանիմք առաջի քո Աստուածածին | 269 |
| Ամէն և ընդ Հոգւոյդ քում | 165 |
| Անսկիզբն Աստուած, սկիզբն . . . | 178 |





| | |
|---|---|
| Առաքելոյ աղաւնոյ . . . (տաղօքն) | 237 |
| Արարչական բանին Հրաման | 111 |
| Արծաթախնդրութեամբն մոլեալ . . . (տաղօքն) | 226 |
| Այսօր անճառ լուսոյն ծագումն | 53 |
| Այսօր անսկզբնական ծնունդ (տաղօքն) | 193 |
| Այսօր դասք Հրեշտակաց ուրախանան | 95 |
| Այսօր երկնայինքն ուրախացան | 286 |
| Այսօր երեւումն մեծի (տաղօքն) | 250 |
| Այսօր ժողովեալ սրբոցն (տաղօքն) | 244 |
| Այսօր կանգնեցաւ աւազան | 222 |
| Այսօր յարեաւ ի մեռելոց (տաղօքն) | 233 |
| Այսօր տօն է սուրբ ծննդեան | 188 |
| Այսօր քահանայապետ Ճշմարիտ | 181 |
| Աշխարհ ամենայն առ ի նայեցեալ | 18 |
| Առաւօտ լուսոյ, արեգակն արդար | 15 |
| Արեւագալի երգեցողութիւնք (տաղօքն) | 197 |
| Բանդ Աստուած որ ի ծոց Հօր . . . | 287 |
| Բանն որ ընդ Հօր յէութեան | 196 |
| Գթա՛ Տէր, ի հոգիս մեր . . . | 175 |
| Գոհութիւն և փառաբանութիւն . . . | 164 |
| Գովեա Երուսաղէմ զՏէր (սաղմոս) | 148 |

Դարձ անձն իմ ի հանգիստ քո 265
Դոնբացէք երգեցողութիւնք 219

Եղիցի անուն Տեառն օրհնեալ (սաղմոս) 109
Երգեցողութիւնք իւղաբերից աւետարանի 97
Երգք ննջեցելոց – Աստուած անեղ... 45
Երգք զկնի Ած անեղի (ըստ պատշաճի աւուր) 48
» խաչի աւետ.ի (ըստ ութ ձայնից) 63
» Տէր ողորմեայի 169
Երրորդութիւն անբաժանելի 172

Զառաւօտու աղօթս և զբանաւոր 272
Զլիութիւն սեղանոյս անհատ 285
ԶՔրիստոս Թագաւորն որ էն 216
Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս 181
» » » (կանոն Ս. խաչի) 249

Ընկա՛լ քաղցրութեամբ Տէր Ած. հզօր 273
Ընտրեալդ յԱստուծոյ ով երանելի 129
Թագաւոր զորով քո յաշխարհ 217
Թափօրի շարականք (ըստ 8 ձայնից) 136
Ի կարգալ իմում լուար ինձ Աստուած 62
Լուացից սրբութեամբ զձեռս իմ 122



Լոյս զուարթ սուրբ փառաց 266
Լուսաւորեա Երուսաղէմ... 232
Լոյս ի լուսոյ ի Հօրէ (սարօ.քն) 189
Խաղաղականի երգեցողութիւնք (սարօ.քն) 201
Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք 230
Խորհուրդ խորին անհաս անսկիզբն 120
Խորհուրդ մեծ և սքանչելի (սարօ.քն) 186
Կանոնազլուխք (ըստ ութ ձայնից) 21
Համբարձաւ Տէրն մեր (սարօ.քն) 236
Համեմատ քեզ ոչ գոյ նման 133
Հաւատամք ի մի Աստուած 149
Հաւատով խոստովանիմ և 276
Հոգին սուրբ էր միշտ և է 239
Հրաժարիմք ի սատանայէ 7
Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի 253
Հրաշափառ Աստուած և միշտ 121
Ճաշակեսցուք խաղաղութեամբ 285
Ճաշու շարականք յար. (ըստ ութ ձայնից) 142
Մարմնացեալդ ի կուսէն (սարօքն) 192
Միայն ամենասուրբ երրորդութեանն 7
Մեղեդիք ամբողջականք (ըստ պատ. աւուր) 130
Միաշաբաթ օր հանգստեան 235

Յաղթող գտաւ յօրհնաբանն (սաղօ.քն) 258
Յաղթող և գնոր օրհնութիւն 248
Յաղթող և սուրբ հայրապետ 256
Յայս յարկ նուիրանաց ուխտի 256
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց 232
Յիշեսցուք ի գիշերի պանուն 12
Նահատակ բարի Քրիստոսի (սաղ) 260
Նշանաւ ամենայաղթ խաչիւդ 252
Նորաստեղծեալ բանն յանէից 110
Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի 270
Ով ամենապայծառ նաղելի 132
Որ արարեր զօրութեամբ 210
Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ 275
Որ զանարատ բազուկս քո 247
Որ զշնորհս աստուածային 122
Որ զխորհուրդ քո զալստեան 212
Որ զօրէնս սրբութեան պահոց 207
Որ էն-յէութեան, որդի միշտ (սաղօ.քն) 263
Որ ի լերինն այլակերպեալ (սաղօքն) 242
Որ ծագեցեր մեզ լոյս մեծ 250
Որ կազմեցեր սեղան խորհրդոյ 172
Որ յանէից առեղծեր զպաշտօնեայս (սաղօքն) 254



Որ. յանէից առեղծող գոյից 175
Որ պատուիրան ճշմարտութեան 211
Որ վերօրհնիս յաթոռս (սաղօ.քն) 214
Որ փափաքելի տենչմամբ 254
Ուրախ լեր եկեղեցի սուրբ 216
Ուրախ լեր սուրբ եկեղեցի (սաղօքն) 240
Ո՞ւր ես, մայր իմ, քաղցր և 228
Պարգևատուն ամենեցուն (սաղօ.քն) 231
Ս. Պատարագի երգեցողութիւնք 142-174
Սաղմոսք հանգ. ըստ. ութ ձայնից 34
Սուրբ Ած. սուրբ և հզօր 105
Սուրբ ես Տէր զօրութեանց 266
Սրբասացութիւնք (ամբողջական) 153
Վա՜յ ինձ, Յիսուս, միածին Որդի 229
Վասն հրամանաց և ամենայն 184
Վասն սուրբ տեղւոյս շինութեան 96
Տէ՛ր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ 290
Տէրդ սիրով խոնարհեցար 188
Տիրամայրն հանդէպ որդւոյն 132
Ցնծայ այսօր եկեղեցի Աստուծոյ 262
Փառք ի բարձունս Աստուծոյ 101
Փառք քեզ Տէր Ած. մեր 283

Փարատեա՛ զցաւս և բժշկեա 184

Քարոզք ալէլուքի (ըստ ութ ձայնից) 68

Քրիստոս փառաց Թագաւորն 195

Օրհնեմք զՔեզ անսկիզբն Հայր 209

Օրհնեմք զՔեզ որ առաքեցար 193


## ԽՐԱՏ, ՆԵՐԴԱՇՆԱԿ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1. Միասին սկսելով միասին վերջացնել։

2. Սկսուած չափով շարունակել երգեցողութիւնը մինչև վերջանալը։

3. Մեղմ սկսելով մեղմ վերջացնել։

4. Վանկերու ճշգրիտ արտասանութեան հոգ տանիլ։

5. Եղանակի մը սկզբնաւորութենէն մինչև վերջաւորութիւնը ուշադիր ըլլալ թօնիք ձայնը անփոփոխ պահելու։

6. Մեներգներու և սեղանի երգեցողութեան չի մասնակցիլ։ Ութ ձայն բարձր կամ ցած չերգել բնաւ։

## ՑԱՆԿ ՎՐԻՊԱԿՆԵՐՈՒ

| Էջ | Տող | Սխալ | Ուղիղ |
|---|---|---|---|
| 22 | 13 | ասղ | անդ |
| 30 | 10 | օգնես են | օգնեսցեն |
| 32 | 6 | . . . | դկ |
| 48 | 1 | ըստ աւուր ձայնի | ըստ պատշաճի աւուրն |
| 64 | 1 | պատմուճնն | պատմուճանն |
| 64 | 11 | շնօրհօք | շնորհօք |
| 64 | 16 | ջնջեսցեն | ջնջեսցին |
| 64 | 18 | պաաշաճի | պատշաճի |
| 66 | 4 | նախաոտեղծին | նախաստեղծին |
| 66 | 16 | տատասէին | տատանէին |
| 67 | 2 | լուսաւորացն | լուսաւորացն |
| 80 | 7 | Ցովնեփու | Ցովսեփու |
| 89 | 11 | էջ 88 | էջ 89 |
| 134 | 13 | կուի | կուսի |
| 170 | 19 | յարութեան | յարութեամբ |
| 210 | 11 | երկորդ | երկրորդ |
| 225 | 20 | մածին | միածին |
| 227 | 12 | ուտի | ուստի |
| 262 | 4 | ըքեզ | զքեզ |
| 288 | 13 | մամմնացար | մարմնացար |

Այսօր [illegible]

[illegible]

[illegible]

12

[illegible]

N 894
18 r.

2/BB

ՀՀ Ազգային գրադարան
NL0028846

2004